

Առանձին ավագ դպրոցների
փորձնական ծրագրի
ւժնիթողինձի և ճյուղատարման

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ
ԾԻԳ

ԵՐԵՎԱՆ

2009

Բովանդակություն

Ներածական. ԱԱԴ ՓԾ ՄԳՀ ընդհանուր նկարագրություն	3
Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին. նախագծում, ընդհանուր գործողություններ և խնդիրներ.....	3
Գործողություն 1_ Առանձին գործող ավագ դպրոցների ընտրություն և կազմավորում	7
Գործողություն 2_ Ծրագրում ընդգրկված ավագ դպրոցների նյութատեխնիկական և ուսումնական պայմանների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների կարիքի գնահատում	8
Գործողություն 3_ Տարբերակված հոսքերի հենքային ուսումնական պլանների և հոսքային ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում	9
Գործողություն 4_ Մշակված ուսումնական ծրագրերի հիման վրա դասագրքերի տպագրության աշխատանքների իրականացում.....	9
Գործողություն 5_ Փորձնական ավագ դպրոցների մանկավարժական կադրերի ընտրություն, ուսուցիչների ընդունելության մրցութային կարգի ներմուծում, մանկավարժների վերաբաշխման մեխանիզմների մշակում.....	10
Գործողություն 6_ Ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների մշակում և փորձնական ավագ դպրոցների մանկավարժական կադրերի վերապատրաստման կազմակերպում	10
Գործողություն 7_ Փորձնական ավագ դպրոցներին տեղեկատվական խորհրդատվական աջակցություն	31
Գործողություն 8_ Ծրագրի լուսաբանման աշխատանքների կազմակերպում.....	31
Գործողություն 9_ Ծրագրի ընթացիկ վերահսկողություն և գնահատում	32
ԱԱԴ ՓԾ լոկալ մակարդակի գործողություններ և խնդիրներ	33
Գործողություն 10_ Ընտրված դպրոցների վերանորոգում, կահավորում, համապատասխան նյութատեխնիկական պայմանների ստեղծում.....	33
Գործողություն 11_ ԱԴ ուսուցիչների ընտրություն և ընգրկում	36
Գործողություն 12_ Փորձնական դպրոցների աշակերտական համակազմի վերջնական ճշգրտում, առանձին ավագ դպրոցի ստեղծման մասին սովորողների տեղեկացմանը և մոբիլությանը նպաստող կազմակերպչական գործողությունների իրականացում.....	47
Գործողություն 13_ Մարզային նշանակության փորձնական ավագ դպրոցներում սովորողների տեղափոխության կազմակերպում.....	58
Առաջընթացի եզրակացություններ, արդյունքներ և առաջարկություններ	60
<i>Հավելված</i>	74

Առանձին գործող ավագ դպրոցների փորձնական ծրագրի
Մոնիթորինգի և գնահատման
Հաշվետվություն

Ներածություն

Ավագ դպրոցների փորձնական ծրագրի (այսուհետ՝ ԱԴ ՓԾ) մոնիթորինգի և գնահատման հետազոտության նպատակն է բացահայտել, թե որքանով են 2008 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2009 թվականի մայիսն ընկած ժամանակաշրջանում 10 փորձնական ավագ դպրոցների կողմից իրականացված աշխատանքները համապատասխանել նախատեսված գործողություններին, թե ինչպիսի առաջընթաց է արձանագրվել նպատակի, խնդիրների և արդյունքների կատարման ուղղությամբ, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել փորձնական ծրագիրը, ինչպիսի լրացուցիչ կարիքներ են առկա ԱԴ արդյունավետության բարձրացման համար և թե ինչպիսի դասեր կարելի է քաղել ծրագրի հետագա տարածման նպատակով:

ԱԴ փորձնական ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը իրականացվել է **գնահատման 3 քաղաքիչների** օգնությամբ.

- ինչ չափով են ԱԴ փորձնական ծրագրի նպատակադրված խնդիրները իրագործվում (համապատասխանության մոնիթորինգ և արդյունքի գնահատում),
- ԱԴ փորձնական ծրագրի արդյունքում ինչպիսի զարգացումներ են տեղի ունեցել՝ առաջացած խնդիրները և ձեռքբերումները (ազդեցության գնահատում),
- ինչպիսի գործողություններ և ներդրումներ են անհրաժեշտ ԱԴ ծրագրի համապատասխանության, ֆունկցիոնալության և զարգացման համար (նոր կարիքների գնահատում):

Մոնիթորինգի և գնահատման չափորոշիչներն են հանդիսացել՝

- ծրագրային ներդրումների և նախատեսված գործողությունների առկայությունը
- պահպանությունը կամ վիճակը
- կիրառությունը
- նշանակությունը
- ազդեցությունը

- բավարարվածությունը
- նոր պահանջներն ու ակնկալիքները:

ԱԴ փորձնական ծրագրի նախատեսված **գնահատման կողմերն** են.

- ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերը (ծրագրի մշակողներ, որոշում կայացնողներ և ծրագրի ներդրման հիմնական իրականացնողներ)՝
 - ՀՀ կառավարություն՝ ի դեմս ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ Քաղաքաշինության նախարարության
 - Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների կրթության վարչություններ
 - 10 փորձնական դպրոցներ
 - ԿՕԿ ԾԻԳ
 - Երևանի Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան
- ծրագրի իրականացման մակարդակում ներգրավվածները, որոնք հանդես են գալիս իբրև առանցքային տեղեկատուներ՝
 - ԱԴ տնօրինություն
 - վերապատրաստված ուսուցիչներ
 - ԱԴ գրադարանավար
- ծրագրի շահառուները՝
 - 10 փորձնական դպրոցների ուսուցիչներ
 - ԱԴ-ում սովորողներ
 - ԱԴ-ում սովորողների ծնողներ
 - Երևանի Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան
- ծրագրի պոտենցիալ շահառուները, որոնք շահառու չեն հանդիսացել, սակայն ազդեցություն են կրել ծրագրից և հանդիսանում են առանցքային տեղեկատու
 - հարակից դպրոցներից չներգրավված (այլ միջնակարգ դպրոց տեղափոխված, դպրոցից դուրս մնացած) սովորողների ծնողներ:

Մոնիթորինգի և գնահատման սահմանափակումն է հանդիսացել հարակից դպրոցներից չներգրավված (այլ միջնակարգ դպրոց տեղափոխված, դպրոցից դուրս մնացած) սովորողների ծնողների անհասանելիությունը՝ որպես գնահատման կողմ և առանցքային տեղեկատու: Այս խմբի հետ նախատեսված խմբային

հարցազրույցները չեն կայացել, քանի որ նրանց մասին որևէ տեղեկատվություն, առավել ևս նրանց հարցազրույցի հրավիրելու հնարավորություն և լծակ ԱԴ տնօրինությունը չունեն։ Միաժամանակ պետք է նշել, որ ԱԴ տնօրենները հնարավոր չեն համարել այս հարցում հարակից դպրոցների տնօրենների հետ համագործակցել՝ պայմանավորված սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով։ Օբյեկտիվ իրականություն է, որ հարակից դպրոցների տնօրենները ևս համակարգված տեղեկատվություն չէին կարող ունենալ դպրոցից 1 տարի առաջ տեղափոխված սովորողների մասին։ Իսկ սուբյեկտիվությունը պայմանավորված է նրանով, որ հարակից դպրոցները ցանկություն չէին ունենա աջակցել ավագ դպրոցներին այս հարցով, քանի որ ոչ բարյացակամ, իսկ երբեմն նույնիսկ թշնամական վերաբերմունք ունեն ԱԴ-ների նկատմամբ։

Ելնելով վերոնշյալ նպատակից և սահմանված չափորոշիչներից՝ նպատակահարմար է համարվել ԱԴ փորձնական ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացնել որակական հետազոտության մեթոդաբանության հիման վրա (որակական տեղեկատվության հավաքագրման մեթոդներով)։ Որոշ վիճակագրական տվյալների հավաքագրման անհրաժեշտությունից ելնելով, լրացվել և ամփոփվել են նաև վիճակագրական տվյալների թերթիկներ բոլոր 10 փորձնական դպրոցների համար։

Այսպիսով, ԱԴ փորձնական ծրագրի մոնիթորինգը և գնահատումն (այսուհետ՝ ՄԳ) իրականացվել են հետևյալ մեթոդներով.

- փաստաթղթերի վերլուծություն
- փորձագիտական հարցազրույց շահագիգիտ կողմերի հետ
- խորին հարցազրույց ծրագրի իրականացմանը մասնակից առնացքային տեղեկատուներ ԱԴ տնօրենի (կամ տնօրինության ներկայացուցչի) և վերապատրաստված ուսուցիչների հետ
- ֆոկուսավորված հարցազրույց ծրագրի իրականացմանը մասնակից առնացքային տեղեկատուների (գրադարանավարի և սովորողների) հետ
- ֆոկուս խմբային հարցազրույց հիմնական շահառուների՝ ԱԴ սովորողների և նրանց ծնողների հետ
- դիտարկում։

ԱԱԴ փորձնական ծրագրի ՄԳ հետազոտության փուլերն են հանդիսացել.

- Նախապատրաստական աշխատանքներ (փաստաթղթերի վերլուծության և փորձագիտական հարցումների հիման վրա ԱԱԴ փորձնական ծրագրի տրամաբանական շրջանակի պատրաստում)
- Մեթոդաբանության մշակում (ծրագրի տրամաբանական շրջանակի հիման վրա հետազոտության նպատակի և խնդիրների հստակեցում, մեթոդների

ընտրություն, գործիքների մշակում, ընտրանքային համախմբության սահմանում)

- Դաշտային աշխատանքների նախապատրաստում (ինստրուկտաժ, գործիքի ապրոբացիա)
- Բուն դաշտային գործընթաց և գործիքների զարգացում
- Տեղեկատվության խմբավորում և վերլուծություն
- Նախնական և վերջնական հաշվետվություններ:

Ընտրանք

Նպատակահարմար է համարվել ԱԴ ՓԾ ՄԳ որակական ուսումնասիրությունը իրականացնել համատարած սկզբունքով, հետևաբար ՄԳ-ի են ենթարկվել փորձնական բոլոր 10 դպրոցները՝

- Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան թիվ 2 դպրոցը (նախկին վարժարան),
- Աշտարակի N5 ավագ դպրոցը,
- Գավառի N3 ավագ դպրոցը,
- Գյումրիի N3 ավագ դպրոցը,
- Գյումրիի N12 ավագ դպրոցը,
- Գյումրիի N45 ավագ դպրոցը,
- Երևանի N112 ավագ դպրոցը,
- Երևանի N195 ավագ դպրոցը,
- Երևանի N198 ավագ դպրոցը,
- Վարդենիկի N2 ավագ դպրոցը:

Այսպիսով, ընդհանուր առմամբ դաշտային փուլում իրականացվել է.

- ԱԱԴ-ներին առնչվող առկա փաստաթղթերի վերլուծություն,
- 3 փորձագիտական հարցազրույց՝ 2-ը ԿԾԿ ԾԻԳ-ի ներկայացուցիչների հետ և 1-ը ՀՊՄՀ ներկայացուցչի հետ (ՀՀ Քաղշին. նախարարության ներկայացուցչի հետ հարցազրույցը նպատակահարմար չի համարվել, քանի որ հետազոտության նախապատրաստական փուլում պարզ դարձավ, որ ԱԴ շենքային հիմնանորոգման բաղադրիչի գնահատումը անհրաժեշտ է իրականացվել է ոչ թե շինարարական աշխատանքների գործընթացի, այլ արդյունքի տեսանկյունից),
- 20 խորին հարցազրույց՝ 10-ը տնօրինության ներկայացուցչի հետ և 10-ը վերապատրաստված ուսուցչի հետ (որոշ դպրոցներում հարցազրույցը տեղի է ունեցել 2-3 վերապատրաստված ուսուցիչների հետ խմբային հարցազրույցի ձևով),
- 6 ֆոկուսավորված հարցազրույց գրադարանների աշխատակիցների հետ,
- 20 ֆոկուս խմբային քննարկում,
- 10 մոնիթորինգի և գնահատման դիտարկում,

- 10 վիճակագրական հարցաթերթի լրացում:

Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին. նախագծում և ընդհանուր գործողություններ¹

Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման ռազմավարությունը, ինչպես նաև ԱԴ փորձնական ծրագիրը իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ ԿԳ նախարարության: «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման ռազմավարության և փորձնական ծրագրի մշակման աշխատանքներին, այդ դպրոցներում ռեսուրս կենտրոնների համալրմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև ավագ դպրոցի հիմնական առարկաների ուսուցիչների խորացված առարկայական վերապատրաստում:

Գործողություն 1.

Առանձին գործող ավագ դպրոցների ընտրություն և կազմավորում

- ԱԴ ընտրության չափորոշիչներ և մեխանիզմներ
- ԱԴ կազմավորման գործողություններ

Դեռ 2006 թվականի վերջին ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը մշակել էր առանձին գործող ավագ դպրոցների ռազմավարության և փորձնական ծրագրի նախագիծը: Փորձնական ծրագրում ընդգրկված դպրոցների թիվը կազմում էր 30: Այդ նախագիծը ՀՀ կառավարության հավանության է արժանացել 27.03.2008 թվականի թիվ 12 արձանագրային որոշմամբ: Սակայն երկրի հետագա քաղաքական զարգացումների արդյունքում ՀՀ կառավարությունը, կոալիցիայի ներկայացուցիչների և ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչների հետ երկար քննարկումներից հետո, հաստատել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 11-ի N 231 և 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և փորձնական փուլի ծրագրի ավագ դպրոցների և դրանց հարակից հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» որոշման նոր նախագիծը, որում փորձնական դպրոցների թիվը սահմանվել է 10-ը:

¹ ԱԱԴ փորձնական ծրագրային գործողությունները 2 տիպի են՝ ընդհանուր-վերդպրոցային մակարդակի և լոկալ՝ ԱԱԴ մակարդակի:

Ի սկզբանե նախատեսված 30 դպրոցից 10 դպրոցի ընտրությունը կատարվել է ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության վարչության կողմից մարզպետների հետ քննարկման արդյունքում՝ հաշվի առնելով ընտրության նպատակահարմարության հետևյալ գործոնները.

- Դպրոցի ավագ դասարաններում ուսումնական գործընթացի լավ ավանդույթները
- Դպրոցի ուսուցչական կադրերի մասնագիտական որակը
- Դպրոցի շինարարական-ինստիտուցիոնալ պայմանները
- Դպրոցի համբավը:

2008 թվականի սեպտեմբերի 1-ից որպես ավագ դպրոցներ վերակազմավորված դպրոցները իրենց ընտրության և առանձին ավագ դպրոցների կազմավորման գործընթացի սկսման մասին տնօրենները ու հանրությունը տեղեկատվություն են ստացել 2007-2008 ուս.տարվա վերջին: Բայցևայնպես 10 ավագ փորձնական դպրոցների և դրանց հարակից դպրոցների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008 թ. նիստի թիվ 33 արձանագրային որոշման 12 կետով: Օգոստոսի կեսին որոշման հաստատման հանգամանքն իր հերթին անդրադարձել է լոկալ մակարդակում ԱԴ կազմավորման գործընթացի արդյունավետության վրա: Մի կողմից՝ տնօրենները իրավական հիմք չեն ունեցել սկսելու հոսքային ավագ դասարանների ձևավորման, սովորողների ընդունելության և դասացուցակների կազմման աշխատանքները, մյուս կողմից՝ սովորողները և նրանց ծնողները համոզված չեն եղել, որ ԱԴ ձևավորումը իրատեսական է և մինչև վերջին պահը չեն վստահել ԱԴ մասին տեղեկատվությանը: Սովորողները պատրաստ չեն եղել դպրոցից դպրոց տեղափոխմանը (առավել մանրամասն տես գործողություն 11):

Գործողություն 2.

Ծրագրում ընդգրկված ավագ դպրոցների նյութատեխնիկական և ուսումնական պայմանների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների իրականացում

Նախապատրաստական փուլում փորձնական ծրագրում ընդգրկված ավագ դպրոցների նյութատեխնիկական և ուսումնական պայմանների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների կարիքի գնահատում նախատեսված չի եղել:

2008 թվականի պետբյուջեի միջոցներից նախատեսված է եղել իրականացնել փորձնական ավագ դպրոցների վերանորոգման աշխատանքներ և դպրոցներին հատկացնել աշակերտական սեղաններ, աթոռներ, ինչպես նաև ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ:

10 փորձնական ավագ դպրոցների գրադարանների համար նախատեսված գույքը, սարքավորումները և գրականությունը տրամադրվել է «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի ֆինանսական միջոցներից:

Գործողություն 3.

Տարբերակված հոսքերի հենքային ուսումնական պլանների և հոսքային ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում

Ավագ դպրոցի հենքային ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների հոսքային (ընդհանուր, հումանիտար, բնագիտամաթեմատիկական) առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը մշակվել են 2008-2009 թվականներին՝ հիմք ընդունելով 2007 թվականին մշակված, փորձարկված ավագ դպրոցի չափորոշիչների ու ծրագրերի նախագծերը:

2008 թ. սեպտեմբերի 1-ից վերակազմավորված 10 փորձնական ավագ դպրոցների համար նախատեսվել է, որ մինչև 2009-2010 ուս. տարվա ավարտը դրանք գործելու են երկամյա ավագ դպրոցի ծրագրերով, միաժամանակ 2009 թ-ից սկսվում է եռամյա ավագ դպրոցի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրումը, այսինքն՝ 2010 թ. մայիսին ավարտում են 10-ամյա դպրոցի վերջին շրջանավարտները: Այդ է պատճառը, որ 10 փորձնական ավագ դպրոցներն առաջնորդվել են նախկին ուսումնական ծրագրերով: Այդ դպրոցներում ավագ դպրոցի կրթության բովանդակությանն առնչվող փորձարարական աշխատանքներ չեն տարվել, այլ կատարվել է միայն ուսումնական պլանի փոփոխություն: Հետևաբար, այս գործողության գնահատումը հնարավոր չէր իրականացնել ԱԳ փորձնական ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացքում:

Գործողություն 4.

Մշակված ուսումնական ծրագրերի հիման վրա դասագրքերի տպագրության աշխատանքների իրականացում

10 փորձնական ավագ դպրոցներին 2008 թվականին նոր դասագրքերով ապահովելու կարիք չի եղել, վերը նշված պատճառով: 2009 թվականի սեպտեմբերին նոր միայն այդ դպրոցների 10-րդ դասարանում սովորողները (որոնք առաջին եռամյա ավագ դպրոցի սովորողներ են) կստանան 12-ամյա դպրոցի առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան տարբեր հոսքերի համար 7 անուն նոր դասագիրք: Հետևաբար այս գործողության գնահատումը ևս բացառվել է հետազոտության նախապատրաստական փուլում:

Գործողություն 5.

Փորձնական ավագ դպրոցների մանկավարժական կադրերի ընտրություն, մանկավարժների վերաբաշխման մեխանիզմների մշակում

Փորձնական ավագ դպրոցների մանկավարժական կադրերի ընտրություն չի կատարվել, քանի որ բացակայել են նման գործողության իրականացման իրավական հիմքերը՝ օրենսդրական փոփոխությունների բացակայության պատճառով: Առավել ևս ուսուցիչների ընդունելության մրցութային կարգ չի ներմուծվել: Սակայն կարելի է արձանագրել, որ փորձնական ավագ դպրոցների տնօրենները կատարել են որոշակի ներքին ընտրություն իրենց ուսուցիչների միջից և այլ դպրոցներից հրավիրել են բարի համբավ ունեցող ուսուցիչների կամ պարզապես հայտնի մասնագետների (տես գործողություն 11):

Գործողություն 6.

Ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում

➤ **Ուսուցիչների վերապատրաստում, վերապատրաստված ուսուցիչների թիվ**

Առաջին 10 ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումն իրականացվել է Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կողմից 2008-2009 ուսումնական տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ 120 ժամ ընդհանուր տևողությամբ: Վերապատրաստողների շարքում ընդգրկվել են ոչ միայն ԵՊՄՀ, այլև ԵՊՀ-ի, Սլավյանսկի համալսարանի, Կրթության ազգային ինստիտուտի և Գնահատման և թեստավորման կենտրոնի մասնագետները: Իրականացնող կողմն է ապահովել ոչ միայն վերապատրաստման բովանդակությունը, վերապատրաստող դասախոսների ընտրությունը, դասացուցակների կազմումը, բաշխիչ նյութերի տրամադրումը, այլ նաև կազմակերպչական հարցերը՝ վայրի ընտրություն, վերապատրաստող ուսուցիչների տեղափոխում, ուսուցման, սննդի և օթևանելու պայմանների ապահովում: Վերապատրաստումը կազմակերպվել է 12 հիմնական առարկաների գծով 2 քաղաքներում՝ Գյումրիում և Երևանում: Յուրաքանչյուր ԱԴ վերապատրաստված ուսուցիչների թվաքանակը ներկայացված է աղյուսակ 1-ում: Դպրոցներն իրենք են ներկայացրել վերապատրաստվող ուսուցիչների ցուցակները: Ախուրյան գյուղի, Գավառի, Երևանի թիվ 195, Երևանի թիվ 112, Վարդենիկի թիվ 2 դպրոցներից վերապատրաստվել են տվյալ ուս. տարում ավագ դպրոցում հիմնական առարկաներ դասավանդող բոլոր ուսուցիչները: Գյումրիի թիվ 45 դպրոցից ավելի շատ ուսուցիչ է վերապատրաստվել, քան տվյալ պահին անհրաժեշտ է եղել՝ հաշվի առնելով հաջորդ տարի նրանց ավագ դպրոցում ընդգրկելու հանգամանքը: Աշտարակի թիվ 5, Գյումրիի թիվ 3 և Երևանի թիվ 198 դպրոցների հիմնական առարկաների գծով ուսուցիչներից վերապատրաստում չեն անցել համապատասխանաբար 20, 1 և 3 ուսուցիչ, քան որ այդ ուսուցիչները ընդգրկվել են ուսումնական գործընթացում ավելի ուշ: Աշտարակի թիվ 5 դպրոցի տնօրենը նշել է, որ լրացուցիչ 20 ուսուցիչների վերապատրաստման կարիք ունեն: Գյումրիի թիվ 12 դպրոցից վերապատրաստում չեն անցել ավագ դպրոցի միակ

հոսքի՝ արվեստի հոսքային առարկաների 2 ուսուցիչները, քանի որ վերապատրաստման ծրագրով դրանք նախատեսված չեն եղել:

➤ **Վերապատրաստման ուղղություններ**

Ըստ իրականացնող կողմի նախագծման, վերապատրաստման հիմնական նպատակն էր ԱԴ ուսուցիչներին ծանոթացնել նեղ մասնագիտական, մեթոդական, գնահատման համակարգերի, տեղեկատվական տեխնոլոգիաների, հոգեբանական-մանկավարժական նորամուծություններին, որոնք անհրաժեշտ են ԱԴ գործընթացում: Ըստ այդմ վերապատրաստումն ընդգրկել է 5 հիմնական բաղադրիչ՝

- 60 ժամ առարկայական գիտելիքներ,
- 15 ժամ ուսուցման նոր մեթոդիկաներ և գնահատման նորագույն ձևեր,
- 15 ժամ ՏՀՏ-երի օգտագործում ուսումնական գործընթացում,
- 15 ժամ հոգեբանական թրեյնինգներ,
- 15 ժամ ավարտական աշխատանքի (ավարտաճառի) պատրաստում և ներկայացում:

Ուսուցիչներին նաև տրվել են վերապատրաստման դասընթացի բովանդակությունն ամփոփող փաթեթներ՝ «բաշխման նյութեր», որոնք շատ օգտակար են եղել ուսուցիչներին ոչ միայն վերապատրաստումների ընթացքում, այլ նաև հետագա դասավանդման պրակտիկայում: Վերապատրաստման ընթացքում՝ յուրաքանչյուր 15 ժամից հետո, կատարվել է նաև դասավանդված նյութի յուրացման ստուգում թեստային եղանակով: Այդ թեստային ստուգումները հիմնականում նախատեսված էին վերապատրաստման գործընթացի նկատմամբ և՛ վերապատրաստողների, և՛ վերապատրաստվողների մեջ գործընթացի նկատմամբ լրջությունը և պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով: Այնուամենայնիվ, այդ գնահատականները, ինչպես նաև ավարտաճառերի գնահատականները ամրագրվել են ուսուցիչների հավաստագրերի միջուկներում: Բոլոր վերապատրաստված ուսուցիչները ստացել են հավաստագրեր:

➤ **Վերապատրաստման նշանակություն, արդյունավետություն, բավարարվածություն**

Ուսուցիչների վերապատրաստումն ինքնին շատ նշանակալի և օգտակար են համարում բոլոր 10 դպրոցների և՛ տնօրենները, և՛ վերապատրաստված ուսուցիչները: Սակայն ստացված արդյունքների գնահատականները շատ տարբեր են. որոշ ուսուցիչների, տնօրենների կողմից օգտակար է համարվել առարկայական բաղադրիչը, մյուսների կողմից՝ մեթոդականը: Շատ ուսուցիչներ օգտակար են համարել հոգեբանականը կամ ՏՀՏ բաղադրիչը: Կան նաև փոքրաթիվ ուսուցիչներ,

որոնք ոգևորված չեն վերապատրաստումներին մասնակցելուց: Որոշ դեպքերում վերապատրաստման ողջ գործընթացը չափազանց բարձր է գնահատվել, իսկ դրան հակառակ առկա են նաև «ձևական» գնահատականը տվողներ:

Այս հանգամանքը ակնհայտ է դարձնում այն, որ վերապատրաստվող ուսուցիչների կարիքները համասեռ չեն և վերապատրաստման այն բաղադրիչը, որն օգտակար և արդյունավետ էր մի ուսուցչի համար, լիովին անօգուտ և կրկնություն է համարվել մյուսի համար: Այսպիսով, ոչ բոլոր ուսուցիչների սպասումներն են արդարացրել վերապատրաստման դասընթացները: Տպավորությունն այնպիսին է, որ սովորաբար բացասական կամ ոչ լիարժեք բավարարվածության գնահատականները հնչել են հատկապես առավել պատրաստված ուսուցիչների և առավել պահանջկոտ տնօրենների կողմից: **Մակայն վերապատրաստումն իրականացնող կողմը գտնում է, որ ավագ դպրոցների տնօրենների և ուսուցիչների գոհունակությունը ուղիղ համեմատական է ոչ թե նրանց նախնական պատրաստվածությանը և կարիքներին, այլ վերապատրաստման նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշմանը և ձգտումներին:**

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- *Բնականաբար բոլոր գործուղված ուսուցիչները միանման մասնագիտական պատրաստվածություն չեն ունեցել: Այն դպրոցները, որոնք օբյեկտիվ էին ընտրել իրենց ուսուցիչներին, նրանց արդյունքները բավականին բարձր էր: Այսինքն՝ այն անձնավորությունը, որը համապատասխանում է ավագ դպրոցում դասավանդման չափանիշին, նա մեծ ցանկություն ու շագրգրվածություն ուներ յուրացնելու դասընթացի նյութը: Եվ բնականաբար իրեն մոտ գործընթացը արդյունավետ էր, մենք դա նկատեցինք և քննության արդյունքներից, ավարտաճառերի պաշտպանության արդյունքներից, հաճախումներից, ցանկություններից, մոնիթորինգի արդյունքներից: Բնականաբար կան երիտասարդ ուսուցիչներ կամ հատույններով և գիտելիքներով զիջող ուսուցիչներ, որոնց արդյունքներն ավելի ցածր էին, այսինքն՝ 20 բալանոց համակարգում 13-15, այնուամենայնիվ թույլատրելի նորմայի սահմաններում էին: Այն ուսուցիչները, որոնք ավելի բարձր ցանկություն և դիրքորոշում են ունեցել, նրանք ավելի բարձր արդյունքներ են ունեցել: Ուսուցիչները եկել էին համարյա չիմանալով, ուր էին գալիս: Սովորելու պրոցեսը անընդհատ պրոցես է: Եվ չկա մի սահման, որ ասես, այսքանը գիտեմ, դա բավարար է: Մենք ընդգրկել ենք լավագույն մասնագետների, որպեսզի առավելագույն ինֆորմացիա տանք ուսուցիչներին և բոլորն էլ տարան բավականին ինֆորմացիա:*

Ինչ վերաբերում է ծնողներին և սովորողներին, ապա վերջիններս նույնպես մեծամասամբ կարևորում են ուսուցիչների վերապատրաստումը՝ որպես մասնագիտական զարգացման ցանկալի գործընթաց: Թեև սովորաբար մատնանշում են, որ առանց այդ էլ իրենց ուսուցիչները բավական որակավորված են (միայն մեկ ծնող է իր մտահոգությունը հայտնել, թե զուտ ուսուցիչների համար

օգտակար վերապատրաստումներն իրականացել են աշակերտների ու դասաժամերի հաշվին, որը չի համապատասխանում իրականությանը):

Այսպիսով, 4 ԱԱԴ-ներում ընդհանուր առմամբ բոլոր շահագրգիռ կողմերի և շահառուների կարծիքով վերապատրաստման գործընթացի ֆուկցիոնալությունը բարձր է գնահատվել, այսինքն՝ համարվել են օգտակար և կիրառելի դասապրոցեսում, 4 դպրոցներում՝ միջին, իսկ 2 դպրոցում ցածր:

Դիտարկելով ուսուցիչների վերապատրաստման դասընթացներից շահագրգիռ կողմերի և շահառուների բարձր բավարարվածության մակարդակը՝ նկատում ենք, որ դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Վերապատրաստման գործընթացի բովանդակային և կազմակերպչական բարձր որակը, վերապատրաստող դասախոսների բարձր մասնագիտական կարողությունները

Տնօրինության ներկայացուցիչ.

- Շնորհակալություն այդ դասընթացները կազմակերպելու համար: Շատ լավ էր կազմակերպված, ժամացույցի նման ենք աշխատել և՛ մենք, և՛ դասախոսները: Նույնիսկ երբեմն խնդրել ենք ներողամիտ լինեն մեր նկատմամբ, որովհետև նոյեմբեր-դեկտեմբերին էինք գնում դասընթացների, դպրոցի ամենաեռուն ժամանակ, բայց նրանք շատ անհանդուրժողական են եղել, շատ-շատ պահանջել են մեզնից դասախոսները: Երկու-երեք առարկաներից ռեֆերատներ ենք գրել, լուրջ քննություններ ենք հանձնել, հետո վերջում զգացել ենք, որ լավ էր, որ մեր նկատմամբ այդքան պահանջկոտ ու անհանդուրժողական են եղել: Մեզնից յուրաքանչյուրին տրվեցին և՛ մասնագիտական, և՛ տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, որոնք օդ ու ջրի պես մեզ պետք էր: Մենք զինվել ենք նորովի ավագ դպրոց մտնելու համար, և այդ հավաստագրերը, որոնք մենք ստացանք, մենք ինքներս շատ արժևորեցինք, որովհետև մեծ դժվարությամբ արժանացանք դրանց:

Ուսուցիչներ.

- Ես լիովին բավարարված եմ. և՛ վայրն էր ճիշտ ընտրված, և՛ դեկավարությունն էր շատ լավ ընտրված, և՛ դասախոսների, կազմակերպիչների մարդկային վերաբերմունքը շատ լավն էր: Տրանսպորտային ծախս ենք ստացել, սնունդը տեղում էր շատ լավ կազմակերպված: Վերապատրաստողները շատ կոմպետենտ, բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետներ էին, մասնավորապես կենսաբանության դասախոսը Անահիտ Գասպարյանը Կրթության ազգային ինստիտուտից, մենք նրան շատ սիրեցինք:

- Վերապատրաստողները բավականին հմուտ մասնագետներ էին, հատկապես հոգեբանության դասախոսը: Մանկավարժության հարցերն էլ շատ լավ և հետաքրքիր ներկայացվեցին՝ մանկավարժական ինստիտուտից դոկտոր, պրոֆեսոր էր

- Վերապատրաստողների կոմպետենտությունը հրաշալի էր, նրանց մի մասը ինձ ծանոթ էր, դասավանդել էին դեռևս իմ ուսանողական տարիներին: Կային նաև երիտասարդ

դասախոսներ, որոնք բավականին պատրաստված, կիրթ և գրագետ մասնագետներ էին: Մի խոսքով, շատ գոհ եմ: Դասընթացի բոլոր մասնակիցներն էլ իրենց գոհունակությունն էին հայտնում դասընթացներից և վերապատրաստողներից:

- Մեզ վերապատրաստող մասնագետները հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների լավագույն մասնագետներն էին: Նրանք չէին սահմանափակվում միայն վերապատրաստման համար նախատեսված ծրագրով և թեմաներով, և սիրով պատասխանում էին մեր բոլոր հարցերին:

- Անհրաժեշտ գիտելիքների և նոր մանկավարժական մոտեցումների, այդ թվում գնահատման նոր չափորոշիչների ուսուցանումը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Մենք վերջերս մանկավարժական խորհրդի նիստ անցկացրեցինք, որի օրակարգում գնահատման չափորոշիչներն էին: Տարբեր առարկաների ուսուցիչներին ուղարկել էինք վերապատրաստման, նրանք ներկայացրեցին այդ համակարգը: Եվ սա բավականին արդյունավետ էր՝ ուսուցիչները վերապատրաստվել էին, յուրաքանչյուրը ներկայացրեց տարբեր մեթոդներով այդ գնահատման գործակիցներով հաշվարկը՝ ինչպես իրենց հրավերել էին:

Ուսուցիչներ.

- Այո, վերապատրաստման դասընթացներն ինձ բավարարեցին, մենք դասավանդման նոր մեթոդներ սովորեցինք, ծանոթացանք նոր մոտեցումների, գնահատման նոր համակարգին: Մեզ համար դա նորություն էր, սկզբնական շրջանում դեռ դժվարանում էինք, լավ չէինք պատկերացնում: Բայց ժամանակի ընթացքում աստիճանաբար վարժվեցինք, հիմա արդեն գործակցային համակարգով ենք գնահատում: Մի խոսքով, մենք տեղեկացանք այդ ամենի մասին:

- Շատ հետաքրքիր էին հոգեբանական թրենինգները, դրանք, իրոք, շատ անհրաժեշտ էին: Մենք մեծ հետաքրքրությամբ գնացինք: Եվ կուզեինք, քանի որ ուսուցչի մասնագիտությունը հիմա բավական սթրեսային է, լավ կլիներ, որ թեկուզ ժամանակ առ ժամանակ դպրոցներում՝ և ավագ, և հիմնական դպրոցներում անցկացնեին նման հոգեբանական թրենինգներ, որոնք կօգնեին ուսուցիչներին իրենց դասերն ավելի լավ անցկացնել, ու նաև սթրեսներից դուրս գալու համար:

- Օրինակ, քիմիայի դասերին մենք անցնում ենք կապերի տեսակները, պետք է բացատրենք կապի վալենտային բնույթը: Հիմա ավագ դպրոցում դրանք պետք է բացատրենք մոլեկուլյար օրբիտալային տեսությամբ: Այսինքն՝ քիմիական կապի բացատրության երկու եղանակ կա, մենք դպրոցում անցնում էինք միայն վալենտային կապերը, իսկ սովորեցինք, որ պետք է նաև մոլեկուլյար օրբիտալային տեսությանը անդրադառնալ, որը անցնում են բուհերում, բայց բնագիտական հոսքում քննարկում ենք նաև այդ հարցերը: Մենք այնտեղ անցանք նաև ֆիզքիմիա, դիֆերենցիալ հավասարումներ, որը մեզ՝ որպես մասնագետներին պետք է փայլուն աշակերտին բավարարելու, հատուկ աշակերտների

հարցերին պատասխանելու համար, բայց դա խիստ անհրաժեշտ չէ բացատրել դասարանում բոլորին:

- Կոնկրետ օրինակ բերեմ իմ առարկայից՝ ծանոթացանք նոր քարտեզների հետ, նոր մեթոդների հետ ծանոթացանք՝ հնարավոր չէ, որ ամեն տարի նոր մեթոդներ չլինեն, զարգացումը շատ արագ է տեղի ունենում:

□ Վերապատրաստման բավարար (ոչ կարճատև) տևողությունը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Պետք է ասեմ, որ վերջին 15 տարվա կտրվածքով դրանք լավագույն վերապատրաստման դասընթացներն էին: Մինչ այդ մեր ուսուցիչները միշտ վերապատրաստման էին գնում 2-3 օրով, մեկ շաբաթով, որի արդյունավետությունը չէի ասի, թե բավարարում էր մեզ և վերապատրաստվող ուսուցիչներին:

Վերապատրաստումից բավարարվածության ցածր մակարդակը կամ բավարարվածության հետ մեկտեղ նշվող թերությունները հիմնականում պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

□ Վերապատրաստման ձևական բնույթը, դասընթացներում անբավարար բովանդակային որակը և հազվեցվածությունը, նորամուծության պակասը, արդեն իսկ առկա գիտելիքների, հմտությունների կրկնությունը

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Ես դժգոհ եմ, որովհետև դրանք կեղծ վերապատրաստումներ էին: Եթե ծանոթանաք վերապատրաստման ընթացքում տված նյութերին, մանավանդ դասավանդման մեթոդիկայի հետ կապված, կսարսափեք՝ անգրագետ, տարօրինակ, այստեղից-այնտեղից քաղած խառնած նյութեր, մեթոդները սխալ մեկնաբանված, շատ ցավալի բաներ, ինձ դուր չեկավ: Իհարկե, հաջողված դասընթացներ էլ կային, օրինակ ռուսերենի դասընթացն է արդյունավետ եղել:

- Այնտեղ կար մեթոդիկայի բաղադրիչ: Բայց մեր ուսուցիչները վերջին տարիներին արդեն մասնակցել էին մեթոդական բազմաթիվ դասընթացների և ծանոթ էին ուսուցման այս նոր ձևերին ու մեթոդներին, և մինչև այս վերապատրաստումներն էլ կիրառել են դրանք: Ինչ վերաբերում է մասնագիտական բաղադրիչին, ապա մաթեմատիկները, ֆիզիկները, կենսաբանները ասում են, որ նրանք բավականին լուրջ խնդիրներ են քննարկել այնտեղ: Բայց իմ պատկերացմամբ, այդ դասընթացները պետք է ավելի կառուցողական բնույթ կրեին: Օրինակ, որպես պատմության մասնագետ, ես սպասում էի, որ այդ ընթացքում պետք է լրջությամբ ներկայացվեին այն հարցերը, որոնք այսօր վերանայվում են պատմագիտության մեջ: Բայց որովհետև ժամանակը սուղ էր, դասախոսները հիմնականում ծանրանում էին ուսուցիչների առաջադրած խնդիրների վրա, ավելի շատ դրանք էին քննարկում, այսինքն՝ ավելի գործնական բնույթի պարապմունքներ էին դրանք:

Ուսուցիչներ.

- Իսկ վերապատրաստումը, իմ կարծիքով, ավելի շատ ձևական բնույթ էր կրում և քիչ էր ավագ դպրոցի ուսուցիչ ձևավորելու համար: Ես մինչև վերապատրաստումն էլ էի իմ դասերին կիրառում նոր, ժամանակակից մեթոդներ, և իմ կաբինետում նույնիսկ աշակերտական սեղանները Ու-աձև են դասավորված, որպեսզի հեշտ լինի կազմակերպել խմբային աշխատանքները, դասի ընթացքում ժամանակ չկորցնենք սեղաններն ու աթոռները տեղաշարժելու վրա ու նաև աղմուկ չառաջանա:

- Մենք նախքան այդ վերապատրաստումը նոր մեթոդներին տեղյակ էինք, որովհետև մասնակցել էինք հնգօրյա և եռօրյա դասընթացների: Վերապատրաստումը մեզ համար մեր գիտեցածի ամփոփումն էր:

Ծնող.

- Ես կարող եմ ասել, որ մեր ուսուցիչները նախկինում էլ էին այդպիսի մեթոդներ օգտագործում: Նրանք անհրաժեշտություն էլ չունեին վերապատրաստվելու: Բայց դա ինքնակրթության դրսևորումներից մեկն է, որ միայն ուսումնաստության տարիներին սովորած գիտելիքները չէ, որ օգտագործվում են: Մարդն իր պրակտիկայի ընթացքում պետք է անընդհատ կատարելագործվի, նոր ծրագրերի, նոր մեթոդների տիրապետի, ինքը նոր մեթոդներ ստեղծի:

Սովորողներ.

- Դասապրոցեսը ինտերակտիվ միջոցներով մեր դպրոցում արդեն անցկացվում էր: Եվ մեր ուսուցիչները, կարծում եմ, այնքան որակավորված են, որ կարիք չկար երկու ամսվա: Մի գուցե, մի քիչ կոպիտ հնչի, բայց մեր ուսուցիչները կարող են իրենք ուրիշներին ինչ-որ բաներ սովորեցնել:

- Մենք ֆիզմաթ հոսքում նույնպես միշտ այդպիսի աշխատանքներ տարել ենք, մեզ համար դրանք սովորական դասեր են, մեզ համար նոր բան չի եղել:

- Վերապատրաստման անհամապատասխանությունը դպրոցների տնօրինության և ուսուցիչների կարիքներին, պահանջներին ու ակնկալիքներին

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Հոգեբանական թրեյնինգների հետ մենք շատ մեծ հույսեր էինք կապում, որովհետև մեր ուսուցիչների մի զգալի մասն ավարտել է համալսարան, այնտեղ հոգեբանություն չեն անցել, տարիքային ֆիզիոլոգիա չեն անցել, ուզում էինք, որ գոնե այդ տարրական բաները մարդկանց սովորեցնեն: Բայց ինչ-որ թեստեր են եղել՝ ով է խանդոտ, ով է այս, ով է՝ այն, անիմաստ ինչ-որ ժամավաճառությամբ են զբաղվել, թվանշաններ են դրել, մարդկանց ճանապարհել: Ինֆորմատիկայի վերապատրաստման ժամանակ դասատուներին սովորեցրել են համակարգիչ միացնել ու անջատել, այսպիսի տարրական բաներ: Ափսոս, 120 ժամ, դասերից հետո, ուսուցիչները գնում էին, ուսումնական պրոցեսը դպրոցում խաթարվում էր, ուզում էինք, որ ինչ-որ մի բան այնտեղից բերեին, ոչինչ չէին բերում:

- Ես սպասում էի, որ վերապատրաստման ընթացքում ավելի մեծ ուշադրություն դարձնեին մեթոդիկային, ուղիները տային, չափորոշիչները տային, բացատրեին, ինչպես կարելի է

դրանցով աշխատել, սեմինարներ անցկացնելին, հմտություններ տալին: Օրինակ՝ ինչպես կառավարել անկառավարելի դասարանը, ինչ միջոցներով: Ինչպես կառավարել կոնֆլիկտային իրավիճակները: Ուսուցչի աշխատանքը ստեղծագործ աշխատանք է, կապված է դեռևս չկազմավորված, չկայացած մարդկանց հետ: Նրանք պետք է կոնֆլիկտոլոգիա սովորեին, ավելի շատ և խորը սովորեին հոգեբանություն: Ես ուսուցիչներ ունեմ, որոնք ցանկացած խնդիր լուծում են, այդ թվում միջազգային օլիմպիադայի խնդիրներ: Նրանց կանչել են ավելի ցածր մակարդակի խնդիրներ են սովորեցրել լուծել, դեռ ինչ-որ անհասկանալի տոնով են խոսել նրանց հետ: Դա բնական դժգոհություն կառաջացնի, թե ինչու են մեզ կանչել: Այդ մարդը հետագոտող ուսուցիչ է, ունի այդ հմտությունները, ինչ է՝ այդ սերտիֆիկատի համար էին կանչել:

- Դասընթացների առավելապես տեսական ուղղվածությունը, պրակտիկ մասի պակասը և տրամադրվող գիտելիքի կիրառելիության պակասը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Այդպես ի՞նչ վերապատրաստում: Տեսական գիտելիքները ասում, գնում են: Քիչ ասաց ասացի, որ իրեն հարգող ցանկացած անձն ինքն էլ կարող է ինքնուրույն աշխատանքով այդ գիտելիքները ձեռք բերել:

Ուսուցիչներ.

- Ավելի շատ գործնական բնույթի պարապմունքներ էին պետք, ոչ թե տեսական: Ես կարծում եմ, որ ավելի օգտակար կլինեն, եթե աշակերտների հետ դաս վարեինք, կամ վերապատրաստողները բաց դաս անցկացնեին, և միասին վերլուծեինք, թե ինչը հաջողվեց, ինչն էր պետք այլ կերպ անել, որ արդյունավետ լինի:

- Մենք բոլորս կողմնակից էինք, որ ավելի շատ փորձի փոխանակում լինեն, գնայինք դպրոցներ, լավագույն փորձը ուսումնասիրեինք, քննարկեինք, կամ հենց տեղում ցուցադրական դաս անցկացնեին, մենք մեր կարծիքներն արտահայտեինք: Այսինքն՝ մենք փորձի փոխանակման կարիք ունենք: Եթե մենք դպրոցում մի դաս լսեինք, այդ մեթոդներն ավելի կիրառելի կլինեին: Վերապատրաստողների կոմպետենտությունը բավարար էր, բայց նրանք հիմնականում տեսական գիտելիքներ էին տալիս: Մենք կուզեինք պրակտիկական ավելի շատ լինեն, կուզեինք իրականում տեսնել, թե ինչ մեթոդներով կարելի է դասը վարել:

- Ես կարծում եմ, լավ կլինեն, եթե վերապատրաստում իրականացնող մասնագետները հաճախեին դպրոց և ցուցադրական դասեր անցկացնեին, գործնականում ցուցադրեին իրենց մեթոդները: Գիտեք, տեսականորեն մեթոդի մասին խոսելն ուրիշ է, իսկ դրա կիրառումը ուրիշ է: Լավ կլինեն, որ ուսուցիչները տեսնեին, ինչպես են պրակտիկայում կիրառվում այդ մեթոդները:

- Գիտելիքների գնահատման և հավաստագրերի տրամադրման գործընթացի անբավարարությունը, արդյունքում ուսուցիչների գիտելիքների գնահատականների անհամապատասխանությունը

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Նախևառաջ, եղավ սովետական գնահատում, ընթացքը մենք շատ լավ գիտենք, որովհետև մարդիկ գալիս, պատմում էին: Օրինակ, մաթեմատիկայի վերապատրաստումը ամենացածր մակարդակի վերապատրաստումն էր: Մեր հարգարժան վերապատրաստողները ոչ թե մարդկանց գիտելիքներ էին տալիս, այլ, չգիտես ինչու, անընդհատ ստուգում էին նրանց գիտելիքները, ինչ-որ վարժություններ ու խնդիրներ են տվել՝ ստուգողական աշխատանքի նման: Փոխանակ բան սովորեցնեն, հետո իրենց սովորեցրածը ստուգեն: Եվ կոնֆլիկտներ են առաջացել, որովհետև լավ մասնագետներին արհեստական ցածր միավորներ են նշանակել, իսկ արդյունքում, երբ ստացել են սերտիֆիկատները, բոլորի գնահատականները եղել է 18, 19, 20: Եվ հետո դժվարություն է առաջացնում դպրոցի համար՝ իմ լավ մասնագետն էլ է 20 ստացել, իմ վատ մասնագետն էլ է 20 ստացել: Հիմա ես նրան ինչպես ասեմ, որ քեզ ժամ չեմ տալիս, որովհետև ցածր միավոր ես ստացել: Երկուսն էլ նույն 20 միավորն են ստացել, բայց ես գիտեմ, որ եթե սրան դասարան տվեցի, դասարանը կկործանի: Ես ունեմ դպրոցում ուսուցիչ, որին եթե այս տարի հոսք տամ, հաջորդ տարի այդ հոսք այլևս մարդ չի գա: Բայց նա էլ է 20 ստացել, ուժեղ դասատուն էլ է 20 ստացել: Այդ դեպքում ես չեմ հասկանում, ինչու էր դա պետք: Այն իմ ուսուցիչը, որը ինքը կարող էր վերապատրաստողին վերապատրաստել, ՏՏ թեստից ստացել է 18 միավոր, իսկ այն ուսուցիչը, որ կյանքում համակարգիչ չէր տեսել, ստացել է 20 միավոր: Սրանք արտուրդներ են: Ուսուցիչներս ասում էին, որ հատկապես մարզերից եկած ուսուցիչները գալիս արտագրում էին, բայց վերջում բոլորին նույն սերտիֆիկատները տվեցին: Այս կեղծ բաները պետք է վերանան:

- Ես կարծում էի, որ պետք է բոլորին հավաքեն, վերապատրաստեն, նրանց միջից ընտրեն լավերին և սերտիֆիկատներ տան: Բայց բոլոր ուսուցիչները ստացել են սերտիֆիկատ: Չհասկացա, ի՞նչ է՝ բոլորը լավն էին: Ես ինքս գիտեմ, որ ո՛չ, բոլորը լավ չէին: Պետք էր տարբերակում մտցնել: Ի՞նչ է, ամբողջ հանրապետությունում չկար մեկը, որը չէր բավարարում: Ինչպե՞ս է, որ ես՝ մասնագետ չլինելով, դասալսման ընթացքում հասկանում եմ, որ չի բավարարում, ասում եմ այդ մարդուն, որ սա քո տեղը չէ: Իսկ մանկավարժական համալսարանը չէր կարող մի երկու հոգու այդ նույնը ասել:

Վերապատրաստում իրականացնող կողմի ներկայացուցիչը համամիտ չէ գնահատականների անհամապատասխանությանը, քանի որ դրանք, ըստ նրա, արտացոլում են ոչ թե ուսուցչի ամբողջական կարողությունները, այլ վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքներն ու հմտությունները:

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- Ստացված գնահատականները օբյեկտիվ են արտացոլել գործընթացը: Ամեն մի ստացված միավորը ուսուցիչը և դասախոսը քննարկել են: Երբեմն ուսուցիչը դժգոհել է ստացված միավորից: Քննարկման ընթացքում կամ մնացել է նույնը, կամ բարձրացվել է, կամ իջեցվել է: Գնահատականները հենց այնպես չեն բաշխվել, դրանք ստացված գնահատականներ են, որոնց հիմքերը մենք ունենք: Որպեսզի մենք ուսուցչին օբյեկտիվ գնահատենք, պետք է նա դաս տա, մենք այդ դասը լսենք, նոր որոշենք, թե որքանով դա արդյունավետ եղավ: Բայց

այդ հնարավորությունը մենք չունենք: Եվ բնականաբար այն գնահատականը, որ ինքը ստացել է, դա իր յուրացրած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատականն է, ոչ թե նրա ընդհանուր կարողությունների: Միավորների մրցակցություն կար, բայց արտագրություն չի եղել: Հնարավոր է եզակի դեպքեր եղած լինեն, բայց ոչ զանգվածային:

Վերապատրաստող և վերապատրաստվող կողմերի կարծիքների համադրությունը գնահատման համակարգի և հավաստագրերի մասին ակնհայտ է դարձնում, որ նրանց ընկալումները այդ գնահատականների և հավաստագրերի նշանակության մասին իրար չեն համապատասխանել, ինչն էլ դպրոցների համար լրացուցիչ դժգոհություններ և խնդիրներ է հարուցել: Այս հանգամանքը մեծապես պայմանավորված է նրանով, որ որոշ տնօրեններ վերապատրաստման դասընթացները ընկալել են իբրև ֆիլտրացիայի մեխանիզմ: Քանի որ ներքին կադրերից ավագ դասարաններում աշխատող ուսուցիչների ընտրությունը իրականացվել է, հաշվի առնելով դրանցում դասավանդելու ուսուցիչների փորձը, և փաստացի ԱԴ-ում փորձ ունեցող ուսուցիչների միջև տնօրենները ընտրության հնարավորություն չեն ունեցել, ապա այն դեպքերում, երբ ավագ դասարաններում դասավանդման փորձ ունեցող ուսուցիչի որակավորումը չի բավարարում տնօրինության պահանջներին, առաջանում է ուսուցիչների տարբերակման անհրաժեշտություն: Այնինչ վերապատրաստման գործառնության շրջանակները դրանից դուրս են եղել:

Ընդհակառակը, վերապատրաստման գործընթացի արդյունքում բոլոր ուսուցիչները հավաստագրեր են ստացել, ինչը փորձնական ավագ դպրոցների ուսուցիչների և տնօրինության կողմից դիտարկվել է իբրև այդ դպրոցներում դասավանդման իրավասություն: Ստացված իրավիճակը մյուս կողմից հետևանք է ուսուցիչների ընտրության մեխանիզմի բացակայության:

- Վերապատրաստող դասախոսների դպրոցում դասավանդելու փորձի բացակայությունը և նրանց կողմից դպրոցի առանձնահատկությունների մասին պատկերացումների սահմանափակությունը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Բացի այդ, նրանք դպրոցի հետ հիմնականում կապ չունեն: Ավելի լավ կլիներ, դպրոցի լավագույն ուսուցիչները վերապատրաստվեին ինչ-որ տեղ, թեկուզ Երևանում և նրանք դասընթացներ անցկացնեին: Ես այդպես եմ կարծում, որովհետև պետք է դպրոցի հետ առնչվես, դպրոցում ուսուցանվող նյութը պետք է հինգ մատիդ պես իմանաս և յուրաքանչյուր թեմայի մատուցման մեթոդը, որ կարողանաս մատուցել երեխային: Իսկ այդպես ինչ վերապատրաստում: Վերապատրաստողը պետք է տեղյակ լինի դպրոցի կյանքին, դպրոցի նյութին: Յուրաքանչյուր տարածքն ունի իր ընտրյալ մասնագետներին: Ես այն կարծիքին եմ, որ անպայման նրանցից պետք է ընտրել լավագույններին, նրանց վերապատրաստել և նրանց միջոցով վերախառապատել մյուսներին:

Ուսուցիչ.

- Եվ պարտադիր չէ, որ անպայման գիտությունների դոկտորներ, նեղ մասնագետներ վարեն: Փորձ ունեցող մանկավարժները, մասնագետները նույնպես կարող են սեմինարներ վարել, ներկայացնել իրենց փորձը, և դա ևս մեզ համար շատ օգտակար և ուսանելի կարող է լինել:

- Վերապատրաստող դասախոսների նեղ մասնագիտացած լինելը, ինչը հանգեցրել է թեմաների անհամաչափ խորությամբ ուսուցմանը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Մի քիչ բարդ հարց է, արդյոք բավարարված եմ ուսուցիչների վերապատրաստումից: Ես չեմ զգացել փոփոխություն նրանց դասավանդման մեջ մինչև վերապատրաստվելը և դրանից հետո: Ամեն ինչ հարաբերական է: Նրանց հետ պարապել են մանկավարժական ինստիտուտի դասախոսները: Նրանցից մեկը, ասենք, օպտիկայի ուղղվածություն ունի, մյուսը՝ թերմոդինամիկայի ուղղվածություն, այսինքն՝ յուրաքանչյուրը նեղ մասնագիտություն ունի, բայց վարել է ամբողջ դասընթացը: Կարելի է մտածել, որ արդյունքում բարձրացել է ընդհանուր պատրաստվածությունը: Ես այդպես չեի մտածի: Մի մասնաբաժինը որակով է եղել, մյուս մասնաբաժինը՝ ավելի քիչ խորացված է ուսուցանել:

- Վերապատրաստման տևողության անբավարարությունը.

Ուսուցիչներ.

- Ընդհանուր առմամբ, ես բավարարված եմ, բայց, իմ կարծիքով, ժամանակն էր քիչ, երկու ամիսը այդպիսի վերապատրաստման համար բավարար չէր: Օրինակ, ինֆորմատիկային տիրապետելու համար ընդամենը երկու օրվա պարապմունքները շատ քիչ էին: Ես կուզեի նաև, որ գնահատման նոր համակարգի վերաբերյալ նույնպես վերապատրաստման մի դասընթաց լիներ: Այս մեկ տարվա ընթացքում դպրոցում միանգամից շատ նորություններ ներդրվեցին, ուստի կցանկանայի, որ վերապատրաստումն էլ մի քիչ ընդլայնվեր, որպեսզի կարողանայինք ավելի խորությամբ ուսումնասիրել այդ նորությունները, մասնավորապես, գնահատման մեթոդները: Ուսուցիչների մեծ մասը մասնագիտական վերապատրաստումից զոհ էին, բայց մեթոդական, հոգեբանական, համակարգչային դասընթացները քիչ էին:

- Վերապատրաստման դասընթացների իրականացման ժամանակահատվածի անհաջող ընտրությունը

Ուսուցիչներ.

- Մի քիչ ժամանակի առումով էր դժվար, ավելի լավ կլիներ, որ այդ վերապատրաստումներն արձակուրդի շրջանում անցկացնեին:
- Ճիշտ է, ժամանակը մի քիչ հաջող չէր ընտրված, ուսումնական պրոցեսին զուգահեռ կազմակերպվեցին, մի քիչ դժվար էր, բայց մեր դպրոցի տնօրենը այնպես հարմարեցրեց

դասացուցակը, որ դասերը չտուժեցին: Մի առավելությունն էլ այն էր, որ ամառվա մեր հանգստին չի խանգարել:

Ծնողներ.

- Ես էլ եմ գտնում, որ ուսուցիչների վերապատրաստումը կարևոր է և՛ դպրոցի, և՛ աշակերտների համար: Բայց լավ կլիներ, որ ուսուցիչներին ոչ թե ավագ դպրոցը ստեղծելուց հետո տանեին վերապատրաստման, այն էլ ուսումնական տարվա կեսին, այլ նախապես՝ թեկուզ հենց ամառվա ամիսներին, մինչև դասերի սկսվելը: Թե չէ, ինչ է ստացվում. սկզբից նորամուծությունը անում են, հետո են մասնագետներին պատրաստում այդ նորին:

- Ուզում եմ նշել, որ, իմ կարծիքով, այնքան էլ լավ ժամանակ չէր ընտրվել վերապատրաստման համար՝ դասերի ժամանակ, երբ ուսուցիչները դպրոցում արդեն ծանրաբեռնված աշխատում են, նրանց համար վերապատրաստման դասընթացները լրացուցիչ ծանրաբեռնվածություն էր: Բացի այդ, որովհետև ուսուցիչները հիմնականում կանայք են, նրանց առօրյան էլ էր տուժում, դուք էլ եք պատկերացում, ինչ է նշանակում կնոջ համար հանգստյան օրերին տանը չլինել:

➤ **Վերապատրաստման դրական արդյունքներ և ազդեցություն**

- Վերապատրաստումից ստացված գիտելիքների և հմտությունների, ստացած նյութերի կիրառություն և դասավանդման բարելավում ավագ դպրոցներում

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Եվ մենք վերապատրաստման արդյունքները լիարժեքորեն օգտագործել ենք ուսումնական գործընթացում: Վերապատրաստման շնորհիվ մեր ուսուցիչները կարողացան հունիսի ընթացքում կազմել ոչ միայն հաջորդ ուսումնական տարվա 11-րդ դասարանների ուսումնական պլանները, այլև եռամյա ավագ դպրոցի պլանները: Ես պահանջ էի դրել, որպեսզի հունիս ամսվա ընթացքում, քանի դեռ աշխատանքի մեջ էին և գալիս էին դպրոց, որ բոլոր ուսուցիչները կազմեն հաջորդ ուսումնական տարվա իրենց նախնական ուսումնական պլանները, որոնք պետք է հասցնեն քննարկել մեթոդավորումներում և հաստատել:

- Վերապատրաստումից հետո նրանց աշխատանքում ես բավական նոր մտեցումներ և մեթոդներ տեսա: Դրա ապացույցն են նրանց բազում բաց դասերը, խորհրդակցությունները, սեմինարները: Եվ քանի որ ես ինքս եմ մասնակից եղել նրանց վերապատրաստման պարապմունքներին, ես հետո դրա արտացոլումը տեսնում էի այստեղ դպրոցում, դասարանում անցկացրած նրանց դասերը, կարծես, այդ պարապմունքների շարունակությունն են:

Ուսուցիչներ.

- Այդ պահին առանձնապես չես զգում, բայց հետո, երբ սկսում ես կիրառել նոր մեթոդները, զգում ես, որ հետաքրքիր բաներ ես ձեռք բերել:

- Չեմ կարող ասել, որ կոնկրետ մասնագիտական առումով ամեն ինչ կիրառում եմ, բայց մենք ունենք թեմա կլոնավորման վերաբերյալ, որը դասագրքում չկա, միայն որպես լրացուցիչ նյութ է ներկայացված: Բայց մենք վերապատրաստման ընթացքում անդրադարձել էինք դրան, և ես այդ նյութը կիրառեցի դասարանում թեման բացատրելու համար: Դասընթացների վերջում, երբ մենք գրեցինք մեր աշխատանքները, ես դաս էի պլանավորել, և հետո այդ դասը փուլերով կիրառեցի իմ դասարանում:

- Տեղեկատվական տեխնոլոգիաների դասընթացն էլ շատ օգտակար էր: Եթե մի քանի օր առաջ գայիք դպրոց, կտեսնեիք, որ բոլոր ուսուցիչները՝ նստած համակարգիչների առջև, աշխատում են, հաջորդ ուսումնական տարվա պլաններն են կազմում՝ դա հենց այդ համակարգչային դասընթացի արդյունքն էր: Բհարկե, մինչև այդ էլ էինք որոշ չափով տիրապետում համակարգչին, բայց ոչ այսքան վարժ և այսպիսի խորությամբ: Իսկ հիմա մեզնից յուրաքանչյուրը կարողանում է համակարգչի հետ կապված ցանկացած աշխատանք ինքնուրույն կատարել:

- Օրինակ, մաթեմատիկայի դասերին «Ֆունկցիա» թեման անցնելիս համակարգչի միջոցով է ուսուցչուհին դասը վարել, և ավելի արդյունավետ էր, որովհետև աշակերտը էկրանի վրա տեսնում էր իր կառուցած ֆունկցիան, ավելի լավ էր հասկանում, ավելի շատ բան սովորեցին, քան եթե միայն գրատախտակի վրա աշխատեին:

- Մի ամբողջ փաթեթ բաշխիչ նյութեր ենք ստացել, որը ես հիմա օգտագործում եմ, ինձ պետք են գալիս իմ առարկայի հետ կապված, հոգեբանության հետ կապված: Բաշխիչ նյութերը բաղկացած էին մի քանի բաժիններից, որը ուղղակի ինֆորմացիա էր, թե ամբողջ դասապրոցեսը ինչպես պետք է անցնի:

- Իսկ մեթոդական առումով ավելի շատ բան տվեց, դասընթացից հետո մի քանի նոր մեթոդներ փորձեցի կիրառել դասարանում, և արդեն աշխատելու ընթացքում ես տեսնում, թե դրանցից որոնք են ավելի հետաքրքիր, հեշտ դարձնում ուսուցանելը: Բացի այդ, տարբեր մեթոդներ տարբեր դասարաններում այլ կերպ են աշխատում, պետք է ընտրես, թե հատկապես այդ դասարանում որ մեթոդն է ավելի կիրառելի:

- Ես ինքս հունվարից հետո մի քանի բաց դաս եմ անցկացրել, որոնց ընթացքում կիրառել եմ վերապատրաստման ընթացքում սովորած մեթոդները: Ես բավարարված եմ դասընթացներից, և իմ առարկայի գծով մյուս մասնակիցներն էլ էին գոհ:

- Սովորողների և նրանց ծնողների շրջանում ուսուցիչների նկատմամբ վստահության աճ և արդյունքում ուսման նկատմամբ պատասխանատվության բարձրացում

Ուսուցիչներ

- Աշակերտներն էլ մտնում, տեսնում էին, որ բոլոր ուսուցիչներն ազատորեն օգտվում են համակարգչից, և մեր աշակերտներից մեկը նույնիսկ զարմացավ՝ թե մեր նախկին դպրոցում նման բան չկար, ուսուցիչը թելադրում էր, օպերատորը հավաքում: Դա մեծ առավելություն էր:

- Աշակերտներն էլ գիտեին, որ մենք դասերից հետո ժամանակ չունենք, որովհետև գնում ենք դասընթացների, որտեղ մեզ վերապատրաստում են իրենց դասավանդելու համար: Մա

երեխաներին էլ էր լրացուցիչ լրջություն հաղորդում, նաև վստահություն ուսուցիչների կարողությունների և հմտությունների նկատմամբ: Վերապատրաստումից հետո ուսուցիչների հեղինակությունն ավելի բարձրացավ երեխաների, նաև ծնողների աչքերում:

- Երեխաների մոտ, առաջին հերթին, առաջացավ ավելի շատ վստահություն, որ իրենց ուսուցիչները վերապատրաստում անցան, հավաստագիր ստացան: Երեխաներն ավելի շատ վստահեցին, և դրանով մեր աշխատանքն ավելի հեշտացավ:

Սովորող.

- Եվ ավելացնեմ, որ չնայած ուսուցիչներին այդ վերապատրաստումը ոչինչ չսովեց, բայց զուտ հոգեբանական առումով աշակերտը, երբ գիտակցում է, որ իր ուսուցիչը լիովին պատրաստ է ավագ դպրոցում դասավանդելու համար, իրեն հանգիստ է զգում:

- Սովորողների հետաքրքրվածության և դասերին հաճախելիության բարձրացում

Ուսուցիչ.

- Ես իմ աշխատանքում կիրառում եմ այդ մեթոդները, դրանց մի մասը շատ դուր է գալիս աշակերտներին:

Ծնողներ.

- Ես աղջկաս պատմելով, ու նաև այդ բաց դասերին մեկ-երկու անգամ ներկա գտնվելով, իմացել եմ, որ նոր մեթոդներ են օգտագործում, երեխաները խմբային աշխատանքներ են կատարում, ուրիշ մեթոդներ են կիրառում, որ բոլոր սովորողները մասնակցեն, ոչ ոք հենց այնպես չնստի դասարանում: Եվ երեխաներին ավելի հետաքրքիր է լինում այդպես սովորելը:

- Կարծես, այդ վերապատրաստումներից հետո էր, որ աղջիկս պատմում էր, ինչպես են կենսաբանության դասերը համակարգչով անցկացվում: Հետո ինչ-որ նոր մեթոդներ են կիրառում ուսուցիչները, խաղեր են անցկացնում, երեխաները խմբերով են աշխատում: Դրանք ավելի հետաքրքիր են դարձնում դասը, ոգևորում են երեխաներին, արդեն բոլորը ակտիվ են լինում, ոչ ոք չի մնում պասիվ հանդիսատեսի դերում, ուզած-չուզած մասնակցում են, ինչ-որ բան սովորում են: Ես նույնպես շատ կարևոր եմ համարում վերապատրաստումները, և գտնում եմ, որ ոչ թե միայն ավագ դպրոց դառնալու հետ կապված պետք է վերապատրաստվեին ուսուցիչները, այլ պարբերաբար նրանց համար պետք է այդպիսի դասընթացներ անցկացնել:

Սովորողներ.

- Այդ նոր մեթոդների շնորհիվ դասերն անցնում են ավելի հետաքրքիր: Օրինակ, մենք հումանիտար հոսքում հայոց լեզուն կամ անգլերենը զույգ ժամով ենք անցնում, բայց դրանք աննկատ են անցնում, չենք զգում, թե ինչպես է անցնում ժամանակը:

- Անցյալ տարի էր փոփոխություն նկատվել, երբ կենսաբանության ուսուցիչը վերապատրաստումից հետո եկավ և սկսեց նոր մեթոդներ օգտագործել մեզ հետ: Մենք խմբերով էինք նստում, դասը կարդում էինք և պետք է անպայման յուրացնեինք դասը:

- Վերապատրաստման դասընթացներից հետո մենք սկսել ենք խաղեր խաղալ, դրանք նպաստում են, որ լավ սովորենք:

- Վերապատրաստված ուսուցիչների ինքնաընկալման, ուսուցչի դերի ընկալման փոփոխություն, ինքնավստահության և մասնագիտական ոգևորության բարձրացում

Տնօրինության ներկայացուցիչ.

- Երբ ուսուցչին այդ թմբիրից հանում ես, նրան ուսանողի կարգավիճակում ես դնում, անհնարին է, որ ինչ-որ բան չփոխվի: Իրենք իսկ սկսում են իրենց նորովի նայել, բացառվում է, որ չլիներ դա:

Ուսուցիչներ.

- Չնայած դա նաև մեզ էլ էր պետք, թեկուզ գուտ հոգեբանորեն, որովհետև ցանկացած մարդ նոր շեմ անցնելիս միշտ անհանգստություն է զգում: Իսկ այդ վերապատրաստումները մեր ինքնավստահությունը բարձրացրեցին: Մենք ավելի վստահ մտանք դպրոց: Մեր բոլոր ուսուցիչները բարձր միավորներով պաշտպանեցին իրենց ռեֆերատները, մասնագիտական թեստերը: Եվ դա նոր լիցք հաղորդեց մեզ, նոր ոգևորվածությամբ էինք գալիս դպրոց:

- Վերապատրաստման ընթացքում ուսուցիչների ստացած բաշխիչ նյութերի օգտագործում, տարածում, փորձի փոխանակում, կատարելագործման ձգտման առաջացում դպրոցի մյուս ուսուցիչների մոտ

Տնօրինության ներկայացուցիչ.

- Եվ քիչ կարևոր չէր, որ մյուս ուսուցիչներն էլ իրենց գործընկերներից իմացան, որ այսպիսի մեթոդներ և տեխնիկական միջոցներ են կիրառվում դասի ժամանակ, այսպիսի օգուտներ է տալիս: Եվ թեկուզ աշխատանք ունենալու տեսակետից էլ նրանք այսօր շահագրգռված են, իրենք են ինձ դիմում՝ «երբ է սկսվելու վերապատրաստումների մյուս փուլը, ես էլ մասնակցեմ»: Չգտում կա, որ իրենք էլ իրենց մակարդակը բարձրացնեն:

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- Այն դպրոցները, որոնք ներկայացրել էին վերապատրաստման համար ուսուցիչներ, նրանք մեծ շահագրգռվածությամբ ցանկություն են հայտնել նորից մասնակցել վերապատրաստմանը, որովհետև այդ ուսուցիչները իրենց հետ հսկայական նյութեր են տարել, և մենք տեղյակ ենք, որ այդ նյութերը կիրառվել են, բազմացվել են և բաժանվել մյուսների մեջ, այսինքն գործընթացը արդյունավետ է եղել:

Սա հատկապես կարևոր է այն դպրոցների համար, որոնք իրենց իրավաբանական կարգավիճակով կրթահամալիր են և ԱԴ-ից բացի իրենց կազմում պահպանելու են

նան հիմնական դպրոցը (փորձնական ծրագրում այդպիսի միայն Վարդենիկի թիվ 2 դպրոցն է):

- Վերապատրաստման ընթացքում այլ ավագ դպրոցների գործընկերների հետ շփումների և փորձի փոխանակման հնարավորությունը, կապերի հաստատումը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Անկախ արդյունքներից, շատ կարևոր մի բան կատարվեց: Ուսուցիչներին համեմատվելու հնարավորություն էր ընձեռվել: Վերապատրաստման էին եկել տարբեր բնակավայրերից և տարբեր դպրոցների ուսուցիչներ: Վերապատրաստման ամենամեծ արժեքը ես սա եմ համարում՝ շփվեցին Գավառի, Երևանի, Արագածոտնի մանկավարժներ:

Ուսուցիչներ.

- Վերապատրաստումների ժամանակ շատ լավ էր, որ ունեցանք մասնագիտական շփումներ, դա մեզ հնարավորություն տվեց ծրագրի հետ կապված ինչ-որ նորություններ քննարկել, մենք ներկայացրեցինք ծրագրի մասին մեր կարծիքը: Մենք այնտեղ համագործակցում էինք, ոչ թե աշխատում էինք առանձին-առանձին, այլ համախմբված մեր կողմերի հետ: Դա շատ օգտակար էր, և մինչև հիմա էլ մենք կապված ենք մյուս ավագ դպրոցի իմ կողմերի հետ, միշտ մտքեր ենք փոխանակում, օգնում ենք մեկու մյուսին և այդ առումով նույնպես շատ օգտակար էր:

- Նաև մյուս դպրոցներից մեր գործընկերների հետ շփվեցինք, փորձի փոխանակում անցկացվեց: Նոր մեթոդներն էինք քննարկում, յուրաքանչյուր ուսուցիչ իր նոր նախաձեռնությունն էր ներկայացնում:

- Կապը կա մինչև հիմա, նույնիսկ խմբերով, մենք՝ ավագ դպրոցի մասնագետներս, իրար հետ կապ ունենք, տեսնվում ենք, շատ լավ է, և շատ շնորհակալ ենք դրա համար:

- Այդ դասընթացներից ես առավել կարևորում եմ մասնագիտական շփումները, մյուս դպրոցների մեր գործընկերների հետ փորձի փոխանակման, մտքերի փոխանակման հնարավորությունը, քննարկումները, որն ունեցանք այդ ընթացքում: Նաև կապերը մեր գործընկերների հետ, որոնք ստեղծվեցին այնտեղ և որոնք մենք պահպանում ենք, միմյանց հետ խորհրդակցում ենք հեռախոսով: Դա շատ հետաքրքիր և ուսանելի է լինում, երբ ծանոթանում ես, թե ինչ խնդիրներ են նրանց մոտ ծագում, արդյոք նույն խնդիրներն են, ինչ դու ես ունեցել, ինչպես են նրանք դրանք հաղթահարել, քո փորձն էս նրանց պատմում, նրանց կարծիքն է քեզ ինչ-որ բան հուշում, քո փորձն է նրանց օգտակար լինում: Ես սա շատ եմ կարևորում: Ցավոք, մենք միմյանց հետ շփվելու ուրիշ հնարավորություն չունենք, բացի այդ վերախառնաստման դասընթացներից:

- Դպրոցի տնօրինության և սովորողների կողմից ուսուցիչների աշխատանքի նկատմամբ պահանջների բարձրացման հնարավորությունը

Տնօրինության ներկայացուցիչ.

- Այն ուսուցիչները, ովքեր անցան վերապատրաստում, գոհ էին դրա արդյունքներից: Եվ դպրոցի համար էլ, իհարկե, անհրաժեշտ և օգտակար էր նրանց վերապատրաստումը: Հիմա ես արդեն համարձակ կարող եմ ուսուցչին ասել՝ ինչու՞ համակարգիչ չես օգտագործում, տես ինչ հնարավորություններ է տալիս քեզ: Այլևս չի կարող ասել, թե ես համակարգիչ չգիտեմ: Գնացել ես վերապատրաստման: Սա էլ քեզ համակարգիչը, լրիվ քո տրամադրության տակ է, օգտագործիր: Եվ օգտագործում են:

➤ **Վերապատրաստման բացասական արդյունք և ազդեցություն**

- Ուս.տարվա ընթացքում վերապատրաստմամբ պայմանավորված դասացուցակների փոփոխություն և ուսուցիչների լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Այդ վերապատրաստումները մեր դպրոցի վրա ազդեցություն, անշուշտ, ունեցել են, որովհետև ուրբաթ և շաբաթ օրերին դասերը խաթարվում էին: Եթե ավտոբուսը գալիս կանգնում է դպրոցի մուտքի մոտ, ինչ կարող ես անել: Ուրբաթ օրերին դասերը կես ժամով էինք անցկացնում, իսկ շաբաթ օրերին երկու ամիս շարունակ դաս չարվեց, ես այդ դասերը տեղափոխեցի շաբաթվա մյուս օրերին: Շաբաթ օրվա դասերը անում էին շաբաթվա մյուս օրերին ռոտացիոն կարգով, այսինքն՝ այս շաբաթ երկուշաբթի շաբաթ օրվա դասերն արեցին, հաջորդ շաբաթ՝ երեքշաբթի և այդպես շարունակ: Ստիպված էի այդպես անել, որպեսզի կարողանանք 34 ժամն ապահովել:

Ուսուցիչ.

- Նաև ժամանակն էր անհաջող ընտրված՝ ուսումնական տարվա կեսին. և՛ դասերն էին տուժում, և՛ մենք էինք շատ լարված: Այստեղ՝ դպրոցում բոլորովին նոր ուսուցման համակարգ էր ներդրվել, որը մեզնից առավել մեծ աշխատանք և ջանք էր պահանջում, վերապատրաստման ընթացքում էլ ռեֆերատների վրա աշխատանք, ավարտաճառերի կազմում: Շատ ծանրաբեռնված և լարված էին այդ երկու ամիսները: Նաև չմոռանանք, որ վերապատրաստողները հիմնականում կանայք էին, ինքներդ գիտեք, ինչ է նշանակում կնոջ համար կիրակի օրերին տանը չլինել, այն էլ մի քանի շաբաթ շարունակ: Կարծում եմ, ավելի նպատակահարմար կլինեք, եթե վերապատրաստումն անցկացնեին նախապես, մինչև ուսումնական տարին սկսվելը: Այդպես և՛ լարվածությունն այդքան մեծ չէր լինի, և՛ դպրոցի դասացուցակը չէր խախտվի, և՛ մենք ավելի վստահ կսկսեինք ուսումնական տարին:

➤ **Վերապատրաստման լրացուցիչ կարիքներ**

Վերապատրաստման առկա կարիքները կապված են

- նոր հրատարակված առարկայական դասագրքերին առնչվող վերապատրաստումներին, արտասահմանյան վերապատրաստումներին,

- ԱԴ ուսուցիչների մանկավարժական փորձի փոխանակման և նրանց միջև համագործակցությանն ուղղված վերապատրաստումներին,
- արհեստագործական ավագ դպրոցում հոսքային առարկաների գծով ուսուցիչների վերապատրաստումներին,

Տնօրինության ներկայացուցիչ.

- Վերապատրաստումը կոնկրետ մեր հոսքին ամեննին էլ պետք չէր: Մեզ համար այս տարի ավելի կարևոր էր հոսքային առարկաների ուսուցիչների վերապատրաստումը: Այսինքն՝ աղջիկների խմբի համար հագուստի մոդելավորում և դիզայն առարկայի ուղղությամբ կարելի էր գոնե որպես կերպարվեստ վերապատրաստել մասնագետին: Բայց դա չի կազմակերպվել, և ինձ շատ անհանգստացնում է, որ այս տարի նույնպես այդ մասնագետների համար, որոնք իրենք են տանում հոսքը, վերապատրաստում չի կազմակերպվելու: Իսկ դա շատ կարևոր է: Եթե հոսքային ուսուցում է, ուրեմն, վերապատրաստում պետք է անցնեն հոսքի համապատասխան առարկաների ուսուցիչները՝ արվեստի, կերպարվեստի, դիզայնի: Բայց այն ուսուցիչները, ովքեր անցան վերապատրաստում, գոհ էին դրա արդյունքներից:

- ԱԱԴ ուսուցիչների տարիքային հոգեբանության և երեխաների հոգեբանության խորը գիտելիքների վերապատրաստմանը:

Վերջինիս կարևորությունը և կարիքը նշվում է և՛ տնօրենների, և՛ ուսուցիչների, և՛ ծնողների, և՛ սովորողների կողմից: Դա պայմանավորված է նաև ԱԱԴ ձևավորման այն առանձնահատկությամբ, որ ավագ դպրոցում հավաքվում են տարբեր դպրոցներից տեղափոխված, տարբեր սոցիալիզացիա անցած դեռահաս տարիքի սովորողներ, որոնց հետ արդյունավետ հաղորդակցություն հաստատելը և կրթական արդյունավետ գործընթաց ապահովելը ԱԴ ուսուցիչներից լրացուցիչ ուշադրություն և ջանքեր է պահանջում:

Ուսուցիչ.

- Երբ հավաքած դասարան կլինի, ես ինքս՝ փորձ ունեցող ուսուցիչ երկրնտրանքի առջև կհայտնվեմ: Տարբեր դպրոցներից, տարբեր բնավորություններով, տարբեր դաստիարակությամբ, տարբեր ունակություններով երեխաներ՝ ինչպես եմ կարողանալու նրանց հավաքել, կենտրոնացնել: Մենք այդ փորձը դեռ չունենք: Հիմա, երբ հարևան դպրոցից նոր աշակերտներ են գալիս, թեկուզ չորս աշակերտ, իրենք են գալիս՝ կարող են լինել չսովորող, անուշադիր, չեն կարդում, չեն սովորում, կամաց-կամաց նա ադատպացվում է, արդեն սովորում է: Բայց եթե ամբողջ մի դասարանն է տարբեր դպրոցներից, այստեղ արդեն շատ մեծ խնդիր կա: Պետք է հոգեբան-մանկավարժ լինես, որ կարողանաս դասարան ստեղծել: Դա շատ դժվար է: Նման դասընթացները միշտ էլ պետք են, բայց ազատ ժամանակ:

Վերապատրաստման գործընթացի բովանդակային և կազմակերպչական հարցերի շուրջ իրենց դիտողությունները և առաջարկները վերապատրաստվող ուսուցիչները հնարավորություն են ունեցել արտահայտել նաև վերապատրաստման ընթացքում՝ ՀՊՄՀ կողմից իրականացված մոնիթորինգի

թերթիկների լրացմամբ: Ըստ ՀՊՄՀ ներկայացուցչի, վերապատրաստվողները արտահայտել էին հետևյալ կարիքները.

- Մեթոդները ու գնահատման նորագույն եղանակները պրակտիկ կիրառության մեջ տեսնելու կարիք (պրակտիկ դասալսման ականատես լինելու անհրաժեշտություն, որտեղ դասախոսը կպարապի նորագույն տեխնոլոգիայով, նորագույն գնահատման ձևերով և կցուցադրի դրանց կիրառությունը վերապատրաստվողներին)

ՀՊՄՀ-ն նախատեսում է վերապատրաստման հետագա փուլերում ներառել պրակտիկ ցուցադրական դասերի անցկացումը, ինչը կարևոր առաջընթաց կլինի ոչ միայն վերապատրաստման, այլև ԱԱԴ-ների արդյունավետության համար:

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- Ցուցադրական դասերը մենք անելու ենք, հիմա մշակում ենք հաջորդ փուլի ծրագրերը՝ հաշվի առնելով ուսուցիչների բոլոր ցանկությունները:

- Ուսուցիչների գործուղում արտերկիր
- Արտերկրի կրթական համակարգերը և դրանց առաջավոր փորձը ներկայացնող մասնագետների կողմից իրականացվող վերապատրաստողներ
- Տեղերում՝ այսինքն դպրոցներում, իրականացվող վերապատրաստումների նպատակահարմարություն:

Վերապատրաստման մարզային կարճատև դասընթացների կարիքի մասին մատնանշում է նաև ՀՊՄՀ ներկայացուցիչը: Այդպիսի դասընթացների կարիքը նա հիմնավորում է ուսուցիչների մասնագիտական զարգացումը՝ որպես անընդհատ գործընթաց պահելու անհրաժեշտությամբ:

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- Միջազգային ստանդարտներով, ցանկացած վերապատրաստում անցած ուսուցիչները պետք է անցնեն նաև պարբերական 3-4-օրյա կարճատև դասընթացներ: Մենք նախատեսում ենք որակավորման բարձրացում անցած ուսուցիչների հետ կարճաժամկետ՝ 2-4 օրով վերապատրաստումներ իրականացնել, որպեսզի չմոռացվի ինֆորմացիան՝ թեկուզ գործուղելով վերապատրաստող դասախոսներին:

ՀՊՄՀ ներկայացուցիչը վերապատրաստման առնչությամբ արձանագրել է նաև ԱԱԴ-ների տնօրենների և ուսուցիչների կողմից որոշակի անպատասխանատու մոտեցում գործընթացի նկատմամբ, և այս թերությունների շտկման նպատակով առաջարկում էր վերապատրաստվող ուսուցիչների ընտրության մեխանիզմ մշակել:

ՀՊՄՀ ներկայացուցիչ.

- Կցանկանայինք ուսուցիչների մասնակցությունը լինելը ընտրությամբ, քանի որ տնօրենները ում ուզում ուղարկում են, և երբեմն նկատվել են դեպքեր, որ տնօրենը ոչ թե իր, այլ ուրիշ դպրոցի ուսուցիչ է ուղարկել իր դպրոցի անունով: Բնականաբար, ում իրենք ուղարկել են, մենք նրանց վերապատրաստումն իրականացրել ենք: Բայց ավելի արդյունավետ, նպատակահարմար կլիներ, եթե մենք ընտրության հնարավորություն ունենայինք. ամեն դպրոցից 2-3 ուսուցիչ գար, մենք ընտրեինք մեկին: Սա ուսուցիչների պատասխանատվությունը կբարձրացներ:

Նշված մեխանիզմը, իհարկե, կարող է որոշակիորեն բարձրացնել վերապատրաստման գործընթացի արդյունավետությունը, սակայն դա չի կարող արդյունավետ ազդեցություն ունենալ ավագ դպրոցների կայացման վրա, քանի որ պարզ չէ, թե վերապատրաստում չանցած ավագ դպրոցի ուսուցիչները հետագայում ինչպես պիտի աշխատեն:

Վերապատրաստման արդյունավետության բարձրացման հնարավորությունը տնօրեններից մեկը տեսնում էր դպրոցի կողմից վերապատրաստման պատվերի ձևավորման և հետագա վերահսկման մեջ.

Տնօրեն.

- Ես շատ կուզեի, որպեսզի վերապատրաստումը մենք պատվիրենք: Թող նախարարությունը վճարի, բայց պատվերը վերապատրաստման մենք ձևավորենք: Մենք այսօր կարիք ունենք տարբեր տիպի վերապատրաստումների, ասենք, ֆիզիկայի ուսուցիչներին որոշակի ուղղությամբ, կամ պատմության ուսուցիչներին: Որովհետև ամեն մի առարկայի բնագավառում ինչ-որ պրոբլեմ է առաջանում, և դրա մասնագետները կան և՛ մանկավարժական ինստիտուտում, և՛ համալսարանում, և՛ ԿԱԻ-ում, պարզապես մենք պետք է պատվիրենք, և մենք էլ վերահսկենք դրա արդյունքը: Թե չէ նրանք գնացին, այնտեղ ինչ-որ ժամեր անցկացրեցին, եկան: Ես կուզեի, որ այդ վերապատրաստմանը գնան, նստեն, և հետո ասեն, շատ գոհ եմ, շնորհակալ եմ, շատ ապրեք, որ ինձ այդ օգնությունը ցույց տվեցիք:

Վերապատրաստման ժամանակահատվածի ընտրության առնչությամբ ևս ԵՊՄՀ-ն դժգոհություններ արձանագրել է, սակայն ելնելով վերապատրաստման հաջորդ գործընթացների փորձից, որն անցկացվել է 2009 թ. ամառային արձակուրդների ընթացքում՝ համարում է, որ վերապատրաստման ժամանակահատվածը, երբ էլ լինի՝ միևնույն է, ուսուցիչները գոհ չեն լինելու: Ուսուցիչների կողմից ամառային շրջանում ի հայտ եկած դժգոհությունները կապված են իրենց արձակուրդների զբաղեցման հետ: Այդուհանդերձ, ըստ նրա դիտարկման, ուսուցիչների ազատ շրջանում՝ արձակուրդների ընթացքում դասընթացների արդյունավետությունը ավելի բարձր էր:

Գործողություն 7.

Փորձնական ավագ դպրոցներին տեղեկատվական-խորհրդատվական աջակցություն

2008 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին ՀՀ ԿԳ նախարարությունում կազմակերպվել են խորհրդակցություններ՝ ըստ մարզերի ավագ դպրոցների և դրանց հարակից հիմնական դպրոցների տնօրենների, մարզային կրթության վարչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդակցության ժամանակ քննարկվել են տարբեր կազմակերպչական հիմնահարցեր: Հետագայում խորհրդատվական 2 հանդիպումներ կազմակերպվել են միայն փորձնական 10 դպրոցների տնօրենների հետ: Վերոնշյալ հանդիպումներից բացի տեղի են ունեցել այլ հանդիպումներ: Տնօրեններին հուզող ցանկացած ընթացիկ խնդիր պարզաբանվել է ԿԳ նախարարության հանրակրթության վարչության և ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից:

Փորձնական 10 դպրոցների տնօրենները կարևորում են խորհրդատվական-տեղեկատվական աջակցությունը, այդ թվում՝ ծագած խնդիրների կամ օպտիմալ լուծումների վերաբերյալ իրենց փորձի փոխանակումը հետագա տարիներին վերակազմակերպվեղ ավագ դպրոցների տնօրենների հետ:

Այսպիսով, փորձնական դպրոցներին աջակցող կողմերն են հանդիսացել.

- ՀՀ ԿԳ նախարարությունը, մասնավորապես. փոխնախարարը և հանրակրթության վարչությունը,
- ԿԾԿ ԾԻԳ-ը
- ԿԱԻ
- Մարզային կրթության վարչությունները
- Մյուս ավագ դպրոցների կոլեգաները:

Գործողություն 8.

Ծրագրի լուսաբանման աշխատանքների կազմակերպում

Փորձնական ծրագրի լուսաբանման աշխատանքներն իրականացվել են «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի լուսաբանման շրջանակներում: 2008-ից մինչ այժմ «Ազգ», «Երկիր», «Հայոց աշխարհ» թերթերում տպագրվել են բազմաթիվ հոդվածներ, «Կենտրոն» հեռուստաընկերության կողմից հեռարձակվել են մի շարք հեռուստահաղորդումներ՝ նվիրված առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման տարբեր հիմնախնդիրներին: Ցուցադրվել է այդ դպրոցների մասին փաստագրական ֆիլմ: Տեղեկատվություն է տարածվել նաև մարզային հեռուստաընկերությունների և տեղական մամուլի միջոցով:

Լուսաբանման նպատակն էր ավագ դպրոցի ռազմավարության մասին ճշգրիտ տեղեկատվության տարածումը հանրության շրջանում: Լուսաբանման աշխատանքներին անմիջապես մասնակցել են նաև փորձնական ավագ դպրոցների տնօրենները՝ հեռուստահաղորդումներին մասնակցելով և հարցազրույցներ տալով: Սակայն միանշանակ կարելի է նշել, որ այդ աշխատանքները բավարար չէին ոչ միայն ավագ դպրոցների կոլեկտիվներին, այլ նաև հանրությանը: Դա կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ մի կողմից՝ ավագ դպրոցների ձևավորման մասին ոչ պաշտոնական տեղեկատվական հոսքերը նախորդել են կատարված քայլերին, մյուս կողմից՝ ծրագրային նախագծման և վերանախագծման արդյունքում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել, այնինչ հանրությունը շարունակել է առաջնորդվել նախնական մտադրությունների մասին տեղեկատվությամբ: 2009 թվականի ապրիլին մամուլում հայտնվել էր տեղեկություն Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի բնակիչների անհանգստության և դժգոհության մասին, թե իրենց ավագ դասարանների աշակերտները ստիպված են Մեծամորի ավագ դպրոց հաճախել: Այնինչ անհանգստությունը անհիմն էր, քանի որ ԱԱԴ ծրագրով նախատեսված է, որ գյուղական համայնքների միակ դպրոցները շարունակում են մնալ միջնակարգ դպրոցներ՝ պահպանելով ավագ դասարանները («Իրարանցում Ակնալիճի դպրոցում», Առավոտ օրաթերթ, 2009.04.04): Միայն այս հանգամանքը ակնհայտ է դարձնում, որ հանրությունը՝ և՛ բնակչությունը, և՛ ՋԼՄ ներկայացուցիչները թերի են տեղեկացված ավագ դպրոցների կազմավորման նախատեսված քայլերի և դրա նպատակների մասին:

Գործողություն 9.

Ծրագրի ընթացիկ վերահսկողություն և գնահատում

Փորձնական ծրագրի ընթացիկ վերահսկողությունը ՀՀ ԿԳ նախարարության իրավասությունն էր, որը մասնակիորեն կատարվել է: Առաջացած ընթացիկ հարցերը լուծում են ստացել ԿԳ նախարարության համապատասխան պատասխանատուների և դպրոցների տնօրենների կողմից: Գնահատումը նախատեսված էր կատարել միայն 2008-2009 ուստարվա ավարտին, որի շրջանակներում էլ պատրաստվել է սույն հաշվետվությունը:

ԱԱԴ ՓԾ լոկալ մակարդակի գործողություններ

Լոկալ կամ ԱԱԴ մակարդակի գործողությունները այն գործողություններն են, որոնք ընթանում են ԱԱԴ-ների ներսում և մեծամասամբ հենց ԱԱԴ տնօրինության վերահսկողության ներքո:

Ընտրված դպրոցների վերանորոգում, կահավորում, համապատասխան նյութատեխնիկական պայմանների ստեղծում

➤ Շենքային վերանորոգման աշխատանքների իրականացումը և դրանից բավարարվածություն

Շենքային հիմնանորոգման բաղադրիչի հիմնական նպատակն էր ավագ դպրոցների շենքային պայմանների ֆունկցիոնալ ապահովումը և բարելավումը, հետևաբար դրա մոնիթորինգն ու գնահատումն իրականացվել է ոչ թե շինարարական աշխատանքների գործընթացի, այլ արդյունքի տեսանկյունից, այն է՝ թե որքանով են առկա վերանորոգման աշխատանքները, որքանով են պահպանված, ինչպիսի ազդեցություն են ունեցել փորձնական ծրագրով 10 դպրոցների կայացման վրա և որքանով են բավարարում շահագրգիռ և շահառու կողմերին:

Առանձին ավագ դպրոցների հիմնանորոգման ողջ գործընթացը համակարգվել է ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից: Շին.աշխատանքները նախագծվել են Երևանի նախագծային ինստիտուտի կողմից: Իրականացնող կապալառու կազմակերպությանը մրցութային կարգով ընտրել է Քաղաքաշինության նախարարությունը: Յուրաքանչյուր դպրոցում աշխատանքներն ընթացել են տարբեր ուղղություններով, ֆինանսական ներդրման տարբեր ծավալներով: Դպրոցները շինարարական կոնկրետ աշխատանքների իրականացման մեջ տարբեր մասնակցության աստիճան են ունեցել:

➤ Հիմնանորոգման նշանակություն, ազդեցություն, բավարարվածություն, պահպանություն

Շենքային պայմանների հիմնանորոգումը սկսվել և ամբողջական տեսքի է բերվել 10 ԱԱԴ-ներից միայն 1-ում, նորոգումը ընթացքի մեջ է 7-ում, որոնցից 1-ում հիմնական աշատանքներն ավարտված են՝ 3 մասնաշենքերից 2-ը հիմնանորոգված են: ԱԱԴ-ներից 2-ում տնօրինության ներկայացուցիչներին ընթացիկ աշխատանքների որակն արդեն իսկ չի բավարարում, 1 դպրոցում շինարարական աշխատանքների սխալ հաջորդականությամբ իրականացման հետևանքով առկա է կրկնանորոգման կարիք և 1-ում էլ հիմնական աշխատանքները բոլորովին վերջերս են սկսվել՝ 2009 թ. ամռանը: Բոլոր 10 ԱԱԴ-ներում կատարվելիք շինարարական աշխատանքները առաջնահերթ նշանակություն ունեն ԱԱԴ արդյունավետ գործառնության տեսանկյունից՝ թեև

որոշ դպրոցներում նույնիսկ դրանք ավարտելուց հետո բավարար չեն ամբողջովին ֆունկցիոնալ շենքային պայմաններ ունենալու համար:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Վերանորոգումը շատ մեծ նշանակություն ունեցավ: Նախ, շենքը, դասասենյակները, կարելի է ասել, ավելի պայծառացան, արտաքին տեսքը շատ հաճելի է, իլափեղքերով դռների, պատուհանների սովորական թույլ չի տալիս, որ դրսի աղմուկը ներս թափանցի, ավելի ճաշակով, ավելի արդիական, եվրոստանդարտներին համապատասխան, շատ հաճելի է: Երրորդ հարկում առանձնացվեցին սենյակներ լաբորատորիաների համար, որը խիստ կարևոր և անհրաժեշտ էր ուսումնական նորմալ գործընթաց ապահովելու համար: Հիմնական շեշտը այս վերանորոգմամբ դրված էր հենց դրա վրա՝ որպեսզի նպաստի ավագ դպրոցի կայացմանը: Հիմնականում արվել է այն, ինչ խիստ անհրաժեշտ էր դպրոցին, այսօր մեր շենքը՝ որպես ավագ դպրոցի շենք, էս կայացած էմ համարում:

Ծնողներ.

- Երեխաները սովորում են նոր վերանորոգված, մաքուր, լուսավոր տաք դասասենյակներում: Դա շատ կարևոր է ներկայիս պայմաններում: Եթե դա կա, մնացածի մասին արդեն ավելորդ է խոսել:

Սովորողներ.

- Աստիճաններն են սալիկապատել, բայց դա այնքան էլ հարմար չէ, որովհետև կարելի է ընկնել:

➤ Շենքային պայմանների կամ նորոգումների լրացուցիչ կարիքներ

ԱԱԴ-ները իրենց հետագա կարիքներում ընդգծում են ֆիզկուլտդահլիճների և հանդիսության դահլիճների անհրաժեշտությունը:

Ծնողներ.

- Ես ուզում եմ ասել, եթե կարելի է, ինչ-որ ծրագրերով ֆիզկուլտուրայի դահլիճը մի քիչ ընդարձակվեր: Տղա երեխա են, նեղվում են, իրենք ահռելի ուժ ունեն, պոտենցիալ, ուզում են վազել, հարմար չէ, մի քիչ փոքր է դահլիճը: Մանավանդ, որքան գիտեմ, այս սեպտեմբերից ֆիզկուլտուրայի ժամաքանակը ավելանալու է:

- Մեր երեխաների համար կարևոր մեկ այլ խնդիր էլ կա՝ մեր դպրոցը մարզադահլիճ չունի, կցանկանայինք, որ մարզադահլիճ կառուցվեր: Ճիշտ է, մեր երեխաներն արդեն ավարտում են, արդպես էլ չունեցան մարզադահլիճ, չնայած դպրոցի պայմանները նրանց ուսման տարիներին բավականին բարելավվել են՝ տնակային պայմաններից եկան քարի շենք: Բայց գոնե նրանցից հետո սովորողները թող լավ մարզադահլիճ ունենան: Դա շատ կարևոր է ամբողջ տարի նորմալ ֆիզկուլտուրայի դասեր անցկացնելու համար:

ԱԱԴ-ները տարբեր մասնակցության աստիճան են ունեցել հիմնանորոգման ենթակա կողմերը որոշելիս: Որոշ դպրոցների տնօրեններ կարողացել են բանակցել և իրենց տեսակետները առաջ տանել: Իսկ այն դեպքերում, երբ դա չի հաջողվել, դա նրանց հետագա բավարարվածության համար բացասական գործոն է հանդիսացել: Շինարարական աշխատանքների ձգձգումը ևս դժգոհության առիթ է որոշ դպրոցների համար, քանի որ դա խոչընդոտում է ավագ դպրոցների լիարժեք գործառնությանը:

➤ **Ռեսուրս կենտրոն/գրադարանների նորոգում, տրամադրված գույքի, գրականության, համակարգիչների առկայություն, կիրառություն**

Ռեսուրս կենտրոնները 3 փորձնական ավագ դպրոցներում դեռևս նորոգված չեն, 3-ում համակարգիչները և գույքը մասնակի են տեղադրված և/կամ միացված չեն, մնացյալ 4-ում ռեսուրս կենտրոնները նորոգված են, գույքը տեղադրված է և կիրառվում է ուսումնական պրոցեսում: Մեկ դպրոցում էլ ռեսուրս կենտրոնը գործում է մասնակիորեն, քանի որ նախատեսված գույքի մի մասը տեղադրված է համակարգչային լսարանում: Փորձնական 10 ավագ դպրոցներից 6-ն ունեն ռեսուրս կենտրոնների առանձին աշխատակիցներ: Թեև բոլոր փորձնական դպրոցները չէ, որ գործող ռեսուրս կենտրոններ ունեն, բայց բոլորն ունեն համակարգչային դասասենյակներ: Ինտերնետային կապը ևս ոչ բոլոր դպրոցներին է հասանելի, սակայն այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ, իսկ այդ դպրոցներից մեկը ինքնուրույն է ձեռք բերել ինտերնետ կապը՝ տնօրենի անձնական միջոցների հաշվին: Ինտերնետի առկայության նշանակությունը շատ բարձր է գիտակցվում բոլոր դպրոցների տնօրենների կողմից, և ինտերնետ կապ ունեցողները այն լայնորեն կիրառում են և՛ դասապրոցեսի ընթացքում, և՛ դպրոցի կազմակերպչական հարցերում: Հետագա կարիքները կապված են ինտերնետ կապի որակի հետ, որը թույլ կտա ավելի շատ համակարգիչներ միացնել ինտերնետ կապին և այն լիարժեք կիրառել ուսումնական պրոցեսում:

Փորձնական դպրոցներից մեկը ռեսուրս կենտրոնում կազմակերպում է նաև *մասթեր-կլաս*, այստեղ հյուրընկալվում են հայտնի մարդիկ և թեմատիկ գրույցներ ունենում սովորողների հետ:

Դպրոցներին տրամադրված գրականությունից գոհունակությունը բարձր է, սակայն դրանք որոշ դեպքերում չեն համապատասխանել դպրոցների նախնական կարիքներին և նրանց կողմից ուղարկված ցուցակներին: Հատկապես մեծ են հայերեն գրականության կարիքները, այնինչ դպրոցները ստացել են հիմնականում օտարալեզու գրքեր: Անհրաժեշտ են համարվում նաև հայերեն ծրագրերը և էլեկտրոնային լրացուցիչ նյութերը, որոշ դպրոցներ նաև մասնագիտական ուղղվածությամբ գրականության կարիքներ ունեն:

ԱԱԴ-ներից մեկը տրամադրված համակարգիչների որակի թերություն և համակարգչային սեղանների անհամապատասխանության խնդիր է արձանագրել: Համակարգչային սեղանների թերությունը կայացել է «համակարգչային բլոկի» համար անհրաժեշտ օդափոխության հնարավորության բացակայությունը, որի պատճառով սերվերի անսարքություն է ծագել: Իսկ համակարգիչների թերությունը կապված է եղել դրանց հովացման համակարգի ոչ ճիշտ տեղադրության հետ: Նյութատեխնիկական միջոցներից ընդհանուր բավարարվածությունը բարձր է, սակայն այլ տեխնիկական միջոցների, կոնկրետ սարքերի կարիքներ դեռևս առկա են: Եղած միջոցները մասամբ են բավարարում ուսուցիչների և սովորողների պահանջները:

Գործողություն 11.

ԱԴ ուսուցիչների ընտրություն և ընդգրկում

ԱԴ փորձնական ծրագրի նախագծով չի նախատեսվել, սակայն փաստացիորեն դպրոցների տնօրինության կողմից իրականացվել է ԱԴ-ում դասավանդող ուսուցիչների ընտրության և ընդգրկման գործընթաց (ինչպես նշվել է գործողություն 5-ում): Ներքին կադրերից ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով ԱԴ-ում դասավանդելու ուսուցիչների փորձը և նրանց մասնագիտական պատրաստվածությունը: Բոլոր 10 փորձնական դպրոցներում հոսքային մասնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչները նախկինում ունեցել են ավագ դպրոցում աշխատելու փորձ: ԱԴ ուսուցիչների ընտրության գործընթացում 10 դպրոցներից մեկը նաև իր ներքին կադրերի ընտրություն է իրակացրել՝ աշխատանքից ազատելով 3 և փոխարենը հարակից դպրոցներից հրավիրելով 9 ուսուցիչ:

➤ **Կրկնուսույցների ներգրավում ավագ դպրոցում,**

կադրային կարողությունների համապատասխանեցում

Ընդհանուր առմամբ 6 դպրոց ընդգրկել են ուսուցիչներ այլ դպրոցներից՝ պայմանավորված առարկաների կամ ժամաքանակի ավելացմամբ: Ընգրկված ուսուցիչներին հրավիրելու գործոն է հանդիսացել նրանց հեղինակությունը որպես ուսուցիչ և որոշ դեպքերում՝ որպես կրկնուսույց: Կրկնուսուցման փորձով ուսուցիչների ընդգրկումը միանշանակ օգտակար է համարվում շահառուների կողմից: *Ուսուցիչ կրկնուսուցման փորձը և արդյունավետ կրկնուսույցի համբավը* նաև ավագ դպրոցների նկատմամբ վստահության կարևոր գործոն է:

Չնայած դրան, ոչ բոլոր տնօրեններն են միանշանակ դրական վերաբերում կրկնուսույց-ուսուցիչների ընդգրկմանը, այն հիմնավորմամբ, որ արդյունավետ

կրկնուսույցները ոչ միշտ են արհեստավարժ իբրև առարկային տիրապետող ուսուցիչներ:

Կրկնուսույցների և առհասարակ բարձր մասնագիտական կարողություններով ուսուցիչների ներգրավման հարցում խոչընդոտ են հանդիսանում հետևյալ գործոնները.

- Կրկնուսույցների համար ոչ փոքր խմբերի հետ աշխատանքի դժվարությունները

Տնօրինության ներկայացուցիչ.

- *Օրինակ, քաղաքում շատ լավ մասնագետ ունենք, որը որպես կրկնուսույց շատ լավն է, հայտնի է, բայց դպրոցում չկարողացավ աշխատել: Եթե 5 աշակերտից ավելի է լինում, նա արդեն չի կարողանում աշխատել, չի կարողանում դասարան պահել:*

- Ավագ դպրոցներում կրկնուսուցման արգելքը (այս գործոնը նույնիսկ մի դպրոցում բարձր որակավորմամբ կադրերի արտահոսքի պատճառ է հանդիսացել)

Տնօրինության ներկայացուցիչ.

- *Մենք ունենք ուսուցիչներ, որոնք մասնավոր այդ գործընթացները դադարեցնելու հետևանքով գնացին ուրիշ դպրոցներ աշխատելու: Մաթեմատիկայի 2 ուսուցիչ, որ մեր նախկին ուսուցիչներն էին, որոնք տեղափոխվեցին այլ դպրոցներ, բայց համաձայնվեցին գոնե համատեղությամբ շարունակել մեզ մոտ, եկող ուստարում արդեն լրիվ թողեցին մեր դպրոցը: Պետք է ասել, որ դրանք մեր լավ ուսուցիչներն էին: Քար չեմ գցում, բայց ամեն դեպքում ցավալի է, նրանք հիմա արդեն չեն վերադառնա: Եթե եկող տարի մաթեմատիկայի ժամերն էապես փոխվեն, ուրեմն, մաթեմատիկայի ուսուցչի կարիք էլ ենք ունենալու: Եվ խիստ կասկածում եմ, որ մրցույթի միջոցով մեզ մոտ կգա լավ պատրաստված կադր:*

Ուսուցիչ.

- *Քաղաքում ունենք լավ մասնագետներ, որոնք շատ խիստ պարապում են անհատական: Եվ չնայած նրանք ունեն շատ լավ մասնագիտական տվյալներ, մեր տնօրենը նրանց չառաջարկեց դպրոց գալ հենց միայն անհատական պարապմունքների վրա կենտրոնացված լինելու պատճառով, քանի որ իրոք, ավագ դպրոցում աշխատող ուսուցիչը այնքան ծանրաբեռնված է, որ ես նույնիսկ կարող եմ ասել՝ դասդեկ էլ ի վիճակի չի լինելու: Կրկնուսուցումը նույնիսկ ֆիզիկապես հնարավոր չէ մեր ծանրաբեռնվածության պարագայում:*

- ԱԴ ուսուցիչների աշխատավարձի անբավարարությունը

Տնօրինության ներկայացուցիչներ.

- *Եկող ուսումնական տարում ես ունենալու եմ մաթեմատիկայի ուսուցչի խնդիր, նորից մրցույթ եմ հայտարարելու, բայց վստահ եմ, որ նույն պատկերն է լինելու: Որովհետև մեր վարձատրությունը ոչ մի կերպ համեմատելի չէ մասնավոր դասուսույցների*

վարձատրության հետ: Մենք փաստորեն ստիպում ենք մարդուն մասնավոր ոչինչ չանել, բայց դրա դիմաց տալիս ենք չնչին աշխատավարձ: Սա պրոբլեմ է:

- Այս խնդիրը միանշանակ ֆինանսական կողմ ունի՝ ուսուցիչը նվիրված աշխատում է, եթե նա մտել է դպրոց, մտել է դասարան, նվիրված աշխատում է, նրանք իրենց գործը սիրող մարդիկ են: Բայց ամեն դեպքում նրանց նյութականը նշանակություն ունի, իր դերն է խաղում: Եթե նրանք 10 աշակերտի հետ տանը պարապեին, էսպես ավելի շատ գումար կունենային, քան հիմա դպրոցում են ստանում: Ճիշտ է, նրանք ավել են ստանում, քան միջին դպրոցում աշխատող ուսուցիչները, բայց բոլոր դեպքերում այս ֆինանսական կողմը իր ազդեցությունն է ունենում:

- Կադրային քաղաքականության իրականացման ընդհանուր սկզբունքների, ուսուցիչների ընտրության, ինչպես նաև ուսուցիչների նկատմամբ պահանջների և նրանց աշխատանքի գնահատման չափանիշների բացակայությունը

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Մեզ անհրաժեշտ են չափանիշներ, որոնք թույլ կտան գնահատել մանկավարժի աշխատանքը և նրա կարողությունները: Մեր հանրակրթության համակարգում չկա ուսուցչին աշխատանքի ընդունելու մեթոդաբանություն, և երբևիցե չի եղել: Բսկ, օրինակ, Գերմանիայում, ուսուցիչը երկու տարի փորձաշրջան է անցնում՝ ստանալով աշխատավարձ, որից հետո գիմնազիայի տնօրինությունը նրան երաշխավորություն է տալիս, և այդ երաշխավորության հիման վրա նախարարությունը նրան ընդգրկում է ուսուցչական կադրերի բազայի մեջ: Մեզ մոտ նման բան գոյություն չունի: Մեզ մոտ կա դիպլոմ, դիպլոմը բերում՝ թափ են տալիս քթներիս առաջ, մենք էլ ընդունում ենք, իսկ հետո ասում, թե այս ինչ կրակի մեջ ընկանք...

Ես կարծում եմ, որ ավագ դպրոցի մանկավարժների մի նոր փուլ պետք է սկսվի, երբ կհասակեցվի դրա ռազմավարությունը՝ վերջապես, նպատակը և պահանջը: Իմ կարծիքով, ավագ դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կիսամյակը մեկ անգամ հանդես գա հոդվածով՝ գիտական, մեթոդական կամ հետազոտական: Սա պետք է լինի պարտադիր պահանջ: Մեր դպրոցում նախորդ տարիներին գործում էր մանկավարժական լաբորատորիա: Հիմա մտածում ենք այդ ավանդույթը վերականգնելու մասին, բայց վախ կա: Անհրաժեշտ է մշակել մի հատուկ սանդղակ, պետք է ընտրություն կատարել, մտածել գնահատման մի ձև: Եվ այստեղ կրկին եկանք նորմատիվ, օրենսդրական փաստաթղթերի հարցին: Անհրաժեշտ են չափանիշներ, որոնց հիման վրա ես կարող եմ մարդուն աշխատանքի ընդունել, չափանիշներ՝ նրա աշխատանքը գնահատելու համար: Օրինակ, ես պետք է կարողանամ մարդուն ասել, որ արդեն վեց ամիս լրացավ, իսկ դու դեռ հոդված չես ներկայացրել, սա քեզ համար մի նուս է, աշխատիր հաջորդ կիսամյակում այդ մի նուսն ուղղել, լրացնել:

- ՀՀ բոլոր ուսուցիչների կարողությունները բավարարում են, նրանց նկատմամբ դրված պահանջները չեն բավարարում: Օրինակ, այսօրվա վիճակով ուսուցչի առջև խնդիր չի դրված, ավագ դպրոցի ուսուցչի պարտականությունը ո՞րն է արդյունքի առումով: Նա արդյունքի համար պատասխանատվություն չի կրում բացարձակապես: Ոչ մի նորմատիվ

փաստաթուղթ չկա, որտեղ նշվի, որ եթե ուսուցիչը չի ապահովում, ասենք, այսինչ կարգի առաջադիմություն, ապա նա չի կարող աշխատել ավագ դպրոցում: Եվ այս առումով ուսուցիչն անում է այնքան, ինչքան չի կարող չանել:

Եթե բարձրացնենք պահանջը, Հայաստանի ուսուցիչների մոտ 80 տոկոսը այդ պահանջին կբավարարի: Ուղղակի չեն բարձրացնում, նա էլ չի ուզում: Դպրոցն էլ չի կարող, դպրոցն այդպիսի լիազորություններ չունի: Եվ երբ այսօր վերլուծություն եմ անում, որ 9-րդ դասարանում ԳԹԿ-ի քիմիայի գրավորից աշակերտների 30 տոկոսը ստացան անբավարար գնահատական, հետո ի՞նչ: Ես ի՞նչ կարող եմ անել այդ ուսուցչին: Ոչինչ, բացի մանկավարժական խորհրդում ի ցույց դնելուց, դիտողություն անելուց: Մենք չունենք նման լիցենզիա, որ մասնագիտական գնահատական տանք ուսուցչի աշխատանքի մասին, և ոչ պրոֆեսիոնալ բաներ են ստացվում: Իսկ ինչու ուսուցիչը չունենա հստակ ձևակերպված պատասխանատվություն՝ պայմանագրի մեջ, կամ այլ ձևով: Բայց պայմանագիրը հիմնված է օրենքների, կարգերի վրա, ես չեմ կարող երկնքից ինչ-որ պահանջներ մտցնել պայմանագրի մեջ, վաղը ուսուցիչը կասի, թե ինչի՞ց էլնելով ես դու այսպիսի պահանջներ մտցրել իմ պայմանագրում, ո՞րտեղ է գրված, որ ես պարտավոր եմ էքսկուրսիաներ կազմակերպել, ո՞րտեղ է գրված, որ ես պարտավոր եմ այս ուսուցչին փոխարինել, ո՞րտեղ է գրված, որ ես պետք է այս գրավորը ստուգեմ և այլն:

ԱՌ ուսուցիչների նկատմամբ պահանջների և նրանց աշխատանքի գնահատման սկզբունքների մշակումը առաջնահերթ նշանակություն ունի ինչպես ուսուցիչների օբյեկտիվ և համարժեք ընտրության, այնպես էլ ԱԱԴ-ների բարձր կրթական որակի ապահովման համար:

Ուսուցիչների ընտրության և հետագայում նրանց արդյունավետ գործառնության ապահովման նպատակով որոշ ԱԱԴ-ներ սեփական մեխանիզմներն են փորձել ձևավորել:

Որպես այդպիսիք մատնանշվում են.

- Ուսուցիչների աշխատանքային բնութագրերի կազմումը, որտեղ արտացոլվում են շահառուների արձագանքները ուսուցիչների աշխատանքի նկատմամբ:
- ԱԴ-ներում մեթոդավորումների/ մեթոդական մասնախմբի/ լաբորտորիաների /մասնագիտական սեմինարների ինստիտուտի վերագործարկումը, որի ընթացքում ուսուցիչները փորձի փոխանակման, մասնագիտական բանավեճի, նաև ԱԴ-ին առնչվող խնդիրների ընդհանուր լուծման հնարավորություն են ունենում:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Անցյալ տարի մենք ունեինք յոթ մեթոդական մասնախումբ, հաջորդ տարի էլ նույնչափ կամ ավել կունենանք: Ես միշտ պարտադրում եմ, որ կայանան մեթոդական մասնախմբի ժողովները, ձևական չլինեն, այլ տվյալ առարկայի ուսուցիչները փորձ փոխանակեն: Ես հաճույք եմ ստանում, երբ ասենք, մաթեմատիկայի ուսուցիչները մի խնդրի լուծման շուրջ կրիվ են տալիս, վիճում են: Կամ լեզվի ուսուցիչները միմյանց մոտ թերություններ են

գտնում և օգնում են շտկել, գրքեր են գտնում և բերում իրենց իրավացիությունն ապացուցելու համար, և դա իհարկե, նրանց մեջ է մնում: Ես նման իրավիճակը ողջունում եմ:

Ուսուցիչ.

- Մենք դպրոցում ունենք հատուկ օր և ժամ՝ չորեքշաբթի օրերը վեցերորդ ժամից հետո ավագ դպրոցի բոլոր ուսուցիչներս հավաքվում ենք տնօրենի կաբինետում, քննարկում մեզ մտահոգող բոլոր հարցերը, տեղյակ ենք լինում բոլոր հոսքերի և բոլոր ուսուցիչների մոտ ինչ խնդիրներ են ծագում, ինչ դժվարությունների են հանդիպում և միասին դրանց լուծման ճանապարհներ ենք փնտրում:

➤ Ուսումնամեթոդական նյութերի կիրառման պրակտիկա

Փորձնական ԱԱԴ-ները հազեցվել են ուսումնամեթոդական ձեռնարկներով, ծրագրերով, մասնագիտական ամսագրերով, ուղեցույցներով, գնահատման չափորոշիչներով, էլեկտրոնային նյութերով և այլն, որոնք լայնորեն կիրառվել են ԱԴ ուսուցիչների կողմից: Բոլոր դպրոցներում օգտվել են ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, մարզային կրթության վարչության կողմից տրամադրված նյութերից, ինչպես նաև վերապատրաստման ընթացքում ձեռք բերած բաշխման նյութերից: Որոշները կիրառում են նաև ինտերնետից ձեռք բերած նյութերը, մի քանի ԱԱԴ ունի նաև սեփական ուժերով ուսումնական նյութեր պատրաստելու փորձ՝ ներքին կիրառության նպատակով, մի ԱԱԴ-ում ուսուցիչները նաև գրախանութից սեփական միջոցներով են մասնագիտական գրականության ձեռք բերում, իսկ մյուսում ավանդույթ է, որ գրախանութից ձեռքբերված գրականության գումարը փոխանցում է դպրոցը: Ուսումնամեթոդական նյութերի և՛ նշանակությունը, և՛ կիրառության աստիճանը բարձր է գնահատվում բոլոր ԱԱԴ ուսուցիչների և տնօրինության ներկայացուցիչների կողմից: Սակայն այդ նյութերը բավարար չէին բարձր որակով ուսուցման ապահովման համար, քանի որ ***դեռևս չէր լուծվել հոսքային դասագրքերի հարցը***, ինչը ԱԱԴ կրթական որակի համար մեծ նշանակություն ունեցող գործոն է:

➤ Կադրային կարողություններից բավարարվածություն, կրկնուսուցման դիմելու պրակտիկա

Փորձնական ԱԱԴ-ների կադրային կարողությունները հիմնականում բավարարել են ԱԱԴ տնօրինության և շահառուների պահանջներին, բացառությամբ 3 դպրոցների: Սակայն իրենց գործառնության տեսակետից՝ սովորողներին նախամասնագիտական կրթության և բուհական քննություններին

նախապատրաստման առումով, ԱԱԴ կադրային կարողությունները լիարժեք չեն բավարարում շահառուների պահանջները: Բոլոր այն դեպքերում, երբ նույնիսկ ընդհանուր առմամբ սովորողները և նրանց ծնողները բավարարված են ԱԴ կադրերի կարողություններով, միևնույն է, դեռևս կան որոշակի գործոններ, որոնք ծնողներին դրդում են մտածել իրենց երեխաներին կրկնուսուցման տանելու մասին: Թեև 2008-2009 ուս. տարում քչերն են դիմել կրկնուսուցման օգնությանը, ծնողների մեծամասնությունը հնարավորության դեպքում հաջորդ տարի իր երեխային կրկնուսուցյի մոտ պարապել տալու պատրաստակամություն է դրսևորել:

Այսպիսով, կրկնուսուցմանը դիմելու պատրաստակամությունը պայմանավորող գործոններն են.

- ԱԴ ուսուցիչների կադրային կարողություններից անբավարարվածությունը

Ծնող.

- *Տեսեք, կրկնուսուցյի մոտ երեխաները գնում են շաբաթական երկու օր և սովորում են: Իսկ ավագ դպրոցում այդ նույն առարկան նրանք ամեն օր անցնում են: Կրկնուսուցյի մոտ դեռ մեկ տարին չի լրացել, որ պարապում է, բայց այնտեղ արդյունքը ստացվել է, իսկ դպրոցում շաբաթական 5 օր այդ առարկան անցնելով, արդյունք չի ստացվում: Հիմա ինչումն է պատճառը, ինչով դա բացատրենք: Մի գուցե ուսուցիչների ընտրության հարցն է: Հիմա մենք մեղքը բարդում ենք երեխաների վրա, ասում ենք, չեն սովորում, բայց մի գուցե ուսուցչի գործոնն էլ այդտեղ դեր ունի: Կա հնարավորություն, որ երեխան ինքն ընտրի ուսուցչին իր ընտրած առարկաների գծով: Այս դեպքում կստացվի նաև ուսուցիչների մրցակցություն, և ուսուցիչն էլ շահագրգռված կլինի աշխատել իր վրա, կատարելագործվել, որպեսզի իր մոտ շատ աշակերտներ հավաքվեն: Ինչու լավագույն ուսուցչի մրցույթ չանցկացնել:*

- Լսարանում սովորողների թվաքանակի մեծությունը

Ծնող.

- *Ինչու ավագ դպրոցը չի կիրառում նույն կրկնուսուցյների փորձը: Յուրաքանչյուր դասարանում լինի մաքսիմում 10 երեխա, որպեսզի ուսուցիչի հասցնի յուրաքանչյուրի հետ աշխատել:*

Առարկաների նախատեսված ժամաքանակի անբավարարությունը

Այս գործոնը առանձնահատուկ նշանակություն ունի մարզային ԱԱԴ-ների դեպքում, որտեղ սովորողների մեծ մասը տարբեր պատճառներով շարունակել է կրթությունը դպրոցի ձեռքբերած միակ հոսքում՝ այնինչ նրանք պատրաստվում են շարունակել բարձրագույն կրթությունը բոլորովին այլ մասնագիտացմամբ: Հետևաբար սովորողները իրենց համար առաջնահերթ առարկաները անցնում են պակաս ժամաքանակով, ինչի պատճառով հնարավորության դեպքում դիմում են կրկնուսուցյի օգնությանը: Արդյունքում մարզային ԱԱԴ-ները սովորողներին կրկնուսուցյի աջակցությունից ազատելու փոխարեն առաջացրել են կրկնուսուցյին դիմելու կարիք:

Ծնողներ.

- Այս տարի կրկնուսույցի մոտ չէին գնում: Բայց քանի որ հայոց լեզվի, մաթեմատիկայի դասերը քիչ են, դպրոցի գիտելիքները բավարար չեն, որ երեխան անվճար ընդունվի, եթե հնարավորություն ունենայինք, կտայինք պարապելու, որովհետև հետո բուհում վճարովի սովորելու հնարավորություն բոլորովին չունենք:

- Երեխաները ֆիզմաթ հոսքում են սովորում, բայց դպրոցն ավարտելիս քննություններ են հանձնելու տարբեր առարկաներից, որոնք քիչ ժամով են անցնում: Եթե երեխան խորացել է ֆիզիկայի և մաթեմատիկայի մեջ, կարող է ընդամենը շաբաթական մեկ ժամ անցնելով այդ քննությունը հանձնել: Բհարկե, չի կարող: Ստիպված 3-4 պարապմունքի է գնում՝ անգլերենի, հայոց լեզվի, որովհետև այդ առարկաներն էլ շատ կարևոր են, բայց դպրոցում դրանց ժամերը քիչ են:

Ուսուցիչ.

- Կան երեխաներ, ովքեր ցանկանում են ավելի խորն ուսումնասիրել մաթեմատիկան և ֆիզիկան, որովհետև այդ առարկաներից քննություն ենք հանձնելու: Բայց դպրոցում նրանք այդ առարկաներն անցնում են քիչ ժամաքանակով, իսկ դա բավարար չէ, որպեսի նրանք համապատասխան գիտելիքներ ձեռք բերեն: Հայոց լեզվից նույնպես ավարտական քննություններ են հանձնելու, քննությունը շատ ընդգրկուն է, հայոց լեզվի ամբողջ դպրոցական ծրագիրն է ընդգրկում, իսկ դասաժամերը բավարար չեն, որ ամբողջ դասընթացը հասցնեն դպրոցում կրկնել: Քանի որ մեր դպրոցի միակ հոսքային դասարանը արվեստի խորացված ուսուցմամբ է, հանրակրթական առարկաներին բավարար ժամաքանակ չի հատկացվել, երեխաների գիտելիքներն այդ առարկաներից բավարար չեն կրթությունը շարունակելու համար: Եվ կան երեխաներ, որոնք գնում են կրկնուսույցի մոտ:

Այս խնդիրը Արվեստի մարզային ԱԱԴ-ի տնօրինության կողմից որոշակիորեն լուծում է ստացել: Հոսքային առարկաների համար նախատեսված ժամաքանակից նախարարության համաձայնությամբ հատկացվել են այլ կարևոր, բայց ոչ հոսքային առարկաների ուսուցմանը: Դրանց լրացուցիչ ժամեր են տրամադրվել նաև խմբակների ժամերի հաշվին:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Նախատեսված է հոսքային առարկաներին հատկացնել 14 ժամ: Բավական երկար ծնողների հետ խորհրդակցելուց հետո ես հանգեցի այն եզրակացության, որ յուրաքանչյուր ծնող ցանկանում է իր երեխայի համար զոնե մինիմումն ապահովել: Ճիշտ հարցեր էին տալիս՝ երեխա է, եկավ, սովորեց, ավարտելուց հետո միտքը փոխեց, թեկուզ շատ քիչ գիտելիք պահանջող տեղն է ուզում գնալ, ասենք, բժշկական ուսումնարան: Այնտեղ քննություններ են հանձնում քիմիայից, ֆիզիկայից, կենսաբանությունից: Այդ առարկաներից երկուսը ըստ ուսպլանի նա դպրոցում չի անցնելու: Եվ ես փոփոխություն կատարեցի՝ հոսքային 14 ժամից 3-ը հատկացրեցի այդ առարկաներին: Բհարկե, դա համաձայնեցրի նախարարության հետ, և շատ ուրախ եմ, որ այս տարվա ուսպլանում արդեն 14 ժամը իջեցվել է մինչև 10 ժամ:

Ուրիշ խնդիրներ էլ են ծագում: Կան աշակերտներ, որոնք դպրոցից հետո ուզում են ընդունվել Երևանի գեղարվեստի ակադեմիա: Այնտեղ պետք է հայոց լեզվից միասնական քննություն հանձնեն: Ինչպես կարելի է միասնական քննության ուղարկել և՛ շաբաթական 2-3 ժամ հայոց լեզու անցած երեխային, և՛ 6 ժամ անցածին: Նա պակաս է ուսումնասիրել այդ առարկան, ինչպե՞ս կարող է հանձնել:

Ուսուցիչները նույնիսկ ավելին են անում, քան հնարավոր էր այդ նախատեսված ժամաքանակով: Ուսուցիչներն իրենք եկան բողոքեցին՝ ես հնարավորություն չունեմ այդքան ժամաքանակով ծրագիրը նորմալ կատարել: Կարելի է երկու օրում երկրաչափության դասագիրքը կարդալ և մի կողմ դնել: Բայց դա չի նշանակում, որ սովորեց: Ուստի ես ուրիշ քայլի դիմեցի, որը ինձ համար՝ որպես տնօրենի, ծանր էր: Խմբակների ժամերը տրամադրել եմ և՛ հայոց լեզվին, և՛ մաթեմատիկային, և՛ պատմությանը: Հիմնական առարկաները սրանք են: Այսինքն՝ լրացուցիչ 6 ժամ, որպեսզի և՛ ուսուցիչը կարողանա իր աշխատանքը լիարժեք կատարել, և՛ աշակերտը կիսատ-պատ գիտելիք չստանա: Եվ հետաքրքիր է, որ ամբողջ դասարանը՝ բացառությամբ 1-2 աշակերտի, գնում էր այդ բոլոր պարապմունքներին: Դա ստիպողական չէր երեխաների համար, բայց նրանք հասկացել են, որ նրանց դա անհրաժեշտ է:

- Նույն լսարանում սովորողների կարողությունների անհամաչափությունը

Ծնող.

- Երբ դասարանում 20-25 աշակերտ է նստած, տարբեր մակարդակի, տարբեր բազայով, տարբեր ընդունակություններով, ինչպես կարող է թեկուզ ամենալավ ուսուցիչն էլ այդ 45 բոլորում ամեն մեկին հարցնել, ստուգել, բացատրել չհասկացածը: Պարզ է, որ կամ թույլ աշակերտը պետք է տուժի, եթե ուսուցիչը դասարանի լավ սովորողներով առաջանա, կամ էլ լավ սովորողը կտուժի, եթե ուսուցիչը ուշադրության մեծ մասը թույլերին հատկացնի:

- Տվյալ սովորողի պատրաստվածության ցածր մակարդակը

Ծնող.

- Ես կարծում եմ, որ տվյալ դեպքում կրկնուսույցի մոտ գնալը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչ մակարդակով, ինչ բազիսով է երեխան տեղափոխվել այլ դպրոցից: Միշտ չէ, որ բոլոր առարկաներից ստացած գիտելիքները համապատասխանում են ավագ դպրոցի պահանջներին: Եթե կա մի առարկա, որը նախկին դպրոցում ինչ-ինչ պատճառներով այնքան էլ լավ չեն անցել, բնականաբար, ավագ դպրոցում այդ առարկայից նրանք «կադում են»: Երեխաներ եղան, որ այդ բացը լրացնելու համար կարիք ունեցան որոշ ժամանակ լրացուցիչ պարապել՝ հասցնելու համար:

Ուսուցիչ.

- Նաև որոշ երեխաներ պարապում են կրկնուսույցի մոտ իրենց նախորդ տարիների չստացած գիտելիքները լրացնելու համար, որ հասնեն ավագ դպրոցի պահանջներին:

- Նույն հոսքային առարկայի նկատմամբ սովորողների անհամաչափ կարիքները/պահանջները

Ծնող.

- Նույն հոսքում կարող են լինել երեխաներ, որոնց սովյալ հոսքային առարկան տարբեր չափով է պետք ընդունելության համար: Օրինակ, անգլերենից բանավոր քննություն բոլորը չեն հանձնելու, միայն գրավոր: Բայց դասարանում այդպես խառը նստած են, գուցե դա էլ է պատճառը, որ արդյունքն այնքան լավ չի ստացվում: Մի գուցե, պետք է առանձնացնել նրանց, ովքեր օտար լեզվի գծով են գնալու՝ 8 հոգի են, 10 հոգի են, ուսուցիչը նրանց հետ պարապի, այդ ժամանակ այստեղ էլ կստացվի այն արդյունքը, որը մասնավոր պարապմունքի ժամանակ է երևում: Ուսուցիչները վատը չեն, խոսքը մասնագետի մասին չէ:

- Գործընթացի նոր՝ փորձարարական բնույթից բխող կասկածները (ԱԱԴ-ները դեռևս շրջանավարտներ չեն ունեցել և արդյունքները ակնհայտ չեն)

Ծնողներ.

- Մի կողմից, ուսուցիչներն ասում են, որ երեխան կարիք չունի լրացուցիչ պարապելու, դպրոցում արդեն ստանում է իրեն անհրաժեշտ գիտելիքները, բայց մյուս կողմից էլ՝ որովհետև դեռ նոր ծրագիր է սա, դեռ, ինչպես ասում են, մեր աչքը չի տեսել ավագ դպրոցի արդյունքը, չեն եղել շրջանավարտներ, որ մենք էլ համոզվեինք, որ իրոք բավարար են այստեղ ստացած գիտելիքները, ընտանիքով տարակուսանքի մեջ ենք: Տեսնենք, 11-րդ դասարանում առաջին կիսամյակն էլ թող սովորի, գուցե երկրորդ կիսամյակում այնուամենայնիվ տանք պարապելու՝ որ մեր խիղճն էլ հանգիստ լինի:

- Ուղղակի, իմ կարծիքով, ավագ դպրոցը դեռ այնքան չի կայացել, որ միայն այստեղ ստացած գիտելիքները բավարար լինեն ընդունվելու համար: Հասկանում եմ, որ մեկ տարին քիչ է կայանալու համար, բայց ինձ էլ անհրաժեշտ է հիմա արդյունքի հասնել:

Ուսուցիչ.

- Բայց, այնուամենայնիվ, սա դեռ նոր համակարգ է, մենք ավագ դպրոցի շրջանավարտ չենք ունեցել, ծնողները ավագ դպրոցի արդյունքը դեռ իրականում չեն տեսել, և մի տեսակ անվստահություն կա

- Հոսքային դասագրքերի և ծրագրերի բացակայությունը և ավարտական քննությունների ընդհանուր պահանջները

Ծնող.

- Մեզ տեղեկացրեցին, որ երկու տարի հետո մասնագիտական գրականություն կլինի, բայց դա մեր երեխաներին արդեն չի վերաբերվում: Իսկ եթե մեր երեխաներն էլ ունենային այդ մասնագիտական գրականությունը, և 11-րդ դասարանի երկրորդ կիսամյակում ամեն մեկը միայն իր հոսքային առարկաները պարապեր, բնականաբար, կրկնուսույցի կարիք ընդհանրապես չէր լինի:

- Իմ կարծիքով, նույն առարկայի դասագրքերը տարբեր հոսքերում պետք է կտրուկ տարբերվեն: Նա, ով ընտրել է, օրինակ, մաթեմատիկական հոսքը, պետք է հումանիտար առարկաներն անցնի, մի գուցե տգեղ է հնչում, բայց ավելի մակերեստրեն, որովհետև չի հասցնի խորանալ: Եվ հակառակը՝ հումանիտար հոսքի աշակերտը չպետք է

մաթեմատիկան սովորի նույն խորությամբ և ծավալով, ինչ համապատասխան հոսքի սովորողը: Բայց դասագրքերը նույնն են, ավարտական քննությունները հանձնելու են նույն մակարդակով:

Ուսուցիչ.

- Երկամյա ավագ դպրոցի աշակերտները, եթե չթույլատրվեն անհատական պարապմունքները, կոժվարանան բարձր միավորներ ստանալ անվճար համակարգ ընդունվելու համար: Վճարովի համակարգի համար նրանց գիտելիքները բավարար են: Իսկ արդեն եռամյա ավագ դպրոցի աշակերտներին, եթե համապատասխան դասագրքերը լինեն և դպրոցն ապահովվի համապատասխան միջոցներով, կարծում եմ, որ դպրոցում ստացած գիտելիքները լիովին կբավարարեն նաև անվճար համակարգ ընդունվելու համար:

- Միասնական քննություններում այլ միջնակարգ դպրոցների սովորողների համեմատ անհավասար մրցակցային պայմանները՝ ԱԱԴ սովորողների կրկնուսուցման սահմանափակման պատճառով

Ծնող.

- Ես նույնիսկ առաջարկեցի, միգուցե, ինձ ճիշտ չհասկացան, ես ասացի, նրանք առաջին շրջանավարտներն են, նրանց որոշակի արտոնություններ տվեք ինչ-որ չափով: Չեմ ասում, թե առանց գիտելիքների նրանց բուհ առաջնորդեք, բայց միավորների հարցում որոշ արտոնություններ տվեք: Չէ՞ որ նրանք ավագ դպրոցի գիտելիքներով են բուհ գնում, իսկ նրանց կողքին այսօր ավանդույթ դարձած անհատական պարապած երեխաներ են գնում, բնականաբար, ինչ-որ տեղ մեր երեխաները կթերանան: Ճիշտ է, տարեսկզբից ինչ-որ թեստեր են գրում, լրացուցիչ պարապում են, ինչը սովորական դպրոցներում չէին ստանում: Բայց, կարծում եմ, բուհ ընդունվելու համար դա բավարար չէ, որովհետև պահանջները մեծ են:

- 2009 թվականի դիմորդների ավարտական քննությունների ցածր արդյունքները և բուհական ընդունելության քննությունների պահանջների անհամապատասխանությունը դպրոցական դասագրքերին ու ծրագրերին

Ծնողներ.

- Ճիշտն ասած, մինչև այս տարվա ավարտական քննությունները ես մտածում էի, որ եկող տարի էլ երեխային չեմ ուղարկի կրկնուսուցի մոտ, թերևս, վերջին մի երկու ամիսը՝ ապահովության համար, որպեսզի ստուգի գիտելիքները, պակասը լրացնի: Եվ, կարծում եմ, մեր ծնողների մեծ մասն էր այդպես մտածում: Բայց այս քննություններից հետո, հատկապես, հայոց լեզվի քննությունից հետո բոլորս վախեցած ենք: Եթե երեխան պետք է դպրոցի գիտելիքներով քննություն հանձնի, ուրեմն թեստերը թող կազմեն դպրոցական ծրագրից, ոչ թե նրանից դուրս հարցեր դնեն:

- Եթե եկող տարի մասնագիտական առարկաների ժամերը չավելացան, կտամ պարապելու, որովհետև բոլորս էլ վախեցած ենք այս տարվա ընդունելության քննություններից: Ընդունելության քննությունները շատ բարդ են, դպրոցի և բուհ

ընդունվելու ծրագրերը միմյանց չեն համապատասխանում, երեխաները ցածր միավորներ են ստանում, որոնք բավարար չեն անվճար ընդունվելու համար:

Բոլոր այս գործոնների չեզոքացումը կնպաստի ԱԱԴ-ների՝ իբրև արդյունավետ նախամասնագիտական կրթություն և բուհական քննություններին նախապատրաստող ինստիտուտի նկատմամբ ծնողների վստահության աճին: Հակառակ դեպքում, կրկնուսուցման զանգվածային պրակտիկան կդառնա անխուսափելի և հարցականի տակ կդնի ԱԱԴ-ների համակարգի արդյունավետությունը և հետագա կայացումը:

Բացի նշված խնդիրների լուծումից, ԱԱԴ-ների արդյունավետ կրթական որակի ապահովման համար առաջարկվող մեխանիզմ է նաև

- սովորողների գիտելիքների հաճախակի մոնիթորինգը, ինչը մի կողմից կբարձրացնի կրթության նկատմամբ սովորողների պատասխանատվությունը, մյուս կողմից ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին ռեալ պատկերացումներ ստանալու հնարավորություն կտա:

Ծնող.

- Եվ մյուս պայմանը՝ իմ կարծիքով, քննությունները լինեն հաճախակի, ասենք երկու շաբաթը մեկ երեխաները հարցում անցնեն, գնահատվեն: Այդ դեպքում երեխան էլ միշտ զգոն կլինի, պատրաստ կլինի:

Գործողություն 12.

Փորձնական դպրոցների աշակերտական համակազմի վերջնական ճշգրտում, առանձին ավագ դպրոցի ստեղծման մասին սովորողների տեղեկացմանը և մոբիլությանը նպաստող կազմակերպչական գործողությունների իրականացում

- **Սովորողների/ծնողների իրազեկման գործողություններ, ընդգրկման մեխանիզմներ, ընդգրկման աստիճան**

Սովորողների և նրանց ծնողների իրազեկման և ԱԱԴ-ներ սովորողների ներգրավման աշխատանքները մեծապես իրականացվել են հենց ԱԱԴ-ների կողմից և նրանց նախաձեռնությամբ՝ չհաշված ընդհանուր լուսաբանման միջոցառումները:

Դպրոցի ներսում այդ աշխատանքները տարվել են ծնողական ժողովների և դասղեկական ժամերին սովորողներին ԱԱԴ-ների նպատակների և խնդիրների հետ ծանոթացնելու միջոցով: Որոշ դպրոցների տնօրեններ նմանատիպ ժողովներ կազմակերպելու հնարավորություն են ունեցել նաև հարակից դպրոցների

ծնողների և սովորողների հետ, մյուս դեպքերում հարակից դպրոցները ինքնուրույն են տեղեկացրել իրենց սովորողներին ԱԱԴ-ների ձևավորման կարգի մասին: Հանրության իրազեկմանն ուղղված **համագործակցությունը ապագա ԱԱԴ-ների և հարակից դպրոցների միջև, սակայն, մեծամասամբ չի կայացել կամ թերի է մնացել:** Հարակից դպրոցները բավարար արդյունավետությամբ չեն տեղեկացրել թիրախային հանրությանը: Որոշ դեպքերում նույնիսկ ապատեղեկացրել և ապակոմունորոշել են՝ խոչընդոտելով սովորողների տեղափոխումը ԱԱԴ-ներ: Սա հիմնականում պայմանավորված է եղել հարակից դպրոցների շահերի բախումով. դրանք ոչ միայն գրկվել են ավագ դասարանների սովորողներից, այլև իրենց գործունեության արդյունքների լրացուցիչ հանրային վերահսկման օղակ են ձեռք բերել: ԱԱԴ-ների շուրջ անորոշության և ապատեղեկացվածության վրա, ինչպես նաև ԱԱԴ-ների նկատմամբ վստահության աստիճանի և սովորողների ընդգրկման արդյունավետության վրա ուղղակի ազդեցություն է ունեցել նաև կառավարչական որոշումների ուշացումը, ինչը բազմազան անհիմն շշուկների տարածման տեղիք է տվել:

Տնօրինության ներկայացուցիչներ.

- *Անցյալ տարի շատ դժվար պահ էր: Կառավարության որոշումը ուշ ընդունվեց, և աշակերտների հոսքը հարակից դպրոցներից սկսվեց օգոստոսի վերջին օրերին:*

- *Մենք լուրջ խնդիր ունենք, որը ես մշտապես բարձրացրել եմ նախարարությունում: Որպես փորձնական դպրոց առաջին տարին էր: Այսպես կոչված, գոտիավորում արվեց ավագ դպրոցների համար, որի արդյունքում թիվ 90, 91 և 191 դպրոցները դարձան հիմնական դպրոցներ, և այդ դպրոցների 10-րդ դասարանցիները պետք է գային թիվ 112 դպրոց: Սակայն, ինձ համար նաև հասկանալի պատճառներով, շատ դպրոցներ ուղղորդեցին իրենց երեխաներին այլ դպրոցներ՝ ոչ ավագ դպրոց: Ես հասկանում եմ, որ եթե բոլոր 10-րդ դասարանցիները գային մեր դպրոց, մենք կունենայինք այն դպրոցների ողջ պատկերը: Օրինակ, թիվ 90 դպրոցն ուղղորդեց իր աշակերտներին թիվ 116 դպրոց, թիվ 91 դպրոցը՝ դեպի թիվ 194 դպրոց: Չուղղորդեցին իրենց երեխաներին ավագ դպրոց հոսքային ուսուցման: Ծնողներն էլ ամբողջությամբ տեղյակ չէին այս ծրագրի մասին: Սա այն լուրջ խնդիրն է, որը ես բազմիցս բարձրացրել եմ նախարարությունում: Մտավախություն ունեին, որ իրենց դպրոցի իսկական դեմքը ցույց կտային, որովհետև մենք ունենք այդպիսի փաստեր, երբ հարակից դպրոցներից մեզ մոտ են եկել փայլուն հիմնական կրթության վկայականներով, սակայն սեպտեմբերի 15-ին մեր ստուգումների արդյունքները լրիվ հակառակ պատկեր են ցույց տվել:*

- *Անցած տարին շատ դժվար տարի էր, սարսափելի տարի, հատկապես՝ տարվա սկիզբը: Նախ, ասեմ, որ Կառավարության որոշումը մեր դպրոցին ավագ դպրոցի կարգավիճակ տալու մասին եղավ օգոստոսի վերջին: Մինչ այդ ոչ ոք չէր հավատում, որ լինելու են ավագ դպրոցներ: Տրամադրում էին աշակերտներին, ծնողներին ավագ դպրոցի դեմ: Ասում էին, որ ավագ դպրոցներում լինելու է քառս, հավաքվելու են տարբեր դպրոցներից մարդիկ, սպանելու են իրար, ծեծելու են իրար, գողանալու են երեխաներին՝ մի խոսքով,*

անհեթեթություններ: Բոլոր ուսուցիչները դուրս են մնալու, բոլորին ազատելու են, ինստիտուտներից դասախոսներ են բերելու: Առաջացել էր շատ լարված իրավիճակ: Հարակից դպրոցների ուսուցիչները համոզում էին ծնողներին, որ երեխաներին չբերեն ավագ դպրոց, նույնիսկ սաբոտաժի նման մի բան կար, թե տարեք Նորքի զանգվածների այլ դպրոցներ, միայն թե ոչ ավագ դպրոց: Որպեսզի ավագ դպրոցները չկայանան, որոշումը «հետ ողորմյա» անեն և այլն: Եվ դրա հիմնական պատճառներից մեկը որոշման ուշ ընդունելն էր: Եվ որպես դրա հետևանք՝ գրո իրագրվում: Շատ կարևոր էր, որպեսզի պետական մակարդակով ժամանակին դպրոցներին հանձնարարվեր, որ նման բաներ չանեն: Բայց որոշ դեպքերում մինչև հիմա էլ շատ բարձրաստիճան պաշտոնյաներ շատ թերահավատորեն են վերաբերվում ավագ դպրոցին: Ես հասկանում եմ օբյեկտիվորեն, թե ինչից են նրանք վախենում, բայց եթե պետությունը որոշել է այդ ուղին, ուրեմն, պետք է իրականացնել:

- Մի քիչ մեր աշխատանքին խանգարեց այն, որ միայն օգոստոսի 14-ին վերջնակապես հաստատվեց կառավարության որոշումը վարչապետի կողմից, իսկ վավերացումը հոկտեմբերի 1-ին եղավ: Այդ պրոցեսը ձգձգվեց, այդ պատճառով էլ սեպտեմբերի 1-ի նախօրյակին մի քիչ խառնաշփոթ կար: Բայց հետո արդեն կայունացավ պրոցեսը: Բհարկե, եթե այդ տեմպը մի քիչ ավելի արագ լիներ, հարակից դպրոցները մի քիչ շփոթ չէին ապրի, չէին շփոթեցնի նաև իրենց ծնողներին: Հարակից դպրոցներից աշակերտները հեշտությամբ չպոկվեցին, եկան: Սկսվեց լուրջ բացատրական աշխատանք: Բհարկե, այն մասը, որ մշտապես գալիս էր վարժարան, այդ տարի էլ եկավ: Հարակից դպրոցների համար մի տեսակ անակնկալ էր, որ 10-րդ դասարան չեն ունենալու, և երկար ժամանակ չէին հավատում, որ ավագ դպրոցը կկայանա: Իրենք չէին հավատում, բայց մենք հավատում էինք: Եվ մինչև սեպտեմբերի 4-5-ը մենք արդեն ունեինք լուրջ կայուն կազմ՝ շուրջ 60 դիմորդ: Նրանցից 4-ը սեպտեմբեր-հոկտեմբերին տեղափոխվեցին գյուղատնտեսական ակադեմիայի վարժարան՝ գյուղատնտեսական թեքումով: 56-ը մնացին հոկտեմբերից մինչև տարվա վերջ:

Այդուհանդերձ այս ռիսկերը շարունակվում են արդիական մնալ: Հայտնի է, որ ԱԱԴ փորձական ծրագրի իրականացման մեկնարկից նույնիսկ մեկ տարի անց որոշ հարակից դպրոցներ հրաժարվում են ոչ միայն համագործակցությունից, այլև իրենց վարչական լծակներն են կիրառում սովորողների հոսքը ԱԱԴ խոչընդոտելու համար (սովորողների վկայականները չեն հանձնում, սպառնում-համոզում են գնալ որևէ այլ ուս. հաստատություն, բայց ոչ տվյալ ԱԱԴ): Ապատեղեկատվական արշավը ևս շարունակվում է, ինչը երբեմն հանգեցնում է նոր ձևավորվող ԱԱԴ-ներին պատասխան ապատեղեկատվություն տարածել:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Հարակից շատ դպրոցներ արդեն սկսել են տարածել ինֆորմացիա, թե ավագ դպրոցի ծրագիրը փակվել է, այդ ծրագիրն այլևս չի աշխատի: Տեղեկատվական պակասի պահը կա: Ինձ հասած տեղեկություններով, այն դպրոցները, որոնք այս տարի են դառնալու ավագ դպրոց, սկսել են իրենց, այսպես ասած, գործունեությունը՝ ավելի շատ ոչ օբյեկտիվ ինֆորմացիայով պայմանավորված: Տարածում են լուրեր, թե իբր իրենց ավագ դպրոցն

ավարտած աշակերտները հարցազրույցով են ընդունվելու որոշ բուհեր, ինչ-ինչ առավելություններ են ունենալու:

Այս կարճաժամկետ արդյունավետություն ունեցող քայլը ապագայում կարող է հիմնարար վնաս հասցնել ողջ ԱԱԴ համակարգին և դրա նկատմամբ առանց այն էլ խարխուլ վստահությանը:

Այն դպրոցները, որոնք հաջողել են արդյունավետ համագործակցել և հանդիպումներն ու իրազեկման աշխատանքները վարել են մինչև 2007-2008 ուս. տարվա ավարտը, նրանք ամառային ամիսներին հյուրընկալել են հետաքրքրվող և նախնական ծանոթության համար այցելող ծնողներին ու սովորողներին, ինչպես նաև պարզել ապագա հոսքերի առնչությամբ երեխաների նախընտրությունները: Դպրոցներից մեկի տնօրենը իրազեկման աշխատանքներն իրականացրել է ոչ միայն պոտենցիալ սովորողների և ծնողների շրջանում, այլև հարակից դպրոցների ուսուցչական կազմի շրջանում:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Բացի մեր դպրոցից, անձամբ ես մի քանի ժողովներ եմ անցկացրել նաև Վարդենիկի թիվ 1 և թիվ 3 դպրոցներում մանկավարժների հետ՝ համագործակցված իրենց տնօրենների հետ: Բացատրել ենք, ինչ է իրենից ներկայացնում ավագ դպրոցների ստեղծման ծրագիրը՝ սկսած Բոլոնյան պրոցեսից մինչև մեր օրերը, ինչպես ենք մտածում, ինչպես կարելի է անել, ինչպես կարելի է մասը կազմել պետական նշանակության այս ծրագրի, ինչ կարող ենք անել: Հանդիպումներ եմ ունեցել նաև այդ դպրոցների ծնողների հետ, և ասեմ ձեզ, որ անցյալ տարի 9-րդ դասարանների ավարտական քննությունների հաջորդ օրը՝ հունիսի 19-ին մեր կրթահամալիրում կայացավ ժողով, որին մասնակցում էին շուրջ 160 ծնողներ՝ բոլոր 9-րդ դասարանցիների ծնողները, որտեղ բացատրվեց հոսքային ուսուցման առանձնահատկությունները, դասաժամերի քանակության հետ կապված պարզաբանումներ տրվեցին, աշակերտների գործերի հետ կապված հարցեր և այլն: Այս տարվա ժողովին մասնակցում էին արդեն գործող ավագ դպրոցի աշակերտները, որոնք 11-րդ դասարան են փոխադրվել: Նրանք քաջալերում էին իրենց նախկին դպրոցների աշակերտներին, պատմում ավագ դպրոցի մասին, որ այստեղ լավ է, շատ լավ բաներ կան, սիրող ուսուցիչներ կան: Բմ կարծիքով, սա ավելի խրախուսող է, երբ աշակերտն է աշակերտներին պատմում, ներկայացնում այն դպրոցը, որտեղ ինքն արդեն մեկ տարի սովորել է:

ԱԱԴ-ների կազմավորման և դրանց մանրամասների մասին զուգահեռաբար տեղեկատվություն է տարածվել նաև ընդհանուր գործողությունների շրջանակներում կազմակերպված հեռուստահաղորդումների միջոցով: Մարզային հեռուստաընկերություններով հայտարարություններ տալու և հաղորդումներ պատրաստելու փորձը ևս կիրառվել է:

Մարզային նշանակության դպրոցների տնօրինության ներկայացուցիչները այցելել են հարակից գյուղեր և տեղեկացման աշխատանքներ տարել նրանց շրջանում:

Արդյունքում հայտնվել են իրենց երեխաներին մարզային ԱԱԴ-ներ ուղարկել ցանկացող ծնողներ, սակայն տեղափոխության և կեցության հարցերի առկախության պատճառով՝ կից համայնքների երեխաները հնարավորություն չեն ունեցել նորմալ հաճախելու և ի վերջո հրաժարվել են տվյալ ԱԱԴ-ներից:

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Մենք շրջել ենք գյուղերում, տեղեկացրել ենք: Գյուղերում բավականին լավ ընդունեցին այդ նորությունը, բայց խնդիրն այն էր, որ հեռավոր գյուղերից երեխաները պետք է մնային Գյումրիում, մեր դպրոցում: Իսկ մեր գյուղերում դեռ պատրաստ չեն նրան, որ երեխան տանից դուրս գիշերի, հատկապես աղջիկը: Մի 4-5 հոգի տարբեր գյուղերից նույնպես ուզում էին ընդունվել մեզ մոտ, բայց չեկան տրանսպորտային խնդիրների պատճառով: Մի 2-3 հոգի եկան, ոչ այնքան հեռավոր գյուղերից: Բայց այդ ժամանակ մեր ննջասենյակները նորոգվում էին, մնալ մեզ մոտ նրանք չէին կարող: Նույնիսկ ես փող տվեցի, նրանք մի քանի օր գալիս-գնում էին, բայց դա էլ դժվար էր, դասերից ուշանում էին, շատ էին հոգնում ճանապարհներին, այլևս չեկան: Նախապես նախատեսված էր, որ մոտակա գյուղերից երեխաներին կտրվի ամսեկան 10000 դրամ՝ որպես ճանապարհաձախս, որպեսզի կարողանան երթևեկել, բայց նախարարությունից ինձ տեղեկացրեցին, որ առայժմ դա էլ չի լինելու:

- Մեր դպրոցը համարվում է մարզային կտրվածքի դպրոց: Դա նշանակում է, որ գյուղերից, Արթիկից, Մարալիկից, Ախուրյանից, Ամասիայից և այլն կարող են մեզ մոտ աշակերտներ գալ, մնան, քնեն, ապրեն: Բայց այդ քնել-ապրելուց առաջ պետք էր լուծել նրանց սննդի հարցը, տրանսպորտի հարցը, ճանապարհաձախսը, հանգստի հարցը, պարսպի հարցը: Ինչ ասես, կարող է լինել, մեծ երեխաներ են, շատ բարդ է կյանքը, չես կարող ասել, թե ինչ կլինի վաղը: Անցյալ տարի 6 հոգի եկան, ուսուցիչների երեխաներ էին, լսել էին ավագ դպրոցի մասին, ինձ էլ ճանաչում էին: Բայց ոչնչով չկարողացա օժանդակել: Ծնողներն ինձ հարցում էին՝ երեխան կարո՞ղ է այստեղ մնալ, երեխային ճանապարհաձախս տալու՞ են, որ Ախուրյանից գա, հասնի: Բոլոր հարցերին ես պատասխանում էի՝ ո՛չ: Պետք է առաջին հերթին այս հարցերը լուծվեն, հետո աղմուկ բարձրացվի, թե բերեք գյուղերից ձեր տաղանդներին: Իսկ գյուղերում, իրոք, կան տաղանդավոր երեխաներ, որոնք կարող են հաջողությամբ ֆիզմաթ հոսքն ավարտել և հետագայում էլ շատ լավ մասնագետներ դառնալ:

Սովորողների ընգրկման իմաստով շատ ավելի մեծ խնդիրներ են ունեցել մարզային նշանակության ԱԱԴ-ները, քանի որ նրանց հարակից դպրոցները պահպանել են ավագ դասարանները, և սովորողները ոչ թե պետք է մեխանիկորեն տեղափոխվեին տվյալ ԱԱԴ-ներ, այլ պետք է իրականացվեր նպատակաուղղված ընգրկում: Իսկ նպատակաուղղված ձևով տվյալ հոսքային ուղղվածությամբ շնորհալի երեխաներին մարզային դպրոցներ բերելու համար, ինչպես վերը նշվեց, պայմաններ ապահովված չեն եղել: Արդյունքում մարզային նշանակության ԱԱԴ-ները՝ որպես այդպիսին կիսատ են ձևավորվել, արհեստական բնույթ են ունեցել և սովորողներից շատերը պարզապես շարունակել են կրթությունը ձևավորված միակ

հոսքում՝ չնայած բարձրագույն կրթությունը պատրաստվում են շարունակել այլ ուղղվածությամբ:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Հեռուստատեսությամբ էլ հաղորդումներ եղան մեր դպրոցների մասին, բայց դա չօժանդակեց, միայն օժանդակեց շրջակա դպրոցների հիմնական դառնալը, ինչպես Ախուրյանի Աղբայանի անվան վարժարանը՝ կողքի դպրոցները դարձան հիմնական, նա կոնտինգենտ ունեցավ, նույնը թիվ 3 դպրոցը: Իսկ մեր և թիվ 12 դպրոցը մնացինք նույն վիճակում, այսինքն՝ մեր աշակերտներով: Տեսեք, ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ մեզ մոտ հավաքվել են ֆիզմաթ գիտելիքներ ստացող աշակերտներ, այնտեղ արվեստի՝ այդպես կլինի՞: Եթե թիվ 12 դպրոցը արվեստի հոսքով է, պետք է ամբողջ մարզից նկարելու, քանդակելու հակում ունեցող, ձիրք ունեցող երեխաներ հավաքեր: Մեզ մոտ էլ ֆիզիկայի և մաթեմատիկայի հակումներ ունեցող երեխաներ: Բայց դրա համար պետք է, առաջին հերթին, մարդուն գրավելու միջոցներ ունենաս, որ պրոպագանդես: Հայտարարությունը մի 5 կամ 7 անգամ տրվել է հեռուստատեսությամբ, բայց բանի տեղ չեն դրել, այսինքն՝ մինչև մի շոշափելի, տեսանելի առավելություն չտեսնեն, չեն հետաքրքրվի: Ես այդ կարծիքին եմ:

Այսպիսով հիմնական դպրոցներից **սովորողների ընդգրկմանը խոչընդոտող գործոններն** են հանդիսացել.

- ԱԱԴ-ների և դրանց ձևավորման կարգի մասին թիրախային հանրության իրազեկվածության ցածր մակարդակը,
- ԱԱԴ-ների հետ հարակից դպրոցների համագործակցության անպատրաստակամությունը,
- հարակից դպրոցների կողմից հատուկ խոչընդոտների առաջացումը,
- ԱԱԴ հեռավորությունը և շենքային անհարմար պայմանները (Վարդենիկի ԱԱԴ-ի դեպքում)
- սովորողների տեղափոխման և կեցության պայմանների բացակայությունը (մարզային նշանակության ԱԱԴ-ների դեպքում):

ԱԱԴ-ներում **սովորողների ընդգրկման նպաստող գործոններն** են հանդիսացել

- գործընթացի մասին թիրախային հանրության հետ իրազեկման աշխատանքները,
- հարակից դպրոցների ավագ դասարանների փակումը,
- հարակից դպրոցների հետ համագործակցությունը,
- կոնկրետ ԱԱԴ-ի հեղինակությունը և դրա մասին հանրային դիրքորոշումները,
- բացառիկ դեպքերում՝ նաև ԱԱԴ-ների նշանակության գիտակցումը սովորողների կամ նրանց ծնողների մոտ:

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Այս առումով շատ կարևոր էր նաև մինչև այդ մեր դպրոցի ունեցած դերակատարությունը քաղաքում, ինչու էն ընտրել հատկապես այս դպրոցը՝ դա շատ կարևոր էր: Եղան ծնողներ, որոնք ասում էին, որ, չնայած իր երեխայի մոտ ընկերը կամ ընկերուհին գնացել է այսինչ վարժարան, բայց իրենք լսել են մեր դպրոցի մասին և ուզում են, որ երեխան մեզ մոտ սովորի:

- Երեխաների հոսքը դեպի ավագ դպրոց ցածր էր, որովհետև ընդհանրապես տեղեկացվածություն չկար: Մեր դպրոց եկել է երկու աշակերտ՝ հեռուստատեսային շատ սահմանափակ հաղորդումների արդյունքում, մեկը՝ թիվ 114, մեկն էլ թիվ 19 դպրոցից, հատուկ նպատակով, որպեսզի իրենց մասնագիտական առարկաներով կարողանան խորանալ: Ոչ թե դժգոհ էին իրենց դպրոցից, այլ պարզապես ավագ դպրոցում մաթեմատիկան շաբաթական 9 ժամ են անցնում, գրագետ մարդիկ են, և հասկացել են, թե ինչու անհիմաստ փող ծախսեն դասուսույցների վրա:

ԱԱԴ-ների սովորողներից ավագ դպրոց տեղափոխվածները մեծամասնություն են կազմել: Այնուամենայնիվ որոշ մասի արտահոսքի պատճառներն են հանդիսացել՝

- կրթությունը շարունակելու ցանկության բացակայությունը,
- կրթությունը պրոֆտեխուսումնարաններում շարունակելու ցանկությունը,
- նախընտրելի հոսքի բացակայությունը (հատկապես մարզային նշանակության միահոսք դպրոցների դեպքում),
- կրթությունը այլ հեղինակավոր կրթահամալիրում (մասնավոր դպրոցներում) շարունակելու ցանկությունը,
- արտագաղթը:

ԱԱԴ-ներում սովորողների ընդգրկման ներկայիս միտումները, որ արձանագրվել են հետազոտության ընթացքում, պարունակում են և՛ լավատեսական գնահատականներ, և՛ հոռետեսական կանխատեսումներ: Լավատեսական գնահատականները կապված են ԱԱԴ-ների արդեն մեկամյա գործունեության արդյունքների հիման վրա պոտենցիալ սովորողների շրջանում իրազեկման և վստահության բարձրացման հետ:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Ինչու ենք մենք համարում Ախուրյանի ավագ դպրոցը կայացած: Որովհետև առանց հայտարարությունների, առանց հեռուստատեսության օգնության, մեկնաբանությունների, էլոյթների և այլնի, այս տարի հունիսի 1-ին երեխաները լցվեցին դպրոց: Եվ եթե նայեք դիմումները, երեխաներն են դրանք գրել: Հետո մենք խնդրեցինք, որ ծնողներն էլ գան, իրենց ստորագրությամբ հավաստեն, որ համաձայն են երեխայի ցանկությանը:

Իսկ հոռետեսական կանխատեսումները կապված են բուհերի նախապատրաստական քոլեջների նոր քաղաքականության հետ. դրանցում

սովորողներին հնարավորություն է տրվում ավարտական քննությունները հանձնելով միանգամից փոխադրվել բուհերի 2-րդ կուրս: Այս նոր քաղաքականությունը կապված է 2011 թ-ին շրջանավարտների բացակայության հետ և պետական այն դիրքորոշման, որ այդ պատճառով բուհերին պետք է թույլ տրվի կանխավ մեծացնել ուսանողների քանակը: Սա լուրջ մրցակցություն է ԱԱԴ-ների համար և մարտահրավեր համակարգի կայացմանը:

➤ **Ընդունելության կարգ, հոսքային նախընտրությունների ճշգրտման մեխանիզմ, ուսուցիչների ընդգրկում ընդունելության պրոցեսում**

ԱԱԴ-ներում ընդունելությունն ընթացել է օգոստոսի վերջին բոլոր դիմողների համար՝ առանց սահմանափակման և նախապայմանների: Սովորողների ընդգրկման նման մեխանիզմի հետ կապված խնդիրներ են տեսնում դպրոցները այն իմաստով, որ առանց ֆիլտրացիայի սկզբունքի հաճախ ոչ համասեռ ձգտումներով ու կարողություններով սովորողների կազմ է ձևավորվում: Ընդ որում՝ սա անհանգստացնում է ոչ միայն ԱԱԴ տնօրեններին և ուսուցիչներին, այլև սովորողներին:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Իսկ անհրաժեշտ է արդյոք, որ բոլոր երեխաները գան ավագ դպրոց: Ես համարում եմ, որ եթե բոլոր երեխաները գան ավագ դպրոց, դա հարցականի տակ է դնելու ավագ դպրոցի կայացման խնդիրը և հեղինակությունն է զցելու: Եվ այստեղ ես ուզում եմ կրկին անդրադառնալ մեր հարցման արդյունքներին: Երբ հարցման մասնակցած 185 աշակերտից 118-ը ասում են, որ ոչ բոլորը պետք է սովորեն ավագ դպրոցում, դա հենց իրենց գնահատականն է: Այսինքն՝ երեխան ինքը հասկացավ, որ իր կողքի երեխան չպետք է լինի ավագ դպրոցում իր կողքին, ինքը ուզում է սովորել, իսկ նա չի ցանկանում, և խանգարում է իրեն: Եվ, իմ համոզմամբ, վաղը ավագ դպրոցին թիկունքից խփողը սա՛ կլինի, կամ գոնե մեկը՝ հենց սա կլինի: Եվ սա, իրոք, շատ լուրջ խնդիր է: Հակառակ դեպքում մեր նույն նախկին հանրակրթական հարթության վրա ենք դնում ավագ դպրոցը. եթե կրկին պետք է գա մի մարդ, որը չի ուզում սովորել և չի կարող սովորել, դարձյալ նույն արդյունքն ենք ունենալու, կարող ենք նույն կոտրած տաշտակի առջև հայտնվել:

ԱԱԴ-ները փորձել են որոշակի ֆիլտրացիա կատարել համոզման և իրազեկման մեխանիզմով, ինչը սակայն, երբեմն ԱԱԴ տնօրինության սուբյեկտիվ ընկալումներով առաջնորդվելու ռիսկ է պարունակում:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Մենք այս հարցում ևս խոչընդոտների չենք բախվել: Պարզապես ծնողները պահանջում էին ծնողական ժողովների ժամանակ, որպեսզի ավագ դպրոց ընդունելիս ընտրություն կատարենք, աշակերտների գտում կատարվի: Նույն հոսքում եղել են և շատ թույլ երեխաներ, և ուժեղ երեխաներ: Եվ ես նրանց հետ համաձայն եմ, որովհետև մանավանդ հումանիտար հոսքերում շատ թույլ երեխաներ են հավաքվել: Այսինքն՝ նրանք, ովքեր

չգիտեն մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բոլորն ընտրել էին հումանիտար հոսք, կարծելով, թե դա հեշտ է: Ու ստացվել է, որ ամենաթույլ դասարանը հումանիտարն է, որովհետև իրականում այդ հոսքում խորացված սովորելը նույնպես շատ դժվար է: Բայց դա էլ չի կարելի, երբեք չես կարող երեխային ասել՝ դու թույլ ես, վատն ես, պետք է այլ հոսքում սովորես: Դա ճիշտ մոտեցում չէ:

Վարժարանի հիմքի վրա ձևավորված ԱԱԴ-ի դեպքում, ընդհակառակը, բարձր ընդունակություններով երեխաների դպրոցի իր համբավը վանել է բարդ ուսուցումից խուսափող որոշ պոտենցիալ սովորողների:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Իսկ երկու հարակից դպրոցներում 9-րդ դասարաններն ավարտել էին 89 աշակերտներ, նրանցից 27 եկան ավագ դպրոց: Եվս 7 աշակերտ տեղափոխվեցին շրջակա գյուղերից, իսկ 1-ն էլ եկավ Գյումրու թիվ 8 դպրոցից: Հարակից դպրոցների մյուս շրջանավարտները խուսափեցին գալ ավագ դպրոց: Նախկինում վարժարան էին գալիս լավ սովորողները: Երբ մենք բացատրական աշխատանք էինք կատարում, ասում էինք, որ ավագ դպրոց կարող են գալ ոչ միայն բուհում իրենց ուսումը շարունակելու ձգտում ունեցող, այլ բոլոր ցանկացողները: Բայց շատերը վախեցան դժվարություններից, մտածեցին, որ ավագ դպրոցում սովորելը շատ բարդ է լինելու, և չեկան: Մենք ասում էինք՝ մի վախեցեք դժվարություններից, մենք ձեզ կնախապատրաստենք, թեկուզ բժշկական քոլեջի համար: Բայց ծնողներ եղան, որ մտածեցին՝ եթե այդպես է, թող միանգամից 9-րդ դասարանից հետո գնա քոլեջ, էլ ինչու երկու տարի ավագ դպրոցում անցկացնի: Եվ այդ երեխաների մեծ մասը գնացին գյուղատնտեսական ակադեմիայի վարժարան, քոլեջներ և ուսումնարաններ՝ ըստ իրենց նախասիրությունների:

Սովորողների ընդունելության գործընթացին մասնակցել են տնօրինության ներկայացուցիչներ՝ տնօրեն, փոխտնօրեն, և ուսուցիչներ:

➤ Հոսքերի ընտրության և տեղափոխման կարգ

Հոսքային նախընտրությունները նախօրոք ճշգրտելու նպատակով դպրոցները հիմնականում կիրառել են հանդիպումների և առանձին զրույցների ձևը: Սակայն 2 ԱԱԴ-ներ հարակից դպրոցների հետ համագործակցությամբ կիրառել են հարցաթերթիկների միջոցով նախնական տվյալների հավաքագրման մեխանիզմը, ինչը կարող էր լուրջ վերաբերմունքի առկայության պարագայում ցանկալի արդյունքներ տալ: Իրականացվել է նաև սովորողների գործերի, նրանց առաջադիմության ուսումնասիրություն:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Մենք հարցում անցկացրեցինք մեր և երկու հարակից դպրոցներում, ընդ որում այդ դպրոցների տնօրենները մեզ օժանդակեցին: Հարցաթերթիկները կազմված էին այնպես, որ աշակերտները նշեին, թե իրենք ինչ հակումներ ունեն, իրենք որ առարկաներն են լավ սովորում ու սիրում, ինչ ուղղությամբ են ուզում սովորել, որպեսզի գոնե նախնական

պատկերացում ունենայինք: Ցավոք սրտի, ի տարբերություն մեր դպրոցի՝ մյուս դպրոցներում ինչ-որ բաներ գրեցին, միայն թե գլուխներն ազատեն: Եվ մենք շատ մոտավոր պատկերացում ունեցանք, թե ինչ հոսքեր են գալու մեր դպրոց:

Հոսքերի ձևավորումը, բացի մարզային նշանակության դպրոցներից, մյուսներում կատարվել է

- ըստ սովորողների նախընտրության կամ
- ԱԱԴ խորհրդատվական հանձնաժողովի խորհուրդների:

Հոսքային կողմնորոշման համար խորհրդատվություն տալիս որոշ դպրոցներ սովորողներին կողմնորոշել են՝ հաշվի առնելով ապագա նախընտրելի մասնագիտության բուհական քննությունները, որոշները՝ սովորողների առկա գիտելիքների հիմքերը: Վերջին դեպքում հոսքի ազատ ընտրության հնարավորություն են ունեցել միայն գերազանցիկները, մյուսները հիմնականում առաջնորդվել են հանձնաժողովի խորհուրդներով:

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Ով գերազանցիկ էր, ասում էինք. դու մեխանիկորեն, ազատորեն անցնում ես քո ուզած հոսքը, մյուսների հետ գրուցում էինք, պատահում էր, որ խորհուրդ էինք տալիս այլ հոսք ընտրել: Եվ մենք ունեցանք արդյունք: Իսկ մի մասն էլ, որոնք դեռ հստակ կողմնորոշում չունեին, համալրեցին ընդհանուր հոսքի դասարանը:

- Մենք ստեղծել էինք հանձնաժողով, որը խորհրդատվություն էր տալիս ընդունելության ժամանակ: Օգտագործել էինք և ավագ դպրոցի հայեցակարգը, և “Դիմորդը”, որտեղ նշված էր, թե որ բուհում ինչ մասնագիտություններ են, ինչ առարկաներ են պետք և այլն: Փորձում էինք ուղղորդել երեխաներին, որպեսզի եթե մարդը ուզում է գնալ ասենք, ֆիզիկա առարկայի ուղղությամբ, պատկերացնի, որ դրա համար մաթեմատիկա էլ է պետք, ինֆորմատիկա էլ: Բոլոր հոսքերը միանշանակ ձևավորվեցին միայն սովորողների դիմումների հիման վրա:

- Ոչ մի հարցազրույց, ոչ մի խոչընդոտ չի եղել: Իհարկե, ես գտնում եմ, և վերադասի առջև էլ եմ բարձրացրել այս հարցը, որ մենք պետք է ինչ-որ ձևով կարգավորենք այդ ընդունելության հարցը: Ոչ թե ընդունենք կամ չընդունենք, այլ ճիշտ ուղղորդենք երեխաներին, որովհետև դրանից շատ բան է կախված: Եթե մենք չենք ուղղորդում, երեխան գալիս է հումանիտար հոսք, հետո հասկանում է, որ սխալվել է, գնում է բնագիտական կամ ֆիզմաթ հոսք: Իսկ ուղղորդելու պարագայում մենք երեխային կբացատրենք, կհասկացնենք, կօգնենք ճիշտ կողմնորոշվել:

- Հանձնաժողովներ էինք ստեղծել, երեխաները, ծնողները դիմում էին գրում, մենք երեխայի հետ գրուցում էինք, ճշտում էինք երեխայի նախասիրությունները, փորձում էինք հասկանալ, արդյո՞ք նրա ունեցած բազան իր ընտրած հոսքին համապատասխանում է:

- Մանկավարժական ամբողջ հանրությոն աշխատում էր: Ունենք 14 մանկավարժ, բոլորն էլ իրենց զգում էին խորհրդատուի դերում, բացատրում էին ավագ դպրոցի խնդիրները, հնարավորությունները, օգնում էին ճիշտ ընտրել հոսքը: Ասենք, ընկերուհին ուզում է

բնագիտական հոսք ընդունվել, նա էլ է այդ հոսքը նշում: Բայց մեր մանկավարժների բացատրական աշխատանքից հետո հաջողվում էր այդ մոտ ընկերուհիներին “պոկել” միայնցից և իրենց համապատասխան հոսքում ընդգրկել: Պատահել է, որ մի 30-40 բույս մեկ ծնողի հետ ենք աշխատել, բացատրել: Շատ աշխատատար գործընթաց էր և շատ ուժ էր մեզնից խլում, քանի որ ավագ դպրոցի գաղափարը օգոստոսին կյանք մտավ, հեռուստատեսությամբ մեկնաբանությունները քիչ էին եղել, մինչդեռ դրա պահանջը շատ մեծ էր: Եվ մեր ուսուցիչներն էին լրացնում այդ բացը իրենց բացատրական աշխատանքով:

Այս փորձը կիրառած դպրոցները արդյունավետ, սակայն ոչ բավարար են համարում դրանք: Հետևաբար, ԱԱԴ-ներն իրենք ձգտում են արդյունավետ մեխանիզմներ մշակել աջակցելու սովորողներին ապագա հոսքի ընտրությունը մաքսիմալ համապատասխան կատարել:

Որպես այդպիսիք դպրոցները նախատեսում են փորձարկել հետևյալ միջոցառումները.

- ԱԱԴ դիմորդների համար խորհրդատվական թերթիկների պատրաստում և տարածում
- Հարակից դպրոցների տնօրինության կողմից նախապես կողմնորոշող խորհրդատվություն
- ԱԱԴ-ների նախնական կոնսուլտացիաների միջոցով հոսքային նպատակահարմարության որոշում և ըստ այդմ խորհրդատվության կազմակերպում

Տնօրինության ներկայացուցիչներ.

- Իսկ այս տարվա ընդունելության համար մեր ուսուցիչներն արդեն ինքնուրույն պատրաստել էին խորհրդատվական թերթիկներ դիմորդներին, որոնք օգնում են աշակերտներին ավելի ճիշտ կողմնորոշվել, բացահայտել իրենց նախասիրությունները:

- Այսօր արդեն տնօրեն կա, որ համագործակցում է մեզ հետ, ասում է՝ ես ինքս եմ այդ ամենը անում, պատվախնդրորեն հետևում է, որպեսզի որակ լինի, օգնում է նաև մասնագիտացման խնդիրներում: Այսինքն՝ շատ խնդիրներ նա արդեն լուծում է, որպեսզի մենք այստեղ պրոբլեմներ չունենանք: Դա շատ օբյեկտիվ է, դա նաև իր գերխնդիրն է, իր դպրոցի հեղինակությունն է, պատվի խնդիրը, և միաժամանակ օգնում է նաև մեզ:

- Մենք հանձնաժողովներ կստեղծենք՝ մի մասը ընդունելության հետ կապված, իսկ մյուսի խնդիրն այլ է լինելու: Ես իմ գործընկերների հետ պայմանավորվել եմ, որ նրանք այս տարի իրենց միջին դպրոցի շրջանավարտներին մեր դպրոց ուղարկեն հունիսի վերջից: Ես ուզում եմ կոնսուլտացիա ստեղծել: Հրավիրում ենք երեխաներին, նրանք դիմումները ներկայացնում են: Եվ հետո, ըստ նրանց նշած հոսքերի, մեր ուսուցիչները նրանց հետ կոնսուլտացիաներ են անցկացնում: Բայց իմ իրական նպատակը կոնսուլտացիան չէ: Ուզում եմ կոնսուլտացիայի շղարշի տակ նրանց գիտելիքները ստուգել, թեստեր անցկացնել, երեխաների միջև շփումն ապահովել: Բհարկե, դա որոշիչ դեր չի խաղալու, բայց մինչև սեպտեմբեր մենք գոնե մոտավոր պատկերացում կունենանք, թե ինչ կոնտինգենտ է հավաքվել: Դժվար է գործնականում դա կիրառել, բայց եթե ստացվի, ես դա կանեմ:

Սովորողների ընթացիկ վերակողմնորոշման և հոսքերի տեղափոխման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար դպրոցներից մեկը պարբերական հանդիպումներ է կազմակերպել ծնողների հետ:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Մենք սիստեմատիկ հանդիպումներ ենք կազմակերպել ծնողների հետ, ամբողջ ուսումնական տարում 27 ծնողական հանդիպում ենք անցկացրել՝ ամեն 15 օրը մեկ, շաբաթը մեկ, պատահել է՝ շաբաթը երկու անգամ: Անընդհատ այս ուղղությամբ աշխատանքներ ենք տարել, հնարավորինս ճիշտ ուղղորդելու երեխաներին, նրանց նախասիրությունները բացահայտելու: Թե չէ մեզ մոտ, գիտեք, ընդունված է՝ ինչ-որ տեղ դա նույնիսկ ազգային գիծ է դարձել. հարևանուհիս այս հոսքում է, ընկերուհիս այս հոսքում է, տեգորս տղան այս հոսքում է, տալիս աղջիկը այս հոսքում է: Այսպես մենք արդյունք չենք ունենա: Երեխան չունի լեզվական ունակություններ, մենք նրան բերում ենք լեզվամշակութային հոսք՝ չի կարելի այդպես: Կամ երեխան շատ լավ ֆիզմաթ հոսքի աշակերտ կարող է լինել՝ չէ, հորաքրոջ երեխան իրավաբան է, նա էլ պետք է գնա հումանիտար հոսք:

Հոսքերի միջև տեղափոխության կարգը գործել է միայն 1-ին կիսամյակում: Տեղափոխման կարգը նպաստել է սովորողներին գտնել իրենց առավել համապատասխան տեղը ԱԱԴ-ում, քանի որ հաճախ ընդունելության պահին սովորողները իրենց ցանկալի հոսքի ընտրությունը կատարել են ոչ թե սեփական ձգտումներով կամ հակումներով, այլ սուբյեկտիվ-իռացիոնալ գործոններով:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Որոշ ժամանակ հետո աշակերտները սկսեցին շատ թույլ, բայց շարժվել դժվարից դեպի հեշտը: Ասենք, գնացին ֆիզմաթ, հետո գնացին տնտեսագիտական, հետո եկան, կուտակվեցին հումանիտարում՝ նրանք, ովքեր չունեին համապատասխան պատրաստվածություն և չէին ցանկանում որևէ բուհ, այլ պարզապես որպեսզի ավանդույթի համաձայն ավարտեն 11-րդ դասարանը: Մրանց մի մասը՝ մոտ 4-5 աշակերտ, հենց մինչև առաջին կիսամյակի վերջը տեղափոխվեցին ուսումնարաններ, հասկացան, որ ավագ դպրոցում իրենք անելիք չունեն: Բայց մյուսները մնացին դպրոցում, որի հետևանքով մեր այսօրվա դրությամբ ունենք մնացող աշակերտներ: Աշակերտներ, որոնք ոչ մի մոտիվացիա չունեին:

Մարզային նշանակության փորձնական ավագ դպրոցներում սովորողների տեղափոխության կազմակերպում

➤ **Սովորողների տեղափոխության կազմակերպման համակարգ**

Տեղափոխման համակարգ 2008-2009 ուս.տարվա ընթացքում որևէ ԱԱԴ չի ունեցել՝ չնայած դրա կարիքն ունեցել են 4-ը՝ 2 մարզային նշանակության դպրոցներ և 2 ԱԱԴ-ներ, որոնց սովորողների մի մասը հաճախում են 5 կմ-ից ավել հեռավորությունից (Աշտարակի և Վարդենիկի): Ընդ որում մարզային նշանակության ԱԱԴ-ների կայացումը հիմնականում կապված է եղել սովորողների տեղափոխության և կեցության համակարգի ներդրման հետ: Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չեն ներդրվել դպրոցներում: Հաշվի առնելով գիշերօթիկ կեցության նկատմամբ շատ ծնողների բացասական դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ գյուղական համայնքների մշակութային առանձնահատկությունները, առաջնահերթ է հատկապես տեղափոխության համակարգի արդյունավետ լուծման հարցը:

Աշտարակի ԱԱԴ-ն փորձել է ինքնուրույն կազմակերպել հարակից համայնքներից հաճախող սովորողների տեղափոխման խնդիրը, սակայն չի կարողացել հաջողության հասնել, քանի որ ավտոձեռնարկությունների հետ պայմանագիր կնքելու իրավասություն չեն ունեցել, իսկ բանավոր պայմանավորվածությունները արդյունավետ չեն եղել: Հեռու համայնքներից սովորողների տեղափոխումը այսպիսի դպրոցների համար կարևորվում է հատկապես սովորողներին ճիշտ դասաժամին հասցնելու առումով:

Տնօրինության ներկայացուցիչ.

- Նրանք գալիս են կամ ծնողի մեքենայով, կամ էլ մեծ մասը՝ հասարակական տրանսպորտով, որի աշխատանքն էլ բոլորս գիտենք՝ ծանրաբեռնված, մանավանդ գյուղերից եկող միկրոավտոբուսները, երեխաները հաճախ չեն կարողանում նստել, դասերից ուշանում են: Ես փորձում եմ այդ հարցերն էլ վերահսկել, հետևել, պայմանավորվել էի տրանսպորտային կազմակերպության ղեկավարության հետ, որպեսզի հատուկ մեքենա տրամադրեն միայն աշակերտներին տեղափոխելու համար, բայց դա այնքան էլ արդյունավետ չգործեց տարբեր պատճառներով: Նույնիսկ մի քանի անգամ ինքս առավոտյան գնացել եմ Մուղնի, երեխաների հետ այդ միկրոավտոբուսով եկել եմ, և շատ հարցեր ինձ համար պարզել եմ: Սեպտեմբերից մտածում եմ այս խնդիրը այլ հարթության վրա դնել: Կարծում եմ, ավագ դպրոցներին պետք է հնարավորություն տրվի, որ իրենք պայմանագիր կնքեն ավտոձեռնարկությունների հետ, մեր ֆինանսավորման մեջ նախատեսվի այդպիսի հոդված, պետությունը այդ գումարը մեզ հատկացնի, մենք էլ որոշենք, թե ինչպես ենք կազմակերպում այդ գործը: Թե չէ երբ ինքդ չես պատվիրատուն, վճարողը, չես էլ կարող լիարժեք հսկել ու պահանջել: Իսկ խնդրելով, խաթրով, ինչպես հիմա ենք փորձել լուծել այդ հարցը, ըստ էության, հարցի լուծում չէ:

Առաջընթացի եզրակացություններ, արդյունքներ և առաջարկություններ

Փորձնական ավագ դպրոցների մոնիթորինգի և գնահատման հետազոտությունը թույլ է տալիս փաստել, որ ԱԱԴ ՓԾ-ով գործողությունները կատարվել են համաձայն ծրագրով նախատեսված առաջնահերթությունների:

Գործողությունների համապատասխանություն

➤ Այսպիսով, ԱԴ փորձնական ծրագրի ՄԳ հետազոտությունն **ընդհանուր գործողությունների** մակարդակում արձանագրում է.

- Իրականացվել է սկզբում 30, որոնցից էլ 10 փորձնական ԱԴ-ների ընտրություն մարզային վարչությունների և ՀՀ ԿԳՆ կրթության վարչության կողմից, որոնք առաջնորդվել են հետևյալ բնութագրիչներով.
 - դպրոցի ավագ դասարաններում բարձրորակ ուսուցման ավանդույթները
 - դպրոցի ուսուցչական պոտենցիալը
 - դպրոցի շինարարական-ինստիտուցիոնալ պայմանները
 - դպրոցի հեղինակությունը:

Նախապես որոշված 30-ից 10 փորձնական ԱԴ-ների ցանկը հաստատվել է 2008 թ. օգոստոսի 14-ին, ինչը որոշակիորեն բարդացրել է դպրոցների կազմավորման (սովորողների ընդգրկման և ուսուցիչների ընտրության և բաշխման) գործընթացը կոնկրետ ԱԴ-ների մակարդակում:

- Փորձնական ԱԴ-ների համար միայն փոփոխվել է ուսումնական պլանը՝ համապատասխան ժամաքանակների բաշխումը, ինչպես հարկն է, թողնելով դպրոցներին: 2008-2009 ուստարվա համար տարբերակված հոսքերի հենքային ուսումնական պլանների և հոսքային ուսումնական ծրագրերի անհրաժեշտություն չի եղել, քանի որ ՓԾ դպրոցները անցումային փուլ են հանդիսանում: Հոսքերի նոր հենքային ուսումնական պլանների և հոսքային ուսումնական նոր ծրագրերի մշակման և հաստատման աշխատանքներն ընթանում են եռամյա ավագ դպրոցների համար:
- Մանկավարժական կադրերի ընդունելության մրցութային կարգը չի գործել: ԱԴ-ների տնօրեններն իրենք են կատարել ուսուցիչների ընտրությունը:
- Մշակվել և կազմակերպվել է ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց, որով որակավորման բարձրացման հնարավորություն են ստացել տվյալ պահին հիմնական առարկաների գծով ԱԴ բոլոր ուսուցիչները (բացի արվեստի հոսք ունեցող մարզային ԱԴ-ից):
- Իրականացվել է փորձնական ավագ դպրոցներին տեղեկատվական խորհրդատվական աջակցություն ՀՀ ԿԳ նախարարության

աշխատակիցների մասնակցությամբ, հատուկ կազմակերպված հանդիպումների և առօրյա խորհրդատվական գործունեությամբ: Իրականացնող կողմ են հանդիսացել ԿԳ նախարարությունը և ԿԾԿ ԾԻԳ-ը:

- ԱԴ ՓԾ լուսաբանման միջոցառումներն ընթացել են «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում և ներառել են հեռուստատեսային հաղորդումներ ու թերթային հոդվածներ:
- Ծրագրի ընթացիկ վերահսկումն իրականացրել է ՀՀ ԿԳ նախարարությունը, իսկ գնահատումն իրականացրել է ԿԾԿ ԾԻԳ-ը, որի արդյունքն էլ հանդիսանում է սույն հաշվետվությունը:

➤ **ԱԴ մակարդակում գործողությունների** առումով ՄԳ հետազոտությունն արձանագրում է.

- Դպրոցական շենքերի վերանորոգումը սկսվել է բոլոր 10 դպրոցներում, սակայն ոչ բոլորում է ավարտվել: ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է գույք սարքավորումներ ռեսուրս կենտրոնների համար, որոնք տեղադրվել բոլոր ԱԴ-ներում և կիրառվում են մեծ մասի կողմից, քանի որ որոշ ռեսուրս կենտրոններ դեռևս նորոգվում են կամ հետազոտության պահին նոր են ավարտել նորոգումը: Նյութատեխնիկական պայմանների ստեղծման նպատակով ԱԴ-ներին տրամադրվել են տպագիր և էլեկտրոնային գրականություն, համակարգիչներ, հեռուստացույց:
- ԱԴ տնօրինությունն իրականացրել է ուսուցիչների ընտրության գործողություն՝ հաշվի առնելով ավագ դասարաններում նրանց փորձի առկայությունը (ներքին կադրեր) և հեղինակությունն ու կրկնուսուցման արդյունավետ փորձը (արտաքին կադրեր):
- ԱԴ-ների մասին սովորողների իրազեկման և ընդգրկման կազմակերպչական աշխատանքներն իրականացվել են մեծամասամբ ԱԴ տնօրինության ջանքերով, և այս գործընթացի արդյունավետությունը օբյեկտիվ գործոններից բացի պայմանավորված է եղել նաև տնօրենների անհատական հատկանիշներով և նրանց ներդրած ջանքերի աստիճանով:
- Փորձնական ԱԴ-ները իրենց սեփական նախաձեռնությամբ իրականացրել են մի շարք գործողություններ, փորձարկել են որոշ մեխանիզմների արդյունավետությունը, ինչպիսիք են.

- *Հոսքային նախընտրությունների նախնական ճշգրտում հարակից դպրոցների սովորողների հետ՝ անկետավորման մեթոդով:*

- *Նույնական հանձնարարությամբ գրավոր աշխատանքների կազմակերպում տարեսկզբին և տարեվերջին՝ սովորողների գիտելիքների դինամիկան արձանագրելու նպատակով:*

- *Սկզբում շաբաթական, ապա երկշաբաթյա և ամսական հաճախականությամբ ծնողական ժողովների անցկացում՝ ծնողների*

անընդհատ տեղեկացման, նրանց պահանջների և կարիքների արձանագրման և որոշումների կայացման մեջ նրանց մասնակցությունը ապահովելու նպատակով:

- **Հերթապահ ուսուցչի ինստիտուտի կիրառում**՝ առողջական պատճառներով բացակայած սովորողների հետ լրացուցիչ դասեր անցկացնելու և բացը լրացնելու նպատակով:

- **Սովորողների դասերից բացակայության պատճառի բանավոր հաշվետվության (տնօրենին) կամ գրավոր բացատրագրի ներկայացման կիրառում**՝ բացակայությունների թվի նվազեցման նպատակով:

- **Լրացուցիչ անվճար պարապմունքների, կոնսուլտացիաների, խմբային աշխատանքների իրականացում**՝ միջինից թույլ, սակայն ձգտումներ ունեցող սովորողներին ընդհանուր պատրաստվածության աստիճանին հասցնելու համար:

- **Ուսուցիչների և սովորողների տեղեկացմամբ դասընթացի նկարահանում**՝ մեթոդավորման նախագահին, ինչպես նաև տվյալ ուսուցչին հետագա դիտման և վերլուծության հնարավորություն տալու նպատակով:

- **Սովորողների անհատական փաթեթների՝ պորտֆոլիոների, ձևավորում ամենօրյա տնային աշխատանքների թերթիկների և ստուգողական աշխատանքների հավաքագրման ձևով**, որը թույլ է տալիս տնային աշխատանքի առօրյա ստուգում անցկացնել և ֆիքսել արդյունքները, նաև հետագայում ծնողներին ներկայացնել, ինչպես նաև ուղղակի հանգեցնում է սովորողի ամենօրյա պարտաճանաչությանը:

- **Հյուրերի և մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում, մարզական, մշակութային, մրցութային միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպում**՝ դպրոցի նկատմամբ սովորողների հետաքրքրվածության բարձրացման և նրանց լրացուցիչ կարիքների բավարարման նպատակով:

- **Դպրոցի ներսում ցուցասրահների և կենդանի արվեստանոցների բացում**՝ դպրոցի առօրյայում արվեստի ու ստեղծագործական մթնոլորտ ձևավորելու նպատակով:

Արձանագրված արդյունքներ, ազդեցություն

ԱԴ ՓԾ նախատեսված **արդյունքներում արձանագրված առաջընթաց.**

- Ֆունկցիոնալ ինստիտուցիոնալ պայմանների (շենք, ռեսուրս կենտրոն) և արդյունավետ ժամանակակից ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական բազայի (համակարգչային սարքավորումներ, գույք, մեթոդական և էլեկտրոնային գրականություն, լաբորատորիաներ և այլն) առումով արդյունքները մասնակի են, քանի որ փորձնական ԱԴ-ների

ինստիտուցիոնալ և նյութատեխնիկական պայմանների բարելավման աշխատանքները դեռևս ավարտված չեն: Վերանորոգման որակի, ընթացքի և ձգձգման առնչությամբ առկա է որոշակի դժգոհություն:

- Հոսքային ուսուցման համակարգը արդյունավետ ներդրվել է բոլոր ԱԴ-ներում, որտեղ սովորողներին հոսքի ընտրության ճկուն հնարավորություն է ընձեռվել բոլոր ԱԴ-ներում:
- Ավագ դպրոցների մանկավարժների վերապատրաստման գործընթացն իրականացված է և անհրաժեշտ որակավորմամբ կադրերով ԱԴ-ները մեծամասամբ ապահովված են: Չնայած հիմնականում ուսուցիչների որակավորման նկատմամբ բավարարվածությունը բարձր է՝ այդուհանդերձ, շահառուների շրջանում ԱԴ-ների տված գիտելիքների հիման վրա բուհ ընդունվելու հարցում վստահությունը լիարժեք չէ:
- Առանձին ավագ դպրոցի՝ իբրև գրավիչ, նախընտրելի և հեղինակավոր ինստիտուտի ձևավորման ուղղությամբ առաջին քայլերը կատարվել են ընդհանուր ծրագրի և ԱԴ ուսուցիչների վերապատրաստման գործընթացի լուսաբանման ուղղությամբ, սակայն արձանագրված առաջընթացի աստիճանը դեռևս բավարար չէ ԱԴ-ների՝ իբրև գրավիչ, նախընտրելի և հեղինակավոր ինստիտուտի կայացման համար:

ԱԴ ՓԾ նախատեսված արդյունքներում արձանագրված բացթողում.

- Հիմնական բացթողումը մարզային նշանակության ավագ դպրոցների համար սովորողների կեցության և տեղափոխության բացակայությունն է, ինչը փաստացի հանգեցրել է մարզային նշանակության ավագ դպրոցների կիսատ գործառնությանը:

ԱԴ ՓԾ արձանագրված ձեռքբերումներ, որակյան ազդեցություն.

- Փորձական ԱԴ-ների տնօրենների միջոցով ներդրվել և փորձարկվել են տարբեր մեխանիզմներ և միջոցառումներ:
- Դպրոցներում ավարտվել են ռեսուրս կենտրոնների նորոգման և կահավորման աշխատանքները, որոնք արդյունավետ գործառնում են դասապրոցետում և կազմակերպչական գործընթացում:
- ԱԴ ուսուցիչների վերապատրաստման միջոցառման արդյունքում բացի նախատեսված առաջնային արդյունքից, այն է՝ ԱԴ ուսուցիչների որակավորման բարձրացում, ԱԴ գործընթացում կիրառելի գիտելիքների և հմտությունների տրամադրում, ձեռք են բերվել նաև մի շարք չնախատեսված դրական արդյունքներ.
 - սովորողների ու ծնողների վստահության բարձրացումը իրենց ուսուցիչների և դպրոցների նկատմամբ,

- 10 ավագ դպրոցների ուսուցիչների միջև համագործակցության հաստատումը:
 - Բարձր մասնագիտական կարողություններով և կրկնուսուցման փորձ ունեցող ուսուցիչների որոշակի ընդգրկում ավագ դպրոցներում:
 - 10 ավագ դպրոցների ուսուցիչների ինքնագնահատականի փոփոխություն, ինքնակրթության բարձրացում և աշխատանքային գործընթացի նկատմամբ մոտեցումների վերանայում, առողջ մրցակցության աճ, ընդհանուր շահի գիտակցության և համագործակցության պատրաստակամության բարձրացում:
 - Նոր մեթոդների, տեսողական և համակարգչային միջոցների և մոտեցումների կիրառում ուսումնական գործընթացում:
 - Ուսման նկատմամբ սովորողների պատասխանատվության և հետաքրքրվածության բարձրացում, ուսուցիչների նկատմամբ պահանջների մեծացում:
 - Գրադարանների և ընթերցանության նկատմամբ սովորողների հետաքրքրության աճ:
 - Գնահատման նոր սկզբունքների, հետաքրքրության աճի և հատուկ միջոցառումների շնորհիվ բացակայությունների թվի նվազում:
 - Տարբեր պատրաստվածության մակարդակ, սակայն բարձր ձգտումներ ունեցող սովորողներին հետագա կրթությունը շարունակելու հավասար հնարավորության ընձեռում:
 - Ընդհանուր ջանասիրության և գիտելիքների աճ սովորողների շրջանում:
 - Սովորողների ինքնուրույնության, սեփական ուժերի վրա հենվելու պատրաստակամության և հետագա կյանքում ինքնադրսևորվելու պատրաստվածության աճ:
 - Որոշ հարակից դպրոցների զգոնության բարձրացում և սովորողներին գնահատական նշանակելու նկատմամբ պատասխանատվության աճ:
 - ԱԴ համակարգի՝ իբրև արդյունավետության բարձր պոտենցիալ ունեցող համակարգի մասին պատկերացումների ձևավորումը ԱԴ շահագրգիռ կողմերի և շահառուների շրջանում:

Բացահայտված կարիքներ և խոչընդոտներ

Փորձնական ԱԴ-ների կարիքները հիմնականում առնչվում են նյութատեխնիկական, գույքային, տեխնիկական միջոցների կամ ինստիտուցիոնալ հնարավորությունների պակասին (յուրաքանչյուր ԱԴ կոնկրետ գույքային կարիքներն արտահայտված են Աղյուսակ 1-ում), ինչպես նաև փորձնական տարում ի հայտ եկած խոչընդոտների վերացմանը կամ հաղթահարմանը:

ԱԴ կազմավորմանն առնչվող խոչընդոտներն էին.

- ԱԴ-ների կազմավորման կառավարչական որոշումների ձգձգումները
- ԱԴ-ների նպատակի և նշանակության մասին հանրության իրազեկության պակասը
- Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնարանների՝ իբրև այլընտրանքային համակարգի թույլ զարգացվածությունը
- ԱԴ ֆինանսական միջոցների սահմանափակությունը/սղությունը
- Կադրային քաղաքականության իրականացման և ուսուցիչների ընտրության ընդհանուր սկզբունքների, չափանիշների և ընտրության մեխանիզմների բացակայությունը
- Բարձր որակավորմամբ կադրերին գրավելու սահմանափակ հնարավորությունները՝ պահանջվող ջանքերի դիմաց ԱԴ ուսուցիչների աշխատավարձի անբավարար մակարդակը
- Հիմնական դպրոցների համակարգի չկայացած բնույթը
- Կազմավորվող ԱԴ-ների և հարակից դպրոցների համագործակցության բացը, երբեմն նույնիսկ կոնֆրոնտացիոն բնույթի հարաբերությունները
- ԱԴ-ների շուրջ տարվող ապատեղեկատվական արշավները և գործընթացի փորձարարական բնույթից բխող հանրային անվստահությունը, կասկածները
- Որոշ ԱԴ-ներում շենքային պայմանների անկատար նորոգումը
- 5 կմ ավել հեռավորությունից սովորողներ ունեցող ԱԱԴ-ների (Աշտարակ, Վարդենիկ) համար սովորողների տեղափոխության համակարգի բացակայությունը, ինչպես նաև մարզային նշանակության ԱԱԴ-ներում սովորողների տեղափոխման և կեցության համակարգերի բացակայությունը
- Այս ուս.տարում նույն դասարանում մնացող սովորողի հետագա ուսման անհամատեղելիությունը եկող տարվա եռամյա համակարգին:

ԱԴ ՓԾ արդյունավետ գործառնությանն առնչվող խոչընդոտներն էին.

- ԱԱԴ-ների նյութատեխնիկական, լաբորատոր և գույքային միջոցների, ինտերնետային կապի անբավարար մակարդակը և համապատասխան կարիքները
- Ուսուցիչների նկատմամբ պահանջների և նրանց աշխատանքի գնահատման ընդհանուր չափանիշների բացակայությունը
- Հոսքային դասագրքերի և ծրագրերի բացակայությունը
- ԱԴ սովորողների մասնագիտական կողմնորոշվածության թույլ մակարդակը
- Հարակից դպրոցներից ընդգրկված սովորողների իրական պատրաստվածության և փաստաթղթային գնահատականների միջև մեծ տարբերությունը

- ԱԴ սովորողների պատրաստվածության տարբերվող աստիճանը և կրթությունը շարունակելու ձգտումների տարբերությունը
- Մեկ դասարանում ԱԴ սովորողների թվաքանակի մեծությունը
- Սովորողների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի դժվարությունները, հատկապես տղաների միջև կոնֆլիկտային պոտենցիալով հարաբերությունները
- Ուսուցման և գնահատման խիստ համակարգի կիրառման պատճառով արտաքին ճնշումները՝ ուղղված կոնկրետ սովորողի գնահատականը բարձրացնելուն (հովանավորչություն)
- Մասնագիտական գրականության սղություն և հոսքային ուսուցիչների վերապատրաստման հնարավորության բացակայություն՝ արվեստի մարզային ԱԴ-ում
- Հոսքային միակ-պարտադրված ուղղությունը՝ մարզային ԱԴ-ների դեպքում:

Նպատակի իրականացում

Այսպիսով, ԱԴ փորձնական ծրագրի **նպատակը**, այն է՝ *առանձին ավագ դպրոցների ստեղծման միջոցով սկիզբ դնել ՀՀ տարածքում ավագ դպրոցների համակարգի ձևավորման գործընթացին և փորձարկել ավագ դպրոցների ներդրման մեխանիզմներն ու ընթացակարգերը*, վերակազմավորված 10 դպրոցներում իրականացվել է միայն կազմակերպչական-գործառնական մասով: Կազմակերպչական-գործառնական մասով իրականացվել են բոլոր մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ բացառությամբ մարզային նշանակության դպրոցներում սովորողների տեղափոխման համակարգի ներդրման և փորձարկման:

Բացահայտված խնդիրների և ռիսկերի հաղթահարման առաջարկներ².

- ԱԴ ընտրություն, կազմավորում, կառավարչական գործողություններ
 - Քանի որ դպրոցների նախնական հեղինակությունը մեծ նշանակություն է ունեցել ԱԴ ձևավորման գործընթացում, ապա հետագայում էլ ***նպատակահարմար է ԱԴ-ների ցանցը համալրել հատկապես հեղինակության ռեսուրսով օժտված դպրոցներով***: ԱԴ-ների ձևավորումը ***վարժարանային կամ խորացված ուսուցման ավանդույթներն ունեցող դպրոցների հիման վրա*** ևս դրական է անդրադարձել ինչպես այդ դպրոցների, այնպես էլ ողջ ԱԴ փորձնական ծրագրի վրա: Սա առաջին

² Բոլոր առաջարկությունները հիմնվում են մաքսիմալ արդյունավետության սկզբունքի վրա և դրանց հետագա ադապտացիան առկա ֆինանսական հնարավորությունների համատեքստում ԱԱԴ քաղաքականությունը մշակողների և իրականացողների իրավասությունն է:

հերթին կապված է այն գաղափարական մոտեցումների հետ, որոնք առաջադրվում են ԱԴ հայեցակարգում և որոնք կիսում են նշված տիպի դպրոցները:

- ***Հստակեցնել պետության կողմից ԱԴ կազմավորման քաղաքականության կամքն ու հետևողական լինելու դիրքորոշումը: ԱԴ կազմավորման հետագա քայլերում կառավարչական որոշումները կայացնել առավել օպերատիվ, քանի որ որոշումների ուշացումը հանգեցրել է անորոշության և ԱԱԴ-ների նկատմամբ թերահավատության, ինչն էլ էապես խոչընդոտել է ԱԱԴ-ների կողմից սովորողների ընդգրկման աշխատանքներին: Այսպիսով, միայն կառավարչական մակարդակում միանշանակ և վստահ քայլերը կարող են երաշխիք հանդիսանալ ԱԱԴ-ների աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար: ԱԱԴ հայեցակարգի իրականացման նկատմամբ հետևողականության կամքի ցուցադրումը կարող է բարձրացնել հանրության վստահությունը ԱԱԴ-ների իրատեսականության նկատմամբ և նպաստել ԱԱԴ-ների կասեցման մասին կասկածների չեզոքացմանը:***
- ***ԱԱԴ-ների կազմավորման նախապատրաստական գործընթացում զուգահեռ միջոցառումներ կազմակերպել ձևավորվող ԱԱԴ-ների հարակից դպրոցների հետ աշխատանքի համար՝ նրանց և ԱԱԴ-ների համագործակցության նախադրյալների ձևավորման նպատակով՝ չթողնելով հարակից դպրոցների հետ բանակցությունները և համագործակցությունը միմիայն ԱԱԴ-ների տնօրինությանը, քանի որ փորձնական ԱԱԴ-ներից շատերը ինքնուրույն չեն կարողացել հաղթահարել հարակից դպրոցներից եկող դիմադրությունը:***
- ***Քայլեր ձեռնարկել ԱԱԴ ուսուցիչների ընդունելության մրցութային կարգի ներմուծման հնարավորության ուղղությամբ, կամ առնվազն ընդհանուր մեխանիզմներ մշակել արտաքին կադրերի ընդգրկման և ԱԴ ներքին կադրերից ուսուցիչների օբյեկտիվ ընտրության հնարավորության համար:***
- ***Առանձին մոտեցումներ և միջոցառումներ մշակել հատուկ մարզային նշանակության ԱԱԴ-ների համար, քանի որ ընդհանուր մոտեցումներով կատարված գործողությունները հանգեցրել են մարզային ԱԱԴ-ների՝ որպես արհեստական և ոչ ֆունկցիոնալ կառույցների ձևավորմանը:***
- ***Արհեստագործական դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների՝ իբրև ԱԱԴ-ներին այլընտրանքային ինստիտուտների ձևավորման քայլեր ձեռնարկել՝ սովորողներին ճիշտ կողմնորոշվելու և իներցիոն ընտրությունից զերծ պահելու նպատակով:***
- ***Գյուղական համայնքների ԱԱԴ-ներում արհեստագործական հոսքերի բացման հնարավորություն ընձեռել՝ կրթությունը շարունակել չցանկացողներին իներցիոն ընտրությունից զերծ պահելու, ինչպես նաև միջնակարգ կրթությունը ամբողջականացնելու նպատակով:***

- ԱԴ ուսուցիչների վերապատրաստման համակարգի ձևավորում
 - Վերապատրաստման համակարգն առավել նպատակաուղղված դարձնելու և գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է **առաջին հերթին ապագա վերապատրաստման թիրախային խմբերի նախնական կարիքների գնահատում իրականացնել** և հետո միայն նախագծել վերապատրաստման ծրագրերը: Դա թույլ կտա շոշափել վերապատրաստման ենթակա ԱԴ ուսուցիչների և ԱԱԴ տնօրինության կարիքները, պահանջներն ու ակնկալիքները և հնարավորություն կտա նվազեցնել արդյունքի կորուստները ու բարձրացնել գործընթացի նկատմամբ ապագա բավարարվածությունը:
 - Ցանկալի է վերապատրաստման համակարգը դարձնել առավել ճկուն, և ըստ դասընթացների խորության **այլընտրանքային վերապատրաստման կուրսեր** ձևավորել, որոնցից դպրոցներին և ուսուցիչներին հնարավորություն կտրվի ընտրություն կատարել: Սա վերաբերում է առավելապես վերապատրաստման մեթոդական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հոգեբանական բաղադրիչներին: Այդպիսով առավել բարձր պատրաստվածություն ունեցող ուսուցիչները կխուսափեն ծրագրային միջոցները և սեփական ժամանակը կրկնաբանության վրա ծախսելուց, իսկ առավել նվազ հմտություններ ունեցողներին հնարավորություն կտրվի աստիճանաբար աճել: Նեղ մասնագիտական բաղադրիչի պարագայում դասընթացի խորությունը պետք է լինի առավելագույնը, որին ենթադրվում է, որ պետք է տիրապետեն ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչները: Առավելագույն և ոչ թե միջին խորությամբ մասնագիտական դասընթացները օգտակար կլինեն բոլոր ԱԱԴ ուսուցիչների համար, միաժամանակ կբարձրացնեն ուսուցիչների որակավորման սահմանաձողը:
 - Հաշվի առնելով վերապատրաստման նկատմամբ մի շարք արձանագրված թերությունները՝ դպրոցների և ուսուցիչների պատասխանատվությունը վերապատրաստումների նկատմամբ բարձրացնելու, միաժամանակ վերապատրաստման որակական աստիճանը բարձրացնելու նպատակով կարելի է կիրառել **ցածր տոկոսային համամասնությամբ համաֆինանսավորման մեխանիզմը**: Այն տարբեր ծրագրային միջամտությունների ժամանակ արդյունավետ կիրառվող մեխանիզմ է, երբ աջակցություն ստացող կողմը ևս պարտավորվում է ֆինանսական որոշակի, թեկուզ՝ չնչին մասով ներդրում ունենալ, ինչը հետագայում բարձրացնում է բոլոր կողմերի միջև հաշվետվողականությունը և փոխադարձ պատասխանատվությունը: Փոքր ֆինանսական մասնակցություն ունենալով՝ դպրոցի տնօրինությունը և ուսուցիչները առավել նպատակաուղղված կկատարեն վերապատրաստման ենթակա

ուսուցիչների գործուղումը և առավել պահանջկոտ կլինեն ոչ միայն իրենց ուսուցչից, այլև վերապատրաստումն իրականացնող կողմից: Միաժամանակ վերապատրաստող կողմը առավել պատրաստակամ կլինի համապատասխանել ԱԱԴ կարիքներին, պահանջներին ու ակնկալիքներին: Առաջարկվող մեխանիզմը կարող է նաև հիմք հանդիսանալ ապագայում վերապատրաստման համակարգի ինքնուրույն գործառնությանը:

- Որակավորման գնահատման համակարգի և հավաստագրերի մասին տարակարծություններից խուսափելու համար անհրաժեշտ է ոչ միայն *ԱԴ ուսուցիչների ընտրության օբյեկտիվ մեխանիզմ մշակել*, այլ նաև ***վերապատրաստման գնահատման և հավաստագրի նշանակության մասին մեկ մոտեցում սահմանել***` ըստ ԱԱԴ նախատեսված քաղաքականության նպատակահարմարության, և քայլեր գործադրել կողմերի միջև տվյալ մոտեցման հստակեցման ուղղությամբ:
 - Վերապատրաստման հետագա փուլերում ներառել պրակտիկ ցուցադրական դասերի անցկացումը:
 - Հետևաբար, վերապատրաստման ժամանակահատվածի ընտրությունը ցանկալի է կատարել արձակուրդային ժամանակահատվածում` միաժամանակ վայրը ընտրելիս հաշվի առնելով ուսուցիչների հնարավոր հանգստի պայմանները: Ապագայում, երբ կակայանա վերապատրաստման համակարգը, կարելի կլինի վերապատրաստման դասընթացները տարբեր ժամանակահատվածներում կազմակերպել, որոնցից ուսուցիչները ընտրության հնարավորություն կունենան:
- Առանձին ավագ դպրոցի` իբրև գրավիչ, նախընտրելի և հեղինակավոր ինստիտուտի ձևավորում
- Շարունակել քայլեր ձեռնարկել ԱԱԴ-ների` իբրև արդյունքների նպատակաուղղված, բարձրորակ կրթություն ապահովող ինստիտուտի կայացման աջակցության նպատակով:
 - Շարունակել ԱԱԴ-ների համալրումը նյութատեխնիկական և գույքային անհրաժեշտ միջոցներով:
 - ԱԱԴ-ները համալրել սպորտային և մշակութային-ժամանցային ենթակառուցվածքներով և միջոցներով (մարզադահլիճներ, սպորտային գույք, մշակութային դահլիճ)` սովորողների լրացուցիչ հետաքրքրությունները բավարարելու հանարավորություն ընձեռելով:
 - ԱԱԴ-ների նկատմամբ վստահության և դրանց հեղինակության բարձրացման նպատակով լուսաբանման և իրազեկման աշխատանքները դեռևս առաջնային նշանակություն ունեն: Այս նպատակաուղղվածությունը ապահովելու համար ցանկալի է

- *փորձնական ԱԱԴ-ների կոնկրետ արդյունքներին, նրանց առավելություններին և հաջողություններին միտված լուսարանման քայլեր իրականացնել,*
- *ինչպես նաև ԱԱԴ-ներում սովորողների միջև նախօրոք կազմակերպված մրցույթները կամ այլ միջոցառումները լուսարանել:*

➤ Ֆունկցիոնալ ինստիտուցիոնալ պայմաններով և արդյունավետ ժամանակակից ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական բազայով ապահովում.

- Շենքային պայմանների նորոգման գործընթացի արդյունավետությունը և ֆունկցիոնալությունը բարձրացնելու համար ցանկալի է *մշակել շինարարական որոշումների կայացմանը ԱԱԴ-ների մասնակցության մեխանիզմ և չափորոշիչներ՝* ուղղված դպրոցների առջնահերթությունների հաշվառմանը և նրանց հետագա բավարարվածության ապահովմանը:
- ԱԱԴ-ներին տրվող աջակցությունը առավել նպատակաուղղված դարձնելու համար ցանկալի է *առաջին հերթին նախնական կարիքների գնահատում իրականացնել և հետևողական լինել արձանագրված կարիքների բավարարմանը՝* խուսափելու համար ԱԱԴ-ներում արդեն առկա նյութատեխնիկական միջոցների գնումներից և պակասող միջոցները արդյունավետ համալրելու համար:
- ԱԱԴ-ներն ապահովել բարձրորակ, մշտական ինտերնետային կապով:

➤ ԱԱԴ ներքին կազմավորման, կայունության և զարգացման մեխանիզմների ձևավորում.

- Հոսքերի ձևավորման նպատակայնության և արդյունավետության համար ԱԴ-ներին հավանական սովորողներից *վաղօրոք դիմումներ ընդունելու և հոսքային նախընտրությունները նախօրոք որոշելու* հնարավորության կարգ սահմանել:
- Խրախուսել ԱԴ-ներին *հոսքային դասարաններում ձևավորման մաքսիմալ թիվ սահմանել 15-ը,* ուսման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև տարաստիճան պատրաստվածությամբ հոսքային դասարաններ ձևավորելու նպատակով:
- Խրախուսել ԱԴ-ներին *առաջադիմությունից հետ մնացող, սակայն ուսման բարձր ձգտումներով սովորողներին լրացուցիչ պարապմունքների միջոցով հասցնել պահանջվող մակարդակի:*
- Քանի որ որոշ ԱԴ-ներում հոսքի ընտրության հարցում սովորողներին կողմնորոշելու և պարտադրելու սահմանները շատ մոտ են գտնվել, ապա անհրաժեշտ է *համընդհանուր կերպով սահմանել ԱԴ-ների կողմից սովորողների հոսքային կողմնորոշման չափանիշները և մեխանիզմները,*

որպեսզի յուրաքանչյուր ԱԴ պարագայում սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը նվազեցվի, և սովորողները նախընտրելի հոսքերի ընտրության հավասար հնարավորություն ունենան:

- Նախօրոք հոսքային ուսուցման հնարավորության մասին իրազեկման միջոցառումներ ձեռնարկել հարակից դպրոցներից տեղափոխվող պոտենցիալ սովորողների շրջանում՝ **հոսքային ճիշտ կողմնորոշման հնարավորություն տալու համար:**
- **Մարզային նշանակության ԱԴ-ներում առաջնահերթ ապահովել սովորողների կեցության և տեղափոխման պայմանները,** քանի որ մարզային նշանակության ավագ դպրոցների կայացումը հիմնականում կապված է սովորողների տեղափոխության և կեցության խնդիրների հետ: Հաշվի առնելով գիշերօթիկ կեցության նկատմամբ շատ ծնողների բացասական դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ գյուղական համայնքների մշակութային առանձնահատկությունները, **առաջնահերթ է արդյունավետ կազմակերպել հատկապես սովորողների տեղափոխությունը:**
- Ուսուցիչների հոգեբանական պատրաստվածության կարիքները և դեռահաս տարիքում տարբեր դպրոցներից տեղափոխված սովորողների համախմբման իմաստով ԱԴ առանձնահատկությունները հաշվի առնելով՝ նպատակահարմար է առաջնահերթ ուշադրություն դարձնել **ԱԴ-ներում սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրմանը:** Սոցիալական աշխատանքը, ըստ էության, սոցիոլոգիա և հոգեբանություն գիտությունները համատեղող մասնագիտություն է, ինչը թույլ է տալիս դպրոցում աշխատող սոցիալական աշխատողին ոչ միայն հոգեբանական խորհրդատվություն տրամադրել սովորողներին, ծնողներին, ուսուցիչներին ու սնօրինությանը, այլև պրակտիկ գործունեություն վարել ուղղված նրանց միջև սոցիալական խզված կամ թույլ կապերի վերահաստատմանը կամ ամրապնդմանը:
- **ԱԴ-ների սնօրինության, մանկավարժների և սովորողների միջև համագործակցության, հաղորդակցման և ընդհանուր միջոցառումների իրականացման պրակտիկայի ձևավորել՝** ուղղված դպրոցներում առողջ մրցակցության բարձրացմանը, փորձի փոխանակմանը, ինչպես նաև հոսքային ուղղությունների և առկա կարիքների մասին տեղեկատվության փոխադարձ փոխանակմանը:

Հավելված

**Աղյուսակ 1. ԱԱԴ դպրոցների ռեսուրսների և կարիքների քանակական տվյալներ
ըստ տնօրինության ներկայացուցչի և գրադարանավարի հետ հարցազրույցների**

Փոփոխական	Աշտարակ N 5	Ախուրյան	Գավառ	Գյումրի N 3	Գյումրի N 45	Գյումրի N 12	Երևան N 112	Երևան N 195	Երևան N 198	Վարդենիկ
Ծրագրով ներդրված ռեսուրս կենտրոնի գրասեղաններ	20	14	10	12	14	10	17	14	20	12
Ծրագրով ներդրված գրադարակներ	19	14	12	12	14	10	22	11	10	12
Ծրագրով ներդրված գրականություն	423	526	540	501	489	492	503	495	510	532
Ծրագրով ներդրված համակարգչային գույք	5	5	5	5	5	5	5	5	5	5
Ծրագրով ներդրված համակարգիչներ	10	10	10	10	10	10	10	10	10	10
Միջին դպրոցից պոտենցիալ փոխադրվողներ (2007-2008 ուս. տարի)	110	23	45	50	24	39	68	59	60	44
Միջին դպրոցից փոխադրվածներ (2008-2009 ուս. տարի)	95	21	45	37	21	19	56	56	56	39
Հարակից դպրոցներից պոտենցիալ փոխադրվողներ (2007-2008 ուս. տարի)	դժ. պատ.	89	դժ. պատ.	դժ. պատ.	դժ.պատ	դժ.պատ	200	դժ. պատ.	դժ.պատ.	123
Հարակից և այլ դպրոցներից փոխադրվածներ (2008-2009 ուս. տարի)	118	35	119	94	2	6	86	77	67	110
ԱԱԴ ուսուցիչներ	43	13+2 ³	30	29	12	12	28	20	26	28
ԱԱԴ վերապատրաստված ուսուցիչներ	23	15	30	27	14	10	23	20	23	28
Բարձրագույն կրթություն չունեցող ԱԱԴ ուսուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հիմնական դպրոցից ներգրավված ԱԴ դասավանդման փորձ չունեցող ուսուցիչներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրսից ներգրավված ուսուցիչներ	1	0	5	7	0	2	6	0	4	9
Կրկնուսուցման փորձառություն ունեցող կադրեր	20	6	10	10	3	1	20	15	26	8
ԱԱԴ ուսուցիչների կարիք										

³ Վերապատրաստվել են ԱԴ բոլոր 13 ուսուցիչները և փոխտնօրենն ու տնօրենը, ովքեր ևս դասավանդում են ԱԴ-ում:

<i>(նշել ըստ առարկաների)</i>										
1.	դժ. պատ.	դժ. պատ.	դժ. պատ.	դժ. պատ.	դժ. պատ	դժ. պատ	դժ. պատ.	դժ. պատ.	դժ.պատ.	դժ. պատ.
Առկա լաբորատորիաներ <i>(նշել ըստ առարկաների)</i>										
1. ֆիզիկա	1	1	1	1	1 ⁴	1	1	1		
2. քիմիա	1	1	1	1	+	1 ⁵	1	1		
3. կենսաբանություն	1	1	1	1	+	+	1	1		
4. տեխնիկական միջոցների	1									
Լաբորատորիաների կարիք <i>(նշել ըստ առարկաների)</i>										
1. ֆիզիկա	1			1				+		
2. քիմիա	1			1				+		
3. կենսաբանություն	1			1				+		
4. հայոց լեզու և գրականություն							1			
5. պատմություն							1			
6. աշխարհագրություն							1			
7. օտար լեզու							1			
8. մաթեմատիկա							1			
9. մետաղագործության						1				
10. ռադիոհեռուստատեսային						1				
Դպրոցի կողմից ուսուցիչներին տրամադրվող առկա մեթոդական նյութեր <i>(նշել ըստ առարկաների)</i>										
1. չափորոշիչ	7 առարկա ⁶	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ	բոլոր առ	բոլոր առ.			
2. ծրագիր	7 առարկա	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ	բոլոր առ	բոլոր առ.			
3. մեթոդական ձեռնարկներ/նյութեր	7 առարկա	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ.	բոլոր առ	բոլոր առ	բոլոր առ.	բոլոր առ.		
4. թեստերի շտեմարան	7 առարկա	բոլոր առ.	բոլոր առ.				բոլոր առ.			

⁴ Ֆիզիկայի-քիմիայի-կենսաբանության համակցված մեկ կաբինետ

⁵ Քիմիա-կենսաբանության կաբինետ


⁶ Առարկաներն են՝ հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն:

5. գնահատման չափանիշներ									+		
Գույքի կարիքներ (նշել ըստ տեսակների)											
1. ֆիզիկայի լաբորատորիայի կոմպլեկտ	2	1	1	1	1						
2. քիմիայի լաբորատորիայի կոմպլեկտ	2	1	1	1	1						
3. կենսաբանության լաբորատորիայի կոմպլեկտ	2	1	1	1	1						
4. նոր սերնդի համակարգիչներ	10	6									
5. տպիչ	1										
6. տեսապրոյեկտոր	1										
7. պատճենահանող սարք	1										
8. տեխնիկական միջոցների կարիքների կոմպլեկտ	1										
9. սեղաններ	+	75	240	150	50		100	100			200
10. աթոռներ/նստարաններ ⁷	+	150	480/240	300/150	100		200	200			400
11. ուսուցչական սեղան	+		26								
12. գրատախտակներ	+		26								50
13. գրականություն				գերմաներ են, ֆրանս.							
14. տեսաֆիլմեր		+									
15. պահարան			26				30	26			100
16. հեռուստացույց							30				
17. դահլիճի նստարաններ								250-300			
18. փայտամշակման գործիքների կոմպլեկտ							1				
19. կարի մեքենա							5				
20. փորագրության դազգահ-սեղաններ							20				
21. նկարչության պարագաներ							+				
22. հումք՝ փայտ, կավ, կտավ							+				
Մարզային նշանակության ԱԱԴ-երի համար											
Տեղափոխման համակարգից օգտվողներ	0 ⁸						0*	0*			0 ⁹

⁷ Եթե սովորական աթոռներ տրվեն, ապա առաջին թիվը, իսկ եթե երկտեղանի նստարաններ՝ երկրորդ թիվը: Մյուս տնօրենները միայն մեկ թիվ են ասել, որը հավասար է աշակերտների ենթադրյալ թվին: Այսինքն՝ նստարաններ տրամադրելու դեպքում, նշված թիվը պետք է կիսվի:

**Մարզային նշանակության երկու դպրոցներում տեղափոխման համակարգից օգտվողներ չկան, որովհետև տեղափոխման համակարգ չի ներդրվել: Այդ է հիմնական պատճառներից մեկը, որ այդ դպրոցներն, ըստ էության, չեն գործել որպես ավագ դպրոց՝ հայեցակարգով նախատեսված իմաստով:*

«դժ. պատ.»՝ դժվարացել է նշել կոնկրետ տվյալ

«+»՝ պատասխանը հաստատական է, սակայն քանակական տվյալները հստակ չեն պահանջվող տվյալը չի առնչվում դպրոցին, կամ տեղեկությունը բացակայում է՝ 

⁸ Թեև Աշտարակի N 5 դպրոցը մարզային նշանակության դպրոց չէ՝ այստեղ սովորում են հարակից գյուղական համայնքներից հաճախող երեխաներ: Այնուամենայնիվ դպրոցը չունի աշակերտների տեղափոխման համակարգ և դրա կազմակերպման իրավունք:

⁹ Վարդենիկի ԱԱԴ-ն մարզային նշանակության դպրոց չէ, սակայն համայնքը մեծ է, և այստեղ սովորում են գյուղի հեռավոր հատվածներից հաճախող երեխաներ: Այնուամենայնիվ դպրոցը չունի աշակերտների տեղափոխման համակարգ, սակայն այդ ուղղությամբ քայլեր նախանշվում են:

Աղյուսակ 2. ԱԱԴ փորձնական ծրագրի մոնիթորինգի և գնահատման ամփոփ տվյալներ

ըստ տնօրինության ներկայացուցչի, գրադարանավարի, վերապատրաստված ուսուցչի հետ հարցազրույցների,
ԱԴ սովորողների և նրանց ծնողների հետ ֆոկլուս խմբերի և հետազոտական դիտարկումների

Բաղադրիչ <input type="checkbox"/> ենթաբաղադրիչ	Գնահատման նիշերն ըստ դպրոցների									
ինստիտուցիոնալ հնարավորություններ	Աշտարակ N 5	Ախուրյան	Գավառ	Գյումրի N 3	Գյումրի N 12	Գյումրի N 45	Երևան N 112	Երևան N 195	Երևան N 198	Վարդենիկ
<input type="checkbox"/> ռեսուրս կենտրոնի նորոգում, ներդրված գույքի, համակարգիչների, գրականության առկայություն և պահպանում	3	2	3	3	3	2	0	0	3	0
	համակարգիչները տեղադրված են, բայց միացված չեն	ռեսուրս կենտրոնը նորոգված է, բայց գույքը և համակարգիչները դեռ տեղադրված և միացված չեն				ռեսուրս կենտրոնը նորոգված է, բայց գույքը և համակարգիչները դեռ տեղադրված և միացված չեն	ռեսուրս կենտրոնը նորոգված չէ, գույքը պահեստավորված է	ռեսուրս կենտրոնը նորոգված չէ, գույքը պահեստավորված է		ռեսուրս կենտրոնը նորոգված չէ, գույքը պահեստավորված է
<input type="checkbox"/> ռեսուրս կենտրոնի գործառնում ուսումնական պրոցեսում	0	2	3	3	3	0	0	0	3	0
	համակարգիչները միացված չլինելու պատճառով դեռ չի գործառնվել	ռեսուրս կենտրոնը գործառնում է մասամբ՝ գրականությունը, էկրանը, որը միացված է համակարգչային կաբինետում								
<input type="checkbox"/> շենքային ներդրված պայմաններ	2	3	3	3	3	1	3	2	2	0
	նորոգումը չի ավարտվել, աշխատանքների որակը լիովին չի բա-	նորոգումը չի ավարտվել, որակը բավարարում է	նորոգումը չի ավարտվել, որակը բավարարում է		նորոգումը չի ավարտվել	կրկին նորոգման կարիք կունենան նորոգման աշխատանքների սխալ	նորոգումը չի ավարտվել	նորոգումը չի ավարտվել	նորոգումը չի ավարտվել, որակը չի բավարարում	նորոգման հիմնական աշխատանքները սկսվել են 2009 թ.

<input type="checkbox"/> ուսումնամեթոդական նյութերի առկայությունն ու կիրառման պրակտիկան	3	3	3	3	3	3	3	3	3	3
		կիրառում են, բայց ավելի շատ նյութերի կարիք ունեն	կիրառում են, բայց ավելի շատ նյութերի կարիք ունեն				կիրառում են, բայց ավելի շատ նյութերի կարիք ունեն			կիրառում են, բայց ավելի շատ նյութերի կարիք ունեն
Կադրային կարողություններ										
<input type="checkbox"/> ըստ հոսքային առարկաների կադրերի առկայություն և համապատասխանություն	2	3	2	3	3	2	3	3	3	2
<input type="checkbox"/> ուսուցիչների վերապատրաստում և դրա ֆունկցիոնալություն	2	3	3	3	2	2	3	2	1	1
					հոսքային առարկաների ուսուցիչները չեն վերապատրաստվել					
ԱԱԴ ծրագրային ազդեցություն										
<input type="checkbox"/> ԱԱԴ փորձական ծրագրի ազդեցությունը ԱԱԴ-ի, սովորողների և ուսուցիչների վրա	3	3	3	3	2	2	3	3	3	3

Նիշերի նշանակություններն են՝ 0- զրոյական, 1-ցածր, 2-միջին, 3-բարձր